**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Տիպ | Օրենսգիրք |
| Ակտի տիպ | Ինկորպորացիա (21.08.1997-22.11.1997) |
| Կարգավիճակ | Չի գործում |
| Սկզբնաղբյուր | ՀՍՍՀԳՏ 1964/17 |
| Ընդունող մարմին | Գերագույն խորհուրդ |
| Ընդունման ամսաթիվ | 04.06.1964 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 01.01.1965 |
| Ուժը կորցնելու ամսաթիվ | 01.01.1999 |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ

# Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

## ՀԱՏՎԱԾ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

## Գ Լ ՈՒ Խ 1.

## *ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

**ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության խնդիրները**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը կարգավորում է գույքային հարաբերությունները և դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները` կոմունիզմի նյութատեխնիկական բազա ստեղծելու և քաղաքացիների նյութական ու հոգևոր պահանջմունքներն ավելի ու ավելի լրիվ բավարարելու նպատակով: Օրենքով նախատեսված դեպքերում սույն օրենսգիրքը կարգավորում է նաև այլ անձնական ոչ գույքային հարաբերություններ:

Խորհրդային հասարակարգում գույքային հարաբերությունների հիմքն են տնտեսության սոցիալիստական սիստեմը և արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը, Հայաստանի Հանրապետության տնտեսական կյանքը որոշվում և ուղղություն է ստանում տնտեսական և սոցիալական զարգացման պետական պլաններով:

***(28.07.82. խմբագրությամբ)***

**ՀՈԴՎԱԾ 2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող հարաբերությունները**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրության այլ ակտերով կարգավորվում են սույն օրենսգրքի 1 հոդվածում նշված հարաբերությունները`

պետական, կոոպերատիվ և մյուս հասարակական կազմակերպությունների միջև.

քաղաքացիների և պետական, կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների միջև.

քաղաքացիների միջև:
Սույն օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների մասնակիցներ, ԽՍՀ Միության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, կարող են լինել նաև այլ կազմակերպություններ:
Սույն օրենսգրքի կանոնները չեն կիրառվում մեկ կողմին մյուս կողմի վարչական ենթակայության վրա հիմնված գույքային հարաբերությունների, ինչպես նաև հարկային ու բյուջետային հարաբերությունների նկատմամբ:
Ընտանեկան, աշխատանքային, հողային, լեռնային, ջրային, անտառային հարաբերությունները, ինչպես նաև կոլտնտեսություններում՝ նրանց կանոնադրությունից բխող հարաբերությունները, կարգավորվում են համապատասխանաբար ընտանեկան, աշխատանքային, հողային օրենսդրությամբ, ընդերքի մասին օրենսդրությամբ, ջրային, անտառային և կոլտնտեսային օրենսդրությամբ:
***(28.07.82. խմբագրությամբ)***

**ՀՈԴՎԱԾ 3. ԽՍՀ Միության և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը**

ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության հիմունքներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության սույն օրենսգիրքը և քաղաքացիական օրենսդրության մյուս ակտերը կարգավորում են ինչպես հիմունքներով նախատեսված, այնպես էլ նրանցով չնախատեսված գույքային և անձնական ոչ գույքային հարաբերությունները:
Հիմունքներին համապատասխան, ԽՍՀ Միության քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորվում են սոցիալիստական կազմակերպությունների՝ արտադրանքի մատակարարումից և կապիտալ շինարարությունից բխող հարաբերությունները, կոլտնտեսություններից, սովխոզներից և մյուս տնտեսություններից կատարվող գյուղատնտեսական արտադրանքի պետական գնումներից բխող հարաբերությունները, երկաթուղային, ծովային, գետային, օդային, խողովակաշարային տրանսպորտի, կապի կազմակերպությունների ու վարկային հիմնարկների հարաբերությունները հաճախորդների և միմյանց միջև, պետական ապահովագրությունից բխող հարաբերությունները, հայտնագործությունների, գյուտերի, ռացիոնալիզատորական առաջարկությունների, արդյունաբերական նմուշների և գիտության ու տեխնիկայի այլ նվաճումների կապակցությամբ ծագող հարաբերությունները, որոնց կարգավորումը ԽՍՀՄ սահմանադրությամբ, հիմունքներով և ԽՍՀՄ այլ օրենսդրական ակտերով վերապահված է ԽՍՀ Միության տնօրինությանը: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են լուծվել այդ հարաբերությունների այն հարցերը, որոնք նրա տնօրինությանն են վերապահված ԽՍՀ Միության օրենսդրությամբ:
Արտաքին առևտրից և արտաքին տնտեսական գործունեության մյուս տեսակներից բխող հարաբերությունները որոշվում են արտաքին առևտուրը և արտաքին տնտեսական գործունեության մյուս տեսակները կարգավորող ԽՍՀ Միության հատուկ օրենսդրությամբ և ԽՍՀ Միության ու Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ընդհանուր օրենսդրությամբ:
***(28.07.82. խմբագրությամբ)***

**ՀՈԴՎԱԾ 4. Քաղաքացիների իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը**

Քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ծագում են ԽՍՀ Միության օրենսդրությամբ և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների ու կազմակերպությունների այն գործողություններից, որոնք թեև օրենքով չեն նախատեսված, բայց ըստ քաղաքացիական օրենսդրության ընդհանուր սկզբունքների և իմաստի առաջացնում են քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ:
Դրան համապատասխան քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ծագում են՝
օրենքով նախատեսված գործարքներից, ինչպես նաև այն գործարքներից, որոնք թեև չեն նախատեսված օրենքով, բայց չեն հակասում նրան.
վարչական ակտերից, այդ թվում՝ պետական կոոպերատիվ և մյուս հասարակական կազմակերպությունների համար՝ պլանավորման ակտերից.
հայտնագործություններ, գյուտեր, ռացիոնալիզատորական առաջարկություններ անելու, գիտության, գրականության և արվեստի երկեր ստեղծելու շնորհիվ.
ուրիշ անձի վնաս պատճառելու հետևանքով, ինչպես նաև առանց բավարար հիմքերի ուրիշ անձի միջոցների հաշվին գույք ձեռք բերելու կամ գույք խնայելու հետևանքով.
քաղաքացիների և կազմակերպությունների այլ գործողությունների հետևանքով.
այնպիսի դեպքերի հետևանքով, որոնց հետ օրենքը կապում է քաղաքացիական-իրավական հետևանքների առաջացում:
***(28.07.82. խմբագրությամբ)***

**ՀՈԴՎԱԾ 5. Քաղաքացիական իրավունքների իրականացումը և պարտականությունների կատարումը**

Քաղաքացիական իրավունքները պաշտպանվում են օրենքով, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց իրականացումը հակասում է այդ իրավունքների նպատակին սոցիալիստական հասարակարգում` կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանում:
Իրավունքներն իրականացնելիս և պարտականությունները կատարելիս քաղաքացիներն ու կազմակերպությունները պետք է պահպանեն օրենքները, հարգեն սոցիալիստական համակեցության կանոնները և կոմունիզմ կառուցող հասարակության բարոյական սկզբունքները:

### ՀՈԴՎԱԾ 6. Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը

Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը սահմանված կարգով իրականացնում է դատարանը, արբիտրաժը կամ միջնորդ դատարանը`
այդ իրավունքները ճանաչելու միջոցով.
մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու և իրավունքը խախտող գործողությունները խափանելու միջոցով.
պարտականությունը նատուրայով կատարելուն հարկադրելու միջոցով.
իրավահարաբերությունը դադարեցնելու կամ փոփոխելու միջոցով.
իրավունքը խախտող անձից նրա պատճառած վնասները գանձելու, իսկ օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում` տուժանք (տուգանք, տույժ) բռնագանձելու միջոցով.
ինչպես նաև օրենքով նախատեսված այլ եղանակներով:
ԽՍՀ Միության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու կարգով քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը իրականացնում են նաև ընկերական դատարանները, արհմիութենական և այլ հասարակական կազմակերպությունները:
Օրենքով հատկապես նախատեսված դեպքերում քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականցվում է վարչական կարգով:
Մինչև կազմակերպությունների հարաբերություններից բխող հայց ներկայացնելը պարտադիր է, որ պահանջ ներկայացված լինի: Այս կանոնից բացառությունները սահմանվում են ԽՍՀ Միության օրենսդրությամբ:
***(30.10.74. խմբագրությամբ)***

### ՀՈԴՎԱԾ 7. Պատվի, արժանապատվության և գործարար համբավի պաշտպանությունը

Քաղաքացին իրավունք ունի դատարանով պահանջել իր պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունների հերքում, եթե նման տեղեկություններ տարածողը չապացուցի, որ դրանք համապատասխանում են իրականությանը: Շահագրգիռ անձանց պահանջով թույլատրվում է քաղաքացու պատվի, արժանապատվության կամ գործարար համբավի պաշտպանություն նաև նրա մահից հետո:
Եթե քաղաքացու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները տարածվել են զանգվածային տեղեկատվության միջոցներով, ապա դրանք պետք է հերքվեն զանգվածային տեղեկատվության նույն միջոցներով: Եթե նշված տեղեկություններն առկա են կազմակերպություններից ելնող փաստաթղթում, ապա նման փաստաթուղթը ենթակա է փոխարինման կամ հետկանչման: Մնացած դեպքերում հերքման կարգը սահմանում է դատարանը:
Քաղաքացին, որի մասին զանգվածային տեղեկատվության միջոցներով հրապարակվել են նրա իրավունքները կամ օրենքով պաշտպանվող շահերն արատավորող տեղեկություններ, իրավունք ունի իր պատասխանը հրապարակել զանգվածային տեղեկատվության նույն միջոցներով:
Քաղաքացին, որի մասին տարածվել են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկություններ, իրավունք ունի այդ տեղեկությունների հերքման հետ պահանջել նաև դրանց տարածմամբ պատճառված նյութական և բարոյական վնասների հատուցում:
Եթե անհնար է պարզել քաղաքացու պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող տեղեկությունները տարածող անձին, ապա այդ քաղաքացին իրավունք ունի դիմել դատարան` տարածված տեղեկություններն իրականությանը չհամապատասխանող ճանաչելու պահանջով:
Քաղաքացու գործարար համբավի պաշտպանության մասին սույն հոդվածի դրույթները համապատասխանաբար կիրառվում են իրավաբանական անձի գործարար համբավի պաշտպանության նկատմամբ:
***(7-րդ հոդվածը խմբ. 28.07.82, 23.06.97 ՀՕ-135)***

### ՀՈԴՎԱԾ $7^1$. Բարոյական վնասի հատուցումը

Եթե քաղաքացուն պատճառվել է բարոյական վնաս (ֆիզիկական կամ բարոյական տառապանք) նրա անձնական ոչ նյութական իրավունքները խախտող կամ քաղաքացուն

պատկանող այլ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող գործողություններով, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում, ապա դատարանը կարող է խախտողի վրա դնել նշված վնասի դրամական հատուցման պարտականություն: Բարոյական վնասի հատուցման չափերը որոշելիս դատարանն ուշադրություն է դարձնում խախտողի մեղքի աստիճանի և ուշադրության արժանի այլ հանգամանքների վրա: Դատարանը պետք է հաշվի առնի նաև վնաս կրած անձի անհատական առանձնահատկությունների հետ կապված ֆիզիկական և բարոյական տառապանքների աստիճանը:

Սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում բարոյական վնասը կարող է հատուցվել նաև իրավաբանական անձին:

***(7[1] հոդվածը լր. 23.06.97 ՀՕ-135)***

**ՀՈԴՎԱԾ 8. Մյուս միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության կիրառումը Հայաստանի Հանրապետությունում**

ԽՍՀ Միության և միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրության հիմունքների 18 հոդվածների համապատասխան, մյուս միութենական հանրապետությունների քաղաքացիական օրենսդրությունը Հայաստանի Հանրապետությունում կիրառվում է հետևյալ կանոնների համաձայն.

1) սեփականության իրավունքից բխող հարաբերությունների նկատմամբ կիրառվում է այն վայրի օրենքը, որտեղ գտնվում է գույքը.

2) գործարքներ կնքելիս իրավունակությունը և գործունակությունը որոշվում են գործարքի կնքման վայրի օրենքով.

3) գործարքների ձևի նկատմամբ կիրառվում է գործարքի կնքման վայրի օրենքը. գործարքի կնքման վայրի օրենքը կիրառվում է նաևգործարքից ծագող պարտավորությունների նկատմամբ, եթե օրենքով կամ կողմերի համաձայնությամբ այլ բան չի նախատեսված.

4) վնաս պատճառելուց ծագող պարտավորությունների նկատմամբ կիրառվում է այն վայրի օրենքը, որտեղ քննարկվում է վեճը, իսկ տուժողի միջնորդությամբ կիրառվում է այն վայրի օրենքը, որտեղ պատճառվել է վնասը.

5) ժառանգման հարաբերությունների նկատմամբ կիրառվում է ժառանգության բացման վայրի օրենքը.

6) հայցային վաղեմության հարցերը լուծվում են այն միութենական հանրապետության օրենքով, որի օրենսդրությամբ կարգավորվում է տվյալ հարաբերությունը:

## Գ Լ ՈՒ Խ 2.

## *ԱՆՁԻՆՔ*

### 1. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

**ՀՈԴՎԱԾ 9. Քաղաքացիների իրավունակությունը**

Քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ունենալու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն) ճանաչվում է Հայաստանի Հանրապետության և մյուս միութենական հանրապետությունների բոլոր քաղաքացիների համար հավասարապես:

Քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ:

**ՀՈԴՎԱԾ 10. Քաղաքացիների իրավունակության բովանդակությունը**

Քաղաքացիները օրենքին համապատասխան կարող են ունենալ գույքի անձնական սեփականություն, բնակարաններից և այլ գույքից օգտվելու իրավունք, ժառանգել և կտակել գույք, ընտրել զբաղմունքի տեսակ ու բնակության վայր, ունենալ գիտության, գրականության և արվեստի երկի, հայտնագործության, գյուտի, ռացիոնալիզատորական առաջարկության, արդյունաբերական նմուշի հեղինակի իրավունքներ, ինչպես նաև ունենալ գույքային և անձնական ոչ գույքային այլ իրավունքներ:

***(28.07.82. խմբագրությամբ)***

**ՀՈԴՎԱԾ 11. Քաղաքացիների գործունակությունը**

Իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է նրա չափահաս, այսինքն` տասնութ տարեկան դառնալուն պես:

Այն դեպքում, երբ օրենքով թույլ է տրվում ամուսնանալ մինչև տասնութ տարեկան դառնալը, տասնութ տարեկան չդարձած քաղաքացին լրիվ ծավալով գործունակություն է ձեռք բերում ամուսնանալու պահից:

**ՀՈԴՎԱԾ 12. Քաղաքացիների իրավունակությունն ու գործունակությունը սահմանափակելու անթույլատրելիությունը**

Ոչ ոքի իրավունակությունը կամ գործունակությունը չի կարող սահմանափակվել այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով:
Անվավեր են իրավունակության կամ գործունակության սահմանափակմանն ուղղված գործարքները:

**ՀՈԴՎԱԾ 13. Տասնհինգից մինչև տասնութ տարեկան անչափահասների գործունակությունը**

Տասնհինգից մինչև տասնութ տարեկան անչափահասները գործարքներ են կնքում ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուների համաձայնությամբ:
Սակայն նրանք իրավունք ունեն ինքնուրույն կերպով կնքելու կենցաղային մանր գործարքներ, տնօրինելու իրենց վաստակը կամ թոշակը, իրականացնելու հեղինակային և գյուտարարական իրավունքներ իրենց հայտնագործությունների նկատմամբ:
Բավարար հիմքերի առկայության դեպքում խնամակալության ու հոգաբարձության մարմինը կարող է իր նախաձեռնությամբ կամ հասարակական կազմակերպությունների կամ այլ շահագրգռված անձանց միջնորդությամբ սահմանափակել տասնհինգից մինչև տասնութ տարեկան անչափահասի կողմից իր վաստակը կամ թոշակը ինքնուրույն կերպով տնօրինելու իրավունքը, կամ զրկելու նրան այդ իրավունքից:
Տասնհինգից մինչև տասնութ տարեկան անչափահասների՝ վարկային հիմնարկներն ավանդներ մուծելու և դրանք տնօրինելու իրավունքը որոշվում է ԽՍՀ Միության օրենսդրությամբ:

**ՀՈԴՎԱԾ 14. Մինչև տասնհինգ տարեկան անչափահասների գործունակությունը**

Տասնհինգ տարեկան չդարձած անչափահասների փոխարեն նրանց անունից գործարքներ են կնքում ծնողները, որդեգրողները կամ խնամակալները:
Մինչև տասնհիգ տարեկան անչափահասներն իրավունք ունեն ինքնուրույն կերպով կնքելու կենցաղային մանր գործարքներ:
Մինչև տասնհիգ տարեկան անչափահասների՝ վարկային հիմնարկներն ավանդներ մուծելու և դրանք տնօրինելու իրավունքը որոշվում է ԽՍՀ Միության օրենսդրությամբ:

**ՀՈԴՎԱԾ 15. Ոգելից խմիչքներ կամ թմրամիջոցներ չարաշահող քաղաքացիների գործունակության սահմանափակումը**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանը կարող է սահմանափակել քաղաքացու գործունակությունը, եթե նա ոգելից խմիչքներ կամ թմրամիջոցներ չարաշահելու հետևանքով նյութական ծանր կացության մեջ է դնում իր ընտանիքը: Նրա նկատմամբ սահմանվում է հոգաբարձություն:
Բացառությամբ կենցաղային մանր գործարքների, նա կարող է միայն հոգաբարձուի համաձայնությամբ գույք տնօրինելու գործարքներ կնքել, ստանալ և տնօրինել իր աշխատավարձը, կենսաթոշակը կամ եկամուտների այլ տեսակները:
Երբ քաղաքացին դադարում է ոգելից խմիչքներ կամ թմրամիջոցներ չարաշահել, դատարանը վերացնում է նրա գործունակության սահմանափակումը, որից հետո վերացվում է քաղաքացու նկատմամբ սահմանված հոգաբարձությունը:
***(03.12.66. խմբագրությամբ)***

**ՀՈԴՎԱԾ 16. Քաղաքացուն անգործունակ ճանաչելը**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանը կարող է անգործունակ ճանաչել այն քաղաքացուն, որը հոգեկան հիվանդության կամ տկարամտության հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել այդ գործողությունները: Նրա նկատմամբ սահմանվում է խնամակալություն:
Անգործունակ ճանաչված հոգեկան հիվանդի կամ տկարամտի անունից գործարքներ է կնքում նրա խնամակալը:
Անգործունակ ճանաչված քաղաքացու ապաքինման կամ նրա առողջության զգալի բարելավման դեպքում դատարանը նրան գործունակ է ճանաչում, որից հետո վերացվում է քաղաքացու նկատմամբ սահմանված խնամակալությունը:

**ՀՈԴՎԱԾ 17. Բնակության վայրը**

Բնակության վայր է ճանաչվում այն վայրը, որտեղ քաղաքացին ապրում է մշտապես կամ առավելապես:
Տասնհինգ տարեկան չդարձած անչափահասների կամ խնամակալության տակ գտնվող քաղաքացիների բնակության վայր է ճանաչվում նրանց ծնողների, որդեգրողների կամ

խնամակալների բնակության վայրը:

**ՀՈԴՎԱԾ 18. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելը**

Քաղաքացին դատական կարգով կարող է անհայտ բացակայող ճանաչվել, եթե նրա մշտական բնակության վայրում մեկ տարվա ընթացքում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին:

Եթե հնարավոր չէ որոշել բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունների ստացման օրը, ապա անհայտ բացակայության սկիզբը համարվում է այն ամսին հաջորդող ամսի մեկը, երբ ստացված են եղել բացակայողի վերաբերյալ վերջին տեղեկությունները, իսկ եթե հնարավոր չէ որոշել այդ ամիսը, ապա` հաջորդ տարվա հունվարի մեկը:

**ՀՈԴՎԱԾ 19. Անհայտ բացակայողի գույքի պահպանումը**

Անհայտ բացակայող ճանաչված քաղաքացու գույքի նկատմամբ դատարանի որոշման հիման վրա խնամակալություն է սահմանվում: Այդ գույքից ապրուստի միջոց է տրվում այն քաղաքացիներին, որոնց անհայտ բացակայողը օրենքով պարտավոր էր պահել, և մարվում է անհայտ բացակայողի մյուս պարտավորություններով ունեցած պարտքը:

Բացակայող քաղաքացու գույքը պահպանելու, ինչպես նաև նրա գույքը կառավարելու համար խնամակալության և հոգաբարձության մարմինը, շահագրգռված անձանց դիմումի հիման վրա, խնամակալ կարող է նշանակել քաղաքացու գտնվելու վայրի վերաբերյալ վերջին տեղեկություններն ստացվելու օրվանից նաև մեկ տարին լրանալուց առաջ:

**ՀՈԴՎԱԾ 20. Անհայտ բացակայող ճանաչումը վերացնելը**

Եթե անհայտ բացակայող ճանաչված քաղաքացին հայտնվում է կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերվում է, ապա դատարանը վերացնում է համապատասխան որոշումը: Դատարանի որոշման հիման վրա վերացվում է անհայտ բացակայող ճանաչված անձի գույքի նկատմամբ սահմանված խնամակալությունը:

**ՀՈԴՎԱԾ 21. Քաղաքացուն մեռած հայտարարելը**

Քաղաքացին դատական կարգով կարող է մեռած հայտարարվել, եթե նրա մշտական բնակության վայրում երեք տարվա ընթացքում տեղեկություններ չկան նրա գտնվելու վայրի մասին, իսկ եթե նա անհայտ կորել է այնպիսի պարագաներում, որոնք մահվան վտանգ են սպառնացել կամ հիմք են տալիս ենթադրելու նրա մահը որոշակի դժբախտ դեպքերի հետևանքով` վեց ամսվա ընթացքում:

Ռազմական գործողությունների կապակցությամբ անհայտ կորած զինծառայողը կամ այլ քաղաքացի դատական կարգով կարող է մեռած հայտարարվել ոչ շուտ, քան ռազմական գործողություններն ավարտվելու օրվանից երկու տարի հետո:

Մեռած հայտարարված քաղաքացու մահվան օրն է համարվում նրան մեռած հայտարարելու վերաբերյալ դատարանի որոշումը օրինական ուժի մեջ մտնելու օրը: Այն քաղաքացուն մեռած հայտարարելու դեպքում, որն անհայտ կորել է մահվան վտանգ սպառնացող կամ այնպիսի պարագաներում, որոնք հիմք են տալիս ենթադրելու նրա մահը որոշակի դժբախտ դեպքից, դատարանը կարող է այդ քաղաքացու մահվան օրը ճանաչել նրա ենթադրյալ մահվան օրը:

**ՀՈԴՎԱԾ 22. Մեռած հայտարարված քաղաքացու հայտնվելու հետևանքները**

Եթե մեռած հայտարարված քաղաքացին հայտնվում է կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերվում է, ապա դատարանը վերացնում է համապատասխան որոշումը:

Անկախ իր հայտնվելու պահից, քաղաքացին իրավունք ունի ամեն մի անձից ետ պահանջելու պահպանված գույքը, որն անվճար անցել է այդ անձին քաղաքացու մեռած հայտարարվելուց հետո:

Մեռած հայտարարված քաղաքացու գույքը հատուցանելի գործարքներով ձեռք բերող անձինք պարտավոր են նրան վերադարձնել այդ գույքը, եթե ապացուցված է, որ գույքը ձեռք բերելիս նրանք գիտեին, որ մեռած հայտարարված քաղաքացին կենդանի է:

Եթե մեռած հայտարարվածի գույքը ժառանգման իրավունքով անցել է պետությանը և իրացվել է, ապա քաղաքացուն մեռած հայտարարելու վերաբերյալ որոշումը վերացվելուց հետո նրան է վերադարձվում գույքի իրացումից ստացված գումարը:

## 2. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ

**ՀՈԴՎԱԾ 23. Իրավաբանական անձ հասկացությունը**

Իրավաբանական անձինք են ճանաչվում այն կազմակերպությունները, որոնք ունեն առանձնացված գույք, իրենց անունից կարող են ձեռք բերել գույքային և անձնական ոչ

գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, հայցվոր և պատասխանող լինել դատարանում, արբիտրաժում կամ միջնորդ դատարանում:

**ՀՈԴՎԱԾ 24. Իրավաբանական անձանց տեսակները**

Իրավաբանական անձ են հանդիսանում՝

այն պետական ձեռնարկությունները և մյուս պետական կազմակերպությունները, որոնք աշխատում են տնտհաշվարկով, ունեն իրենց ամրացված հիմնական ու շրջանառու միջոցներ և ինքնուրույն հաշվեկշիռ.

այն պետական հիմնարկներն ու մյուս պետական կազմակերպությունները, որոնք պահվում են պետական բյուջեի հաշվին և ունեն ինքնուրույն նախահաշիվ և որոնց ղեկավարներն ունեն վարկեր տնօրինելու իրավունք ( օրենքով սահմանված բացառություններով).

այն պետական կազմակերպությունները, որոնք ֆինանսավորվում են այլ աղբյուրների հաշվին և ունեն ինքնուրույն նախահաշիվ ու ինքնուրույն հաշվեկշիռ.

Կոլտնտեսությունները, միջկոլտնտեսային և այլ կոոպերատիվ կազմակերպությունները և նրանց միավորումները, մյուս հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև ԽՍՀ Միության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ այդ կազմակերպությունների ու նրանց միավորումների այն ձեռնարկություններն ու հիմնարկները, որոնք ունեն առանձնացված գույք և ինքնուրույն հաշվեկշիռ.

պետական-կոլտնտեսային և մյուս պետական-կոոպերատիվ կազմակերպությունները.

մյուս կազմակերպությունները՝ ԽՍՀ Միության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

Այս հոդվածում նշված և պետական բյուջեի հաշվին պահվող հիմնարկներն ու մյուս պետական կազմակերպությունները ԽՍՀ Միության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում գործում են համապատասխանորեն՝ ԽՍՀ Միության կամ Հայաստանի Հանրապետության անունից:

***(28.07.82. խմբագրությամբ)***

**ՀՈԴՎԱԾ 25. Իրավաբանական անձի կանոնադրությունը**

Իրավաբանական անձը գործում է կանոնադրության հիման վրա: Պետական բյուջեի հաշվին պահվող հիմնարկները և մյուս պետական կազմակերպությունները, իսկ ԽՍՀ Միության օրենսդրությամբ ու Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև այլ կազմակերպություններ, կարող են գործել տվյալ տեսակի կազմակերպությունների ընդհանուր կանոնադրության հիման վրա:

**ՀՈԴՎԱԾ 26. Իրավաբանական անձանց կազմվելը**

Իրավաբանական անձինք կազմվում են ԽՍՀ Միության օրենսդրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Այն հասարակական կազմակերպությունները, որոնց առաջացման կարգը չի սահմանված օրենսդրությամբ, կազմվում են նրանց կանոնադրություններով նախատեսված կարգով:

**ՀՈԴՎԱԾ 27. Իրավաբանական անձի իրավունակությունը**

Իրավաբանական անձն օժտված է քաղաքացիական իրավունակությամբ՝ իր գործունեության համար սահմանված նպատակներին համապատասխան:

Իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է նրա կանոնադրության հաստատման պահից, իսկ այն դեպքում, երբ իրավաբանական անձը գործելու է տվյալ տեսակի կազմակերպությունների ընդհանուր կանոնադրության հիման վրա՝ նրա կազմվելու վերաբերյալ իրավասու մարմնի որոշման հրատարակման պահից: Եթե կանոնադրությունը ենթակա է գրանցման, ապա իրավաբանական անձի իրավունակությունը ծագում է գրանցման պահին:

**ՀՈԴՎԱԾ 28. Իրավաբանական անձի մարմինները**

Իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքներ է ձեռք բերում և քաղաքացիական պարտականություններ է ստանձնում իր մարմինների միջոցով, որոնք գործում են օրենքով կամ կանոնադրությամբ իրենց տրված իրավունքների սահմաններում:

Իրավաբանական անձի մարմիններ նշանակելու կամ ընտրելու կարգը որոշվում է կանոնադրությամբ:

**ՀՈԴՎԱԾ 29. Իրավաբանական անձի անունը**

Իրավաբանական անձն ունի իր անունը: Տնտեսական կազմակերպությունների՝ ֆիրմայական անունից, արտադրական դրոշմանիշներից և ապրանքանիշներից օգտվելու հետ

կապված իրավունքներն ու պարտականությունները որոշվում են ԽՍՀ Միության օրենսդրությամբ:

**ՀՈԴՎԱԾ 30. Իրավաբանական անձի գտնվելու վայրը**

Իրավաբանական անձի գտնվելու վայր է ճանաչվում նրա մշտապես գործող մարմնի գտնվելու վայրը:

**ՀՈԴՎԱԾ 31. Իրավաբանական անձի մասնաճյուղերը եվ ներկայացուցչությունները**

Իրավաբանական անձը կարող է մասնաճյուղեր ու ներկայացուցչություններ բացել ԽՍՀ Միության օրենսդրությամբ և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնաճյուղի կամ ներկայացուցչության ղեկավարը գործում է համապատասխան իրավաբանական անձից ստացած լիազորագրի հիման վրա:

**ՀՈԴՎԱԾ 32. Իրավաբանական անձի պատասխանատվությունը**

Իրավաբանական անձը իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող (իրեն ամրացված) այն գույքով, որի վրա ըստ ԽՍՀ Միության օրենսդրության և սույն օրենսգրքի (98, 101 և104 հոդվածներ) կարող է բռնագանձում տարածվել:

***(28.07.82. խմբագրությամբ)***

**ՀՈԴՎԱԾ 33. Պետության և պետական կազմակերպությունների պատասխանատվության սահմանազատումը**

Պետությունը պատասխանատու չէ իրավաբանական անձ հանդիսացող պետական կազմակերպությունների պարտավորություններով, իսկ այդ կազմակերպությունները պատասխանատու չեն պետության պարտավորություններով:

Պետական բյուջեի հաշվին պահվող հիմնարկների և պետական այլ կազմակերպությունների պարտքը մարելու համար միջոցներ հատկացնելու պայմաններն ու կարգը, եթե այդ պարտքը չի կարող մարվել նրանց նախահաշվի միջոցներով, սահմանվում են ԽՍՀ Միության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**ՀՈԴՎԱԾ 34. Պետական, կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպության և նրա կազմի մեջ մտնող ձեռնարկության պատասխանատվության սահմանազատումը**

Պետական կազմակերպությունը պատասխանատու չէ իրեն ենթակա իրավաբանական անձ հանդիսացող ձեռնարկության պարտավորություններով, իսկ այդ ձեռնարկությունը պատասխանատու չէ այն կազմակերպության պարտավորություններով, որին ինքը ենթակա է:

Կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպությունը պատասխանատու չէ իր կազմի մեջ մտնող իրավաբանական անձ հանդիսացող ձեռնարկության պարտավորություններով, իսկ այդ ձեռնարկությունը պատասխանատու չէ հիշյալ կազմակերպության պարտավորություններով:

Այս կանոնից բացառություններ թույլ են տրվում ԽՍՀ Միության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

**ՀՈԴՎԱԾ 35. Կոոպերատիվ միավորման և նրա կազմի մեջ մտնող կոոպերատիվ կազմակերպությունների պատասխանատվության սահմանազատումը**

Կոոպերատիվ միավորումը պատասխանատու չէ իր կազմի մեջ մտնող կոոպերատիվ կազմակերպությունների պարտավորություններով, ինչպես նաև վերջիններս պատասխանատու չեն այն կոոպերատիվ միավորման պարտավորություններով, որի կազմի մեջ են մտնում իրենք, եթե այդպիսի պատասխանատվությունը չի բխում օրենքից կամ կանոնադրությունից:

**ՀՈԴՎԱԾ 36. Կոոպերատիվ, պետական-կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպության և նրա անդամների (մասնակիցների) պատասխանատվության սահմանազատումը**

Կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպության անդամները պատասխանատու չեն նրա պարտավորություններով, եթե տարբեր տեսակի կոոպերատիվ կազմակերպությունների համար այլ բան չի նախատեսված օրենքով կամ նրանց կանոնադրություններով:

Կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորություններով: Չի թույլատրվում բռնագանձման առարկա դարձնել կազմակերպության անդամի փայավճարները, բացի այն դեպքերից, երբ պարտապանը դուրս

է գալիս կազմակերպության անդամների կազմից: Եթե դատարանով հաստատված է, որ բնակարանաշինարարական կամ ամառանոցաշինարարական կոոպերատիվ անդամի փայավճարը մուծել է անաշխատ եկամուտների հաշվին, կամ պետական, կոոպերատիվ, կամ հասարակական կազմակերպությունների միջոցների ապօրինի օգտագործման հաշվին, ապա փայավճարի գումարն անցնում է հօգուտ պետության կամ վերադարձվում է համապատասխան կազմակերպությանը:

Միջկոլտնտեսային կազմակերպության մասնակից, ինչպես նաև պետական-կոլտնտեսային կամ այլ պետական-կոոպերատիվ կազմակերպության մասնակից կոլտնտեսությունները պատասխանատու չեն այդ կազմակերպության պարտավորություններով: Կազմակերպության վնասները կարող են բաշխվել նրա մասնակիցների միջև` նրա կանոնադրությանը համապատասխան:

Միջկոլտնտեսային, պետական-կոլտնտեսային և այլ պետական-կոոպերատիվ կազմակերպությունները պատասխանատու չեն իրենց մասնակիցների պարտավորություններով:

**ՀՈԴՎԱԾ 37. Իրավաբանական անձի դադարումը**

Իրավաբանական անձը դադարում է լուծարքի կամ վերակառուցման (միաձուլման, բաժանման կամ միացման) միջոցով:

Իրավաբանական անձանց միաձուլման և բաժանման դեպքում գույքը (իրավունքներն ու պարտականությունները) անցնում է նոր առաջացած իրավաբանական անձանց: Իրավաբանական անձը մի ուրիշ իրավաբանական անձի միացվելու դեպքում նրա գույքը ( իրավունքներն ու պարտականությունները) անցնում է վերջինիս: Գույքն անցնում է հանձնման հաշվեկշիռը ստորագրվելու օրը, եթե այլ բան չի նախատեսված օրենքով կամ վերակառուցման վերաբերյալ որոշմամբ:

Իրավաբանական անձանց լուծարքի և վերակառուցման կարգը որոշվում է ԽՍՀ Միության օրենսդրությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**ՀՈԴՎԱԾ 38. Իրավաբանական անձ հանդիսացող պետական կազմակերպությունների դադարումը**

Իրավաբանական անձ հանդիսացող պետական կազմակերպությունները դադարեցվում են այն մարմնի կողմից, որի որոշմամբ դրանք կազմվում են:

**ՀՈԴՎԱԾ 39. Կոոպերատիվ, պետական-կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունների դադարումը**

Կոոպերատիվ, ինչպես նաև պետական-կոլտնտեսային և այլ պետական-կոոպերատիվ կազմակերպությունները դադարում են օրենքում և կանոնադրության մեջ նշված հիմքերով:

Հասարակական կազմակերպությունները դադարում են նրանց կանոնադրություններում նշված հիմքերով:

Կոոպերատիվ, պետական-կոլտնտեսային, այլ պետական-կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունների վերակառուցումը ( միաձուլումը, բաժանումը, միացումը ) թույլ է տրվում նրանց անդամների ընդհանուր ժողովների կամ լիազորների ժողովների որոշմամբ միայն:

**ՀՈԴՎԱԾ 40. Կոոպերատիվ, պետական-կոոպերատիվ և հասարարական կազմակերպությունների լուծարքից հետո մնացած գույքի օգտագործումը**

Լուծարված կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպության բոլոր պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքը, եթե այլ բան չի սահմանված օրենքով օգտագործվում են փայավճարները կամ վերադարձման ենթակա այլ մուծումները վերադարձնելու համար: Մնացած մասը հանձնվում է վերադաս կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպությանը, իսկ դրա բացակայության դեպքում` համապատասխան պետական մարմնին` ընդհանուր կոոպերատիվ կամ հասարակական կարիքների համար:

Լուծարված միջկոլտնտեսային, պետական-կոլտնտեսային կամ այլ պետական-կոոպերատիվ կազմակերպության բոլոր պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքը բաշխվում է նրա մասնակիցների միջև` նրանց մուծումների համեմատ:

## Գ Լ ՈՒ Խ 3.

## *ԳՈՐԾԱՐՔՆԵՐ*

**ՀՈԴՎԱԾ 41. Գործարքներ հասկացությունը և դրանց տեսակները**

Գործարքները քաղաքացիների և կազմակերպությունների այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ կամ պարտականություններ սահմանելուն,

փոփոխելուն կամ դադարեցնելուն:
Գործարքները կարող են լինել միակողմ և երկկողմ կամ բազմակողմ (պայմանագրեր):

**ՀՈԴՎԱԾ 42. Գործարքների ձևերը**

Գործարքները կնքվում են բանավոր կամ գրավոր (հասարակ կամ նոտարական):
Այն գործարքը, որի համար օրենքով որոշակի ձև չի սահմանված, կնքված է համարվում նաև այն դեպքում, երբ անձի վարվելակերպից երևում է գործարք կնքելու նրա կամքը:
Լռությունը գործարք կնքելու կամքի արտահայտություն է համարվում ԽՍՀ Միության օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

**ՀՈԴՎԱԾ 43. Բանավոր գործարքներ**

Կնքման պահին կատարվող գործարքները կարող են կնքվել բանավոր, եթե այլ բան չի սահմանված ԽՍՀ Միության օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

**ՀՈԴՎԱԾ 44. Գրավոր գործարքներ**

Գրավոր պետք է կնքվեն՝
1) պետական, կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների գործարքները միմյանց հետ և քաղաքացիների հետ, բացառությամբ սույն օրենսգրքի 43 հոդվածում նշված գործարքների և գործարքների այն առանձին տեսակների, որոնց համար այլ բան չի նախատեսված ԽՍՀ Միության օրենսդրությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ.
2) քաղաքացիների գործարքները միմյանց հետ, երբ դրանց գումարը հարյուր ռուբլուց ավելի է, բացառությամբ սույն օրենսգրքի 43 հոդվածում նախատեսված գործարքների և ԽՍՀ Միության օրենսդրությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ մատնանշված այլ գործարքների.
3) քաղաքացիների մյուս գործարքները միմյանց հետ, որոնց նկատմամբ օրենքը պահանջում է պահպանել գրավոր ձևը:
Գրավոր գործարքները պետք է ստորագրված լինեն դրանք կնքող անձանց կողմից:
Երբ կազմակերպությունների միջև կամ կազմակերպության ու քաղաքացու միջև գործարքը կնքվում է գրավոր, ապա այն կազմակերպությունը, որը վճարել է ապրանքների կամ ծառայությունների համար, պետք է մյուս կողմից վերցնի փողի ստացումը և ստացման հիմքը հաստատող փաստաթուղթ:
Եթե քաղաքացին ֆիզիկական արատի, հիվանդության հետևանքով կամ որևէ այլ պատճառով չի կարող անձամբ ստորագրել, ապա նրա հանձնարարությամբ գործարքը կարող է ստորագրել մի այլ քաղաքացի: Վերջինիս ստորագրությունը պետք է վավերացվի այն կազմակերպության կողմից, որտեղ աշխատում կամ սովորում է գործարք կնքող քաղաքացին, կամ այն տնային կառավարչության կողմից, որտեղ նա ապրում է, կամ պատգամավորների այն գյուղական (ավանային) խորհրդի գործկոմի կողմից, որի տերիտորիայում նա ապրում է, կամ այն ստացիոնար բուժհիմնարկի ադմինիստրացիայի կողմից, որտեղ նա գտնվում է բուժման մեջ, կամ նոտարական մարմնի կողմից՝ այն պատճառների հիշատակմամբ, որոնց հետևանքով գործարք կնքողը չի կարողացել անձամբ ստորագրել այն:

**ՀՈԴՎԱԾ 45. Գործարքի ձևը չպահպանելու հետևանքները**

Օրենքով պահանջվող ձևը չպահիապանելը գործարքն անվավեր է դարձնում միայն այն դեպքում, երբ այդպիսի հետևանքն անմիջականորեն նշված է օրենքում:
Արտաքին առևտրական գործարքների ձևը և դրանց ստորագրման կարգը (սույն օրենսգրքի 568 հոդված) չպահպանելը անվավեր է դարձնում գործարքը:

**ՀՈԴՎԱԾ 46. Հասարակ գրավոր ձևը չպահպանելու հետևանքները**

Օրենքով պահանջվող հասարակ գրավոր ձևը (սույն օրենսգրքի 44 հոդված) չպահպանելը վեճի դեպքում կողմերին զրկում է գործարքի գոյությունը հաստատելու համար վկաների ցուցմունքների վրա հենվելու իրավունքից, իսկ օրենքում անմիջականորեն նշված դեպքերում անվավեր է դարձնում գործարքը՝ սույն օրենսգրքի 48 հոդվածի երկրորդ մասով նախատեսված հետևանքներով հանդերձ:

**ՀՈԴՎԱԾ 47. Նոտարական ձևի պարտադիր լինելը և այն չպահպանելու հետևանքները**

Գործարքների նոտարական վավերացումը պարտադիր է միայն օրենքով նախատեսված դեպքերում: Նոտարական ձևը այդ դեպքում չպահպանելը անվավեր է դարձնում գործարքը՝ սույն օրենսգրքի 48 հոդվածի երկրորդ մասով նախատեսված հետևանքներով հանդերձ:
Եթե կողմերից մեկը լրիվ կամ մասամբ կատարել է նոտարական վավերացում պահանջող գործարքը, իսկ մյուս կողմը խուսափում է գործարքի նոտարական ձևակերպումից,

դատարանն իրավունք ունի գործարքը կատարած կողմի պահանջով վավերական ճանաչել գործարքը, եթե այդ գործարքը ոչ մի հակաօրինական բան չի պարունակում: Այդ դեպքում գործարքի հետագա նոտարական ձևակերպում չի պահանջվում:

**ՀՈԴՎԱԾ 48. Օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարքի անվավերությունը**

Օրենքի պահանջներին չհամապատասխանող գործարքը անվավեր է: Անվավեր գործարքի կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ երբ հնարավոր չէ ստացածը նատուրայով վերադարձնել՝ նրա արժեքը հատուցել փողով, եթե օրենքով չեն նախատեսված գործարքի անվավերության այլ հետևանքներ:

**ՀՈԴՎԱԾ 49. Պետության և հասարակության շահերին հակասող նպատակներով կնքված գործարքի անվավերությունը**

Եթե գործարքը կնքվել է սոցիալիստական պետության ու հասարակության շահերին ակնհայտ հակասող նպատակներով, ապա երբ առկա է երկու կողմերի դիտավորությունը և երբ այդ գործարքը կատարել են երկու կողմերն էլ, հօգուտ պետության բռնագանձվում է գործարքով նրանց ամբողջ ստացածը, իսկ եթե գործարքը կատարել է կողմերից մեկը, ապա մյուս կողմից հօգուտ պետության բռնագանձվում է նրա ամբողջ ստացածը և այն ամբողջ հասանելիքը, որ ի հատուցումն կատարվածի նա պետք է տար մյուս կողմին, իսկ երբ առկա է միայն մեկ կողմի դիտավորությունը, ապա գործարքով նրա ամբողջ ստացածը պետք է վերադարձվի մյուս կողմին, իսկ վերջինիս ստացածը կամ ի հատուցումն ստացածի նրա հասանելիքը բռնագանձվում է հօգուտ պետության:

**ՀՈԴՎԱԾ 50. Իրավաբանական անձի նպատակներին հակասող գործարքի անվավերությունը**

Անվավեր է իրավաբանական անձի կնքած այն գործարքը, որը հակասում է նրա կանոնադրության մեջ կամ տվյալ տեսակի կազմակերպությունների ընդհանուր կանոնադրության մեջ նշված նպատակներին:

Այդպիսի գործարքների նկատմամբ համապատասխանորեն կիրառվում են սույն օրենսգրքի 48 կամ 49 հոդվածով նախատեսված հետևանքները:

**ՀՈԴՎԱԾ 51. Տասնհինգ տարեկան չդարձած անչափահասի կնքած գործարքի անվավերությունը**

Անվավեր է տասնհինգ տարեկան չդարձած անչափահասի կնքած գործարքը, բացի սույն օրենսգրքի 14 հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված գործարքներից:

Այդպիսի գործարքի կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ երբ հնարավոր չէ ստացածը վերադարձնել նատուրայով՝ նրա արժեքը հատուցել փողով:

Գործունակ կողմը պարտավոր է, բացի դրանից, մյուս կողմին հատուցել նրա կրած ծախսերը, նրա գույքի կորուստը կամ փչացումը, եթե գործունակ կողմը գիտեցել է կամ պետք է գիտենար մյուս կողմի անգործունակության մասին:

**ՀՈԴՎԱԾ 52. Անգործունակ ճանաչված քաղաքացու կնքած գործարքի անվավերությունը**

Անվավեր է հոգեկան հիվանդության կամ տկարամտության հետևանքով անգործունակ ճանաչված քաղաքացու կնքած գործարքը:

Այդպիսի գործարքի նկատմամբ կիրառվում են սույն օրենսգրքի 51 հոդվածով նախատեսված հետևանքները:

**ՀՈԴՎԱԾ 53. Տասնհինգից մինչև տասնութ տարեկան անչափահասի կնքած գործարքի անվավերությունը**

Այն գործարքը, որ տասնհինգից մինչև տասնութ տարեկան անչափահասը կնքել է առանց իր ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուների համաձայնության, դատարանն անվավեր է ճանաչում ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուների հայցով:

Եթե այդպիսի գործարքն անվավեր է ճանաչվել, ապա կիրառվում են սույն օրենսգրքի 51 հոդվածով նախատեսված հետևանքները:

Այս հոդվածի կանոնները չեն տարածվում այն գործարքների վրա, որոնք տասնհինգից մինչև տասնութ տարեկան անչափահասների կողմից կնքվել են սույն օրենսգրքի 13 հոդվածի երկրորդ և չորրորդ մասերին համապատասխան:

**ՀՈԴՎԱԾ 54. Այն քաղաքացու կնքած գործարքի անվավերությունը, որի**

**գործունակությունը սահմանափակվել է ոգելից խմիչքներ կամ թմրամիջոցներ չարաշահելու հետևանքով**

Ոգելից խմիչքներ կամ թմրամիջոցներ չարաշահելու հետևանքով գործունակությունը սահմանափակված քաղաքացու կողմից, առանց հոգաբարձուի համաձայնության, գույք տնօրինելու վերաբերյալ կնքած գործարքը դատարանն անվավեր է ճանաչում հոգաբարձուի հայցով:

Եթե այդպիսի գործարքն անվավեր է ճանաչվել, ապա կիրառվում են սույն օրենսգրքի 51 հոդվածով նախատեսված հետևանքները:

Այս հոդվածի կանոնները չեն տարածվում այն գործարքների վրա, որոնք կնքվել են սույն օրենսգրքի 15 հոդվածի երկրորդ մասի համապատասխան:

**ՀՈԴՎԱԾ 55. Իր գործողությունների նշանակությունը հասկանալու անընդունակ քաղաքացու կնքած գործարքի անվավերությունը**

Դատարանը գործարքն անվավեր է ճանաչում այն քաղաքացու հայցով, որը թեև գործունակ է, բայց գործարքը կնքելու պահին գտնվել է այնպիսի վիճակում, որ չէր կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել այդ գործողությունները:

Եթե այդպիսի գործարքն անվավեր է ճանաչվել, ապա կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ երբ հնարավոր չէ ստացածը վերադարձնել նատուրայով` նրա արժեքը հատուցել փողով:

Այն կողմին, որը գործարքը կնքելու պահին չէր կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել այդ գործողությունները, մյուս կողմը, բացի դրանից, պետք է հատուցի նրա ծախսերը, գույքի կորուստը կամ փչացումը, եթե այդ մյուս կողմը գիտեցել է կամ պետք է գիտենար իր հետ գործարք կնքող քաղաքացու այդպիսի վիճակի մասին:

**ՀՈԴՎԱԾ 56. Մոլորության ազդեցության տակ կնքված գործարքի անվավերությունը**

Էական նշանակություն ունեցող մոլորության ազդեցության տակ կնքված գործարքը անվավեր է ճանաչվում այն կողմի հայցով, որը գործել է մոլորության ազդեցության տակ:

Եթե այդպիսի գործարքն անվավեր է ճանաչվել, ապա կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ երբ հնարավոր չէ ստացածը վերադարձնել նատուրայով, նրա արժեքը հատուցել փողով:

Այն կողմը, որի հայցով անվավեր է ճանաչվել գործարքը, իրավունք ունի մյուս կողմից պահանջելու հատուցել իր ծախսերը, գույքի կորուստը կամ փչացումը, եթե ապացուցի, որ մոլորությունն առաջացել է մյուս կողմի մեղքով: Եթե դա չապացուցվի, ապա այն կողմը, որի հայցով անվավեր է ճանաչվել գործարքը, պարտավոր է մյուս կողմին հատուցել նրա ծախսերը, գույքի կորուստը կամ փչացումը:

**ՀՈԴՎԱԾ 57. Խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության տակ, ինչպես նաև մեկ կողմի հետ մյուս կողմի ներկայացուցչի չարամիտ համաձայնության հետևանքով կամ ծանր հանգամանքների բերումով կնքված գործարքի անվավերությունը**

Խաբեության, բռնության, սպառնալիքի ազդեցության տակ կամ մեկ կողմի հետ մյուս կողմի ներկայացուցչի չարամիտ համաձայնության հետևանքով կնքված գործարքը, ինչպես նաև այն գործարքը, որ քաղաքացին ստիպված է եղել կնքելու ծանր հանգամանքների բերումով` իր համար ծայրահեղ անձեռնտու պայմաններով, անվավեր է ճանաչվում տուժողի հայցով կամ պետական, կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպության հայցով:

Եթե գործարքն անվավեր է ճանաչվել նշված հիմքերից որևէ մեկով, ապա մյուս կողմը տուժողին վերադարձնում է գործարքով իր ամբողջ ստացածը, իսկ երբ հնարավոր չէ ստացածը վերադարձնել նատուրայով, ապա նրա արժեքը հատուցում է փողով: Եթե տուժողը մյուս կողմից գործարքով գույք է ստացել կամ մյուս կողմին տրվածի դիմաց հասանելիք ունի, ապա դրանք վերցվում են հօգուտ պետության: Երբ գույքը նատուրայով հօգուտ պետության հանձնելն անհնարին է, ապա բռնագանձվում է նրա արժեքը:

Բացի դրանից, մյուս կողմը տուժողին հատուցում է նրա կրած ծախսերը, նրա գույքի կորուստը կամ փչացումը:

**ՀՈԴՎԱԾ 58. Կեղծ և շինծու գործարքների անվավերությունը**

Անվավեր է այն գործարքը, որը կնքվել է միայն առերևույթ, առանց իրավաբանական հետևանքներ ստեղծելու մտադրության:

Եթե գործարքը կնքվել է մի այլ գործարք քողարկելու նպատակով, ապա կիրառվում են այն գործարքին վերաբերող կանոնները, որ իրոք նկատի են ունեցել կողմերը:

**ՀՈԴՎԱԾ 59. Այն պահը, որից սկսած գործարքն անվավեր է համարվում**

Անվավեր ճանաչված գործարքն անվավեր է համարվում այն կնքելու պահից: Սակայն, եթե

գործարքի բովանդակությունից բխում է, որ այն կարող է դադարել միայն հետագա ժամանակում, ապա անվավեր ճանաչված գործարքի գործողությունը դադարում է հետագա ժամանակում:

**ՀՈԴՎԱԾ 60. Գործարքի մի մասի անվավերության հետևանքները**

Գործարքի մի մասի անվավերությունը չի առաջացնում մյուս մասերի անվավերություն եթե կարելի է ենթադրել, որ գործարքը կարող էր կնքվել նաև առանց անվավեր ճանաչված մասը մտցնելու:

**ՀՈԴՎԱԾ 61. Պայմանով կնքված գործարքները**

Գործարքը հետաձգող պայմանով կնքված է համարվում, եթե կողմերը իրավունքների ու պարտականությունների ծագումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը հայտնի չէ՝ կիրականանա, թե չի իրականանա:
Գործարքը վերացնող պայմանով կնքված է համարվում, եթե կողմերը իրավունքների ու պարտականությունների դադարումը կախման մեջ են դրել մի հանգամանքից, որը հայտնի չէ՝ կիրականանա, թե չի իրականանա:
Եթե պայմանի իրականացմանը անբարեխղճորեն արգելք է հանդիսացել այն կողմը, որին ձեռնտու չէ պայմանի իրականացումը, ապա պայմանը իրականացված է համարվում:
Եթե պայմանի իրականացմանը անբարեխղճորեն նպաստել է այն կողմը, որին ձեռնտու է պայմանի իրականացումը, ապա պայմանը իրականացված չի համարվում:

## Գ Լ ՈՒ Խ 4.

## *ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԻԱԶՈՐԱԳԻՐ*

**ՀՈԴՎԱԾ 62. Ներկայացուցչություն**

Այն գործարքը, որը լիազորագրի, օրենքի կամ վարչական ակտի վրա հիմնված լիազորությամբ մեկ անձը (ներկայացուցիչը) կնքել է մի ուրիշ անձի (ներկայացվողի) անունից, անմիջականորեն ստեղծում, փոփոխում և դադարեցնում է ներկայացվողի քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները:
Լիազորությունը կարող է հետևել նաև այն իրավիճակից, որի մեջ գործում է ներկայացուցիչը (վաճառողը մանրածախ առևտրում, գանձապահը և այլն):
Ներկայացուցիչը չի կարող ներկայացվողի անունից գործարքներ կնքել ոչ անձամբ իր վերաբերմամբ, ոչ էլ մի այլ անձի վերաբերմամբ, որի ներկայացուցիչը միաժամանակ ինքն է հանդիսանում:
Չի թույլատրվում ներկայացուցչի միջոցով կնքել այնպիսի գործարք, որն իր բնույթով կարող է կնքվել միայն անձամբ, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ գործարքներ:

**ՀՈԴՎԱԾ 63. Չլիազորված անձի կողմից կամ լիազորությունների սահմանազանցումով գործարք կնքելու հետևանքները**

Ուրիշի անունից գործարք կնքելու լիազորություն չունեցող անձի կնքած գործարքը կամ լիազորությունների սահմանազանցումով կնքած գործարքը ներկայացվողի համար միայն այն դեպքում է քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ ստեղծում, փոփոխում կամ դադարեցնում, երբ այդ գործարքը հետագայում արժանանում է ներկայացվողի հավանությանը:
Ներկայացվողի հետագա հավանությունը գործարքը վավերական է դարձնում նրա կնքման պահից:

**ՀՈԴՎԱԾ 64. Լիազորագիր**

Լիազորագիր է համարվում այն գրավոր լիազորությունը, որ մեկ անձը տալիս է մի ուրիշ անձի՝ երրորդ անձանց առջև ներկայացուցչության համար:
Իրավաբանական անձին լիազորագիր կարող է տրվել այնպիսի գործարքներ կնքելու համար միայն, որոնք չեն հակասում նրա կանոնադրությանը կամ տվյալ տեսակի կազմակերպությունների ընդհանուր կանոնադրությանը:

**ՀՈԴՎԱԾ 65. Լիազորագրի ձևը**

Նոտարական ձև պահանջող գործարքներ կնքելու, ինչպես նաև պետական, կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների վերաբերմամբ գործողություններ կատարելու լիազորագիրը պետք է վավերացված լինի նոտարական կարգով, բացառությամբ սույն օրենսգրքում նախատեսված դեպքերի և մյուս այն դեպքերի, երբ հատուկ կանոններով թույլ է տրված լիազորագրի այլ ձև:
Նոտարական կարգով հաստատված լիազորագրերին են հավասարեցվում՝
հոսպիտալներում, առողջարաններում և այլ զինվորական բուժհիմնարկներում բուժման

մեջ գտնվող զինծառայողների և մյուս անձանց լիազորագրերը՝ հաստատված այդ հոսպիտալների, առողջարանների և այլ զինվորական բուժհիմնարկների պետերի, բուժական մասի գծով նրանց տեղակալների, ավագ և հերթապահ բժիշկների կողմից.

զինծառայողների լիազորագրերը, իսկ զորամասերի, զորամիավորումների, զինվորական հիմնարկների ու ռազմաուսումնական հաստատությունների տեղաբաշխման այն կետերում, որտեղ չկան պետական նոտարական գրասենյակներ և նոտարական գործողություններ կատարող այլ մարմիններ, նաև բանվորների և ծառայողների, նրանց ընտանիքների անդամների ու զինծառայողների ընտանիքների անդամների լիազորագրերը՝ հաստատված այդ զորամասերի, զորամիավորումների, զինվորական հիմնարկների և հաստատությունների հրամանատարների (պետերի) կողմից.

ազատազրկման վայրերում գտնվող անձանց լիազորագրերը՝ հաստատված ազատազրկման վայրերի պետերի կողմից:

Աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարումներ ստանալու, հեղինակների և գյուտարարների վարձատրություն, կենսաթոշակ, նպաստ ու կրթաթոշակ, պետական աշխատավորական խնայողական դրամարկղերից գումարներ ստանալու լիազորագիրը և առաքումներ, այդ թվում դրամական ու ծանրոցային առաքումներ ստանալու լիազորագիրը կարող է հաստատել նաև այն կազմակերպությունը, որտեղ լիազորագիր տվողը աշխատում կամ սովորում է, այն տնային կառավարչությունը, որտեղ նա բնակվում է, այն ստացիոնար բուժհիմնարկի ադմինիստրացիան, որտեղ նա գտնվում է բուժման մեջ:

***(26.11.75. խմբագրությամբ)***

**ՀՈԴՎԱԾ 66. Պետական, կոոպերատիվ և հասարակական կազմակերպությունների լիազորագրեր**

Լիազորագիրը պետական կազմակերպության անունից տրվում է այդ կազմակերպության ղեկավարի ստորագրությամբ և այդ կազմակերպության կնիքի դրոշմամբ:

Լիազորագիրը կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպության անունից տրվում է այդ կազմակերպության կանոնադրությամբ դրա համար լիազորված անձանց ստորագրությամբ և այդ կազմակերպության կնիքի դրոշմամբ:

Փող և այլ գույքային արժեքներ ստանալու կամ տալու համար պետական, կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպության անունից տրված լիազորագիրը պետք է ստորագրված լինի նաև այդ կազմակերպության գլխավոր (ավագ) հաշվապահի կողմից:

Բանկում գործառնությունների կատարման լիազորագրեր և արտաքին առևտրի ասպարեզում գործարքների կնքման լիազորագրեր տալու կարգն ու դրանց ձևը որոշվում են հատուկ կանոններով:

**ՀՈԴՎԱԾ 67. Լիազորագրի ժամկետը**

Լիազորագրի գործողության ժամկետը չի կարող երեք տարուց ավելի լինել: Եթե լիազորագրում ժամկետ չի նշված, ապա այն պահպանում է ուժը կնքման օրվանից մեկ տարվա ընթացքում:

Այն լիազորագիրը, որում չի նշված նրա կնքման տարին ու ամսաթիվը, անվավեր է:

Արտասահմանում գործողություններ կատարելու համար նախատեսված՝ պետական նոտարի կողմից հաստատված լիազորագիրը, որը ցուցումներ չի պարունակում նրա գործողության ժամկետի մասին, ուժը պահպանում է մինչև լիազորագիր տվող անձի կողմից նրա վերացումը:

***(26.11.75. խմբագրությամբ)***

**ՀՈԴՎԱԾ 68. Վերալիազորում**

Լիազորագիր ստացած անձը պետք է անձամբ կատարի այն գործողությունները, որի համար ինքը լիազորված է: Նա կարող է այդ գործողությունների կատարումը վերալիազորել մի այլ անձի, եթե լիազորագրով ինքը լիազորված է կամ հանգամանքների բերումով ստիպված է այդ անել՝ ելնելով լիազորագիր տվողի շահերի պաշտպանությունից:

Լիազորագիրը, որով լիազորությունները հանձնվում են մի այլ անձի, պետք է նոտարական կարգով վավերացված լինի:

Վերալիազորման կարգով տրված լիազորագրի գործողության ժամկետը չի կարող ավելի լինել այն հիմնական լիազորագրի գործողության ժամկետից, որի հիման վրա տրված է այդ լիազորագիրը:

Լիազորությունները այլ անձի հանձնողը պետք է այդ մասին տեղեկացնի լիազորագիր տվողին և նրան անհրաժեշտ տեղեկություններ հաղորդի այն անձի վերաբերյալ, որին հանձնված են լիազորությունները: Եթե լիազորությունները հանձնողը չկատարի այս պարտականությունը, ապա նա իր կողմից վերալիազորված անձի գործողությունների համար պատասխանատվություն է կրում որպես իր սեփական գործողությունների:

**ՀՈԴՎԱԾ 69. Լիազորագրի դադարումը**

Լիազորագրի գործողությունը դադարում է, եթե՝

1) լրանում է լիազորագրի ժամկետը.
2) լիազորագիր տվող անձը վերացնում է այն.
3) լիազորվածը հրաժարվում է.
4) դադարում է այն իրավաբանական անձը, որի անունից տրվել է լիազորագիրը.
5) դադարում է այն իրավաբանական անձը, որի անունով տրվել է լիազորագիրը.
6) մեռնում է կամ մեռած է հայտարարվում, անգործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվում այն անձը, որը տվել է լիազորագիրը.
7) մեռնում է կամ մեռած է հայտարարվում, անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող է ճանաչվում այն անձը, որին տրվել է լիազորագիրը:

Լիազորագիր տվող անձը ուզած ժամանակ կարող է վերացնել լիազորագիրը կամ վերալիազորումը, իսկ լիազորվածը` հրաժարվել նրանից: Անվավեր է այդ իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնությունը:

Լիազորագրի դադարման հետ միաժամանակ ուժը կորցնում է վերալիազորումը:

**ՀՈԴՎԱԾ 70. Լիազորագրի դադարման հետևանքները**

Լիազորագիր տվող անձը պարտավոր է այն վերացնելու մասին (սույն օրենսգրքի 69 հոդվածի 2-րդ կետ) տեղեկացնել այն անձին, որին լիազորագիրը տրվել է, ինչպես նաև իրեն հայտնի այն երրորդ անձանց, որոնց առջև ներկայացուցչության համար տրվել է լիազորագիրը: Նույնպիսի պարտականություն է դրվում լիազորագիր տվող անձի իրավահաջորդների վրա, եթե լիազորագիրը դադարում է սույն օրենսգրքի 69 հոդվածի 4-րդ ու 6-րդ կետերում նախատեսված հիմքերով:

Լիազորված անձի այն գործողությունների հետևանքով ծագած իրավունքներն ու պարտականությունները, որ նա կատարել է մինչև այն պահը, երբ ինքը իմացել է կամ պարտավոր էր իմանալ լիազորագրի դադարման մասին, երրորդ անձանց նկատմամբ պահպանում են իրենց ուժը լիազորագիրը տվողի և նրա իրավահաջորդների համար: Այս կանոնը չի կիրառվում, եթե երրորդ անձը գիտեր կամ պարտավոր էր գիտենալ, որ լիազորագրի գործողությունը դադարել է:

Լիազորագրի դադարումից հետո լիազորված անձը կամ նրա իրավահաջորդները անհապաղ պետք է վերադարձնեն լիազորագիրը:

## Գ Լ ՈՒ Խ 5.

## *ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՀԱՇՎԵԼԸ*

**ՀՈԴՎԱԾ 71. Ժամկետը որոշելը**

Օրենքով կամ գործարքով սահմանված կամ դատարանի, արբիտրաժի կամ միջնորդ դատարանի կողմից նշանակվող ժամկետը որոշվում է օրացուցային ամսաթվով կամ որոշ ժամանակամիջոցի լրացմամբ, որը հաշվվում է տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով:

Ժամկետը կարող է որոշվել նաև այն իրադարձության մատնանշումով, որն անխուսափելիորեն պետք է տեղի ունենա:

**ՀՈԴՎԱԾ 72. Ժամկետի ընթացքի սկիզբը**

Ժամկետի ընթացքն սկսվում է այն օրացուցային ամսաթվի կամ իրադարձությունը վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

**ՀՈԴՎԱԾ 73. Տարիներով հաշվվող ժամկետի ավարտվելը**

Տարիներով հաշվվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսում և ամսաթվին:

Կես տարի որոշված ժամկետի նկատմամբ կիրառվում են ամիսներով հաշվվող ժամկետների կանոնները (սույն օրենսգրքի 74 հոդված):

**ՀՈԴՎԱԾ 74. Ամիսներով հաշվվող ժամկետն ավարտվելը**

Ամիսներով հաշվվող ժամկետը լրանում է ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին:

Կես ամիս որոշված ժամկետը դիտվում է որպես օրերով հաշվվող ժամկետ և համարվում է տասնհինգ օրվա հավասար: Եթե ամիսներով հաշվվող ժամկետի վերջն ընկնում է այնպիսի ամիս, որը չունի համապատասխան ամսաթիվ, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը:

**ՀՈԴՎԱԾ 75. Շաբաթներով հաշվվող ժամկետի ավարտվելը**

Շաբաթներով հաշվվող ժամկետը լրանում է վերջին շաբաթվա համապատասխան օրը:

**ՀՈԴՎԱԾ 76. Ժամկետի ավարտվելը ոչ աշխատանքային օրը**

Եթե վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվան, ապա ժամկետի ավարտման օրն է համարվում այդ օրվան հաջորդող աշխատանքային օրը:

**ՀՈԴՎԱԾ 77. Ժամկետի վերջին օրը գործողություններ կատարելու կարգը**

Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:
Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ սահմանված կանոններով այդ կազմակերպությունում դադարեցվում են համապատասխան գործառնությունները:
Ժամկետին կատարված են համարվում այն բոլոր գրավոր հայտարարություններն ու ծանուցումները, որոնք փոստին կամ հեռագրատանն են հանձնված մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:

## Գ Լ ՈՒ Խ 6.

## *ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ*

**ՀՈԴՎԱԾ 78. Հայցային վաղեմության ընդհանուր ժամկետները**

ԱՅՆ ԱՆՁԻ ՀԱՅՑՈՎ, ՈՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԽԱԽՏՎԱԾ Է, ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺԱՄԿԵՏԸ (ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆԸ) ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ԵՐԵՔ ՏԱՐԻ, ԻՍԿ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՈՒ ՄՅՈՒՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԻՄՅԱՆՑ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅՑԵՐՈՎ՝ ՄԵԿ ՏԱՐԻ:
***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 79. Հայցային վաղեմության կրճատ ժամկետները**

ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ԽՍՀ Միության ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՅՆՊԻՍԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՑ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ Է ԽՍՀ Միության ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆԸ, ԵՎ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ՝ ՄՅՈՒՍ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀԱՄԱՐ:
ՎԵՑ ԱՄԻՍ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏ ԺԱՄԿԵՏ Է ԿԻՐԱՌՎՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝
1) ՏՈՒԺԱՆՔԻ (ՏՈՒԳԱՆՔԻ, ՏՈՒՅԺԻ) ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՑԵՐՈՎ.
2) ՎԱՃԱՌՎԱԾ ԻՐԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 251 ՀՈԴՎԱԾ) ՀԱՅՑԵՐՈՎ.
3) ՈՉ ՊԱՏՇԱՃ ՈՐԱԿԻ ԱՐՏԱԴՐԱՆՔ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 266 ՀՈԴՎԱԾ), ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆԿՈՄՊԼԵԿՏ ԱՐՏԱԴՐԱՆՔ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒՑ ԲԽՈՂ ՀԱՅՑԵՐՈՎ.
4) ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՑԵՐՈՎ, ԲԱՑԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՑԵՐԻՑ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 365 ՀՈԴՎԱԾ):
Շինությունների ՈՒ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 365 ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏ ԺԱՄԿԵՏԸ:
ԲԵռների, ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՈՒ ՈՒՂԵԲԵՌԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՀԱՅՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 387 ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԻՍԿ ԿԱՊԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՒ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԲԽՈՂ ՀԱՅՑԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ԽՍՀ Միության ԿԱՊԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՇՎԱԾ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ:

**ՀՈԴՎԱԾ 80. Հայցային վաղեմության կրճատ ժամկետների փոփոխման վերաբերյալ համաձայնության անվավերությունը**

ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՓՈՓՈԽԵԼ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՔ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ:

**ՀՈԴՎԱԾ 81. Հայցի քննարկումը անկախ հայցային վաղեմությունը լրանալուց**

ԽախՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՀԱՆՋԸ ԴԱՏԱՐԱՆԻ, ԱՐԲԻՏՐԱԺԻ ԿԱՄ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՔՆՆԱՐԿՄԱՆ Է ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԱՆԿԱԽ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒՑ:

**ՀՈԴՎԱԾ 82. Հայցային վաղեմության կիրառման պարտադիր լինելը**

ԴԱՏԱՐԱՆԸ, ԱՐԲԻՏՐԱԺԸ ԿԱՄ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱՌՈՒՄ Է ԱՆԿԱԽ ԿՈՂՄԵՐԻ ԴԻՄՈՒՄԻՑ:

**ՀՈԴՎԱԾ 83. Հայցային վաղեմության ժամկետների ընթացքի սկիզբը**

Հայցային Վաղեմության Ժամկետի Ընթացքն Սկսվում Է Հայցի Իրավունքի Ծագման Օրվանից. Հայցի Իրավունքը Ծագում Է Այն Օրվանից, Երբ Անձն Իմացել Է Կամ Պարտավոր Էր Իմանալ Իր Իրավունքի Խախտման Մասին: Բացառություններն Այս Կանոնից, Ինչպես Նաև Հայցային Վաղեմության Ժամկետների Ընթացքը Կասեցնելու և Ընդհատելու Հիմքերը Սահմանվում Են ԽՍՀ Միության Օրենսդրությամբ և Սույն Օրենսգրքով:

**ՀՈԴՎԱԾ 84. Հայցային վաղեմության ժամկետը՝ պարտավորության մեջ անձանց փոփոխվելու դեպքում**

Պարտավորության Մեջ Անձանց Փոփոխումը Հայցային Վաղեմության Ժամկետի Փոփոխություն Չի Առաջացնում:

**ՀՈԴՎԱԾ 85. Հայցային վաղեմության ժամկետների ընթացքի կասեցումը**

Հայցային Վաղեմության Ժամկետների Ընթացքը Կասեցվում Է՝
1) Եթե Հայց Ներկայացնելուն Արգելք Է Հանդիսացել Տվյալ Պայմաններում Արտակարգ և Անկանխելի Եղելություն (Անհաղթահարելի Ուժ).
2) Եթե ԽՍՀՄ Նախարարների Խորհրդի և Հայաստանի Հանրապետության Նախարարների Խորհրդի Կողմից Սահմանված Է Պարտավորությունների Կատարման Տարկետում (Մորատորիում).
3) Եթե Հայցվորը Կամ Պատասխանողը Գտնվում Է Պատերազմական Դրության Փոխադրված ԽՍՀՄ Զինված Ուժերի Կազմում:
Հայցային Վաղեմության Ժամկետների Ընթացքը Կասեցվում Է Այն Պայմանով, Որ Այս Հոդվածի Առաջին Մասում Նշված Հանգամանքները Ծագել Են Կամ Շարունակել Են Գոյություն Ունենալ Վաղեմության Ժամկետի Վերջին Վեց Ամսում, Իսկ Եթե Վաղեմության Ժամկետը Վեց Ամսից Պակաս Է՝ Վաղեմության Ժամկետի Ընթացքում:
Առողջությանը Վնաս Հասցնելու Կամ Մահ Պատճառելու Հետ Կապված Վնասի Հատուցման Վերաբերյալ Հայցերով Վաղեմության Ժամկետի Ընթացքը Կասեցվում Է, Այս Հոդվածում Մատնանշված Հիմքերից Բացի, Նաև Կենսաթոշակ Կամ Նպաստ Նշանակելու Մասին Տուժողի Կամ Սույն Օրենսգրքի 464 Հոդվածի Երկրորդ Մասում Թվարկված Անձանց Կողմից Համապատասխան Մարմնին Դիմում Ներկայացնելով՝ Մինչև Կենսաթոշակ Կամ Նպաստ Նշանակվելը Կամ Մերժվելը:
Վաղեմության Ժամկետի Կասեցման Հիմք Ծառայած Հանգամանքի Դադարման Օրվանից Շարունակվում Է Այդ Ժամկետի Ընթացքը, Ընդ Որում Ժամկետի Մնացած Մասը Երկարացվում Է Մինչև Վեց Ամիս, Իսկ Եթե Հայցային Վաղեմության Ժամկետը Վեց Ամսից Պակաս Է Եղել՝ Մինչև Հայցային Վաղեմության Ժամկետը:

**ՀՈԴՎԱԾ 86. Հայցային վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատումը**

Հայցային Վաղեմության Ժամկետի Ընթացքն Ընդհատվում Է Սահմանված Կարգով Հայցի Հարուցումով:
Այն Վեճերով, Որոնց Մեկ Կամ Երկու Կողմը Քաղաքացիներ Են, Հայցային Վաղեմության Ժամկետի Ընթացքն Ընդհատվում Է Նաև Պարտավոր Անձի Կողմից Այնպիսի Գործողությունների Կատարմամբ, Որոնք Վկայում Են Պարտքի Ճանաչումը:
Ընդհատումից Հետո Հայցային Վաղեմության Ժամկետի Ընթացքը Նորից Է Սկսվում: Մինչև Ընդհատումն Անցած Ժամանակը Չի Հաշվվում Նոր Ժամկետի Մեջ:
Եթե Դատարանն Առանց Քննարկման Է Թողել Հայցը (Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Դատավարության Օրենսգրքի 220 Հոդված), Ապա Մինչև Հայց Ներկայացվելը Սկսված Հայցային Վաղեմության Ժամկետի Ընթացքը Շարունակվում Է Ընդհանուր Կարգով:
Եթե Դատարանն Առանց Քննարկման Է Թողել Քրեական Գործում Ներկայացված Հայցը, Ապա Մինչև Հայց Ներկայացվելը Սկսված Հայցային Վաղեմության Ժամկետի Ընթացքը Շարունակվում Է Այն Դատավճիռն Օրինական Ուժի Մեջ Մտնելու Օրվանից, Որով Հայցը Թողնվել Է Առանց Քննարկման:

**ՀՈԴՎԱԾ 87. Հայցային վաղեմության ժամկետը լրանալու հետևանքները**

Մինչև Հայց Ներկայացվելը Հայցային Վաղեմության Ժամկետի Լրանալը Հիմք Է Հանդիսանում Հայցը Մերժելու Համար:
Եթե Դատարանը, Արբիտրաժը Կամ Միջնորդ Դատարանը Հարգելի Համարի Հայցային Վաղեմության Ժամկետը Բաց Թողնելու Պատճառը, Ապա Խախտված Իրավունքը Ենթակա Է

Պաշտպանության:

**ՀՈԴՎԱԾ 88. Վաղեմության կրճատ ժամկետների կասեցումը, ընդհատումը և վերականգնումը**

Հայցային Վաղեմության Ժամկետների Կասեցման, Ընդհատման Ու Վերականգման Կանոնները (Սույն Օրենսգրքի 85-87 Հոդվածներ) Տարածվում Են Նաև Վաղեմության Կրճատ Ժամկետների Վրա, Եթե Այլ Բան Չի Սահմանված Օրենքով:

**ՀՈԴՎԱԾ 89. Պարտապանի կողմից պարտավորության կատարումը հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո**

Վաղեմության Ժամկետը Լրանալուց Հետո Պարտապանի Կողմից Պարտավորության Կատարման Դեպքում Նա Իրավունք Չունի Ետ Պահանջելու Կատարածը, Թեկուզև Կատարման Պահին Նա Չի Իմացել Վաղեմությունն Անցնելու Մասին:

Հայցային Վաղեմության Ժամկետը Լրանալուց Հետո Պարտավորության Կատարման Հետևանքները Պետական Կազմակերպությունների Հարաբերություններում և Նրանց Ու Կոոպերատիվ Կազմակերպությունների (Բացի Կոլտնտեսություններից) և Հասարակական Կազմակերպությունների Հարաբերություններում Որոշվում Են ԽՍՀ Միության Օրենսդրությամբ:

**ՀՈԴՎԱԾ 90. Այն պահանջները, որոնց վրա հայցային վաղեմությունը չի տարածվում**

Հայցային Վաղեմությունը Չի Տարածվում՝

Անձնական Ոչ Գույքային Իրավունքների Խախտումից Բխող Պահանջների Վրա, Բացի Օրենքով Նախատեսված Դեպքերից.

Կոլտնտեսությունների և Այլ Կոոպերատիվ և Մյուս Հասարակական Կազմակերպությունների Կամ Քաղաքացիների Ապօրինի Տիրապետության Տակ Գտնվող Պետական Գույքը Վերադարձնելու Վերաբերյալ Պետական Կազմակերպությունների Պահանջների Վրա.

Պետական Աշխատավորական Խնայողական Դրամարկղերը և ԽՍՀՄ Պետական Բանկը Մուծված Ավանդները Վերադարձնելու Վերաբերյալ Ավանդատուների Պահանջների Վրա.

ԽՍՀ Միության Օրենսդրությամբ Սահմանվող Դեպքերում՝ Նաև Այլ Պահանջների Վրա:

***(28.07.82. խմբագրությամբ)***

**ՀՈԴՎԱԾ 91. Հայցային վաղեմության կիրառումը լրացուցիչ պահանջներով ներկայացված հայցերի նկատմամբ**

Գլխավոր Պահանջով Հայցային Վաղեմության Ժամկետի Լրանալու Հետ Միաժամանակ Լրացած Է Համարվում Նաև Լրացուցիչ Պահանջով (Տուժանքի, երաշխավորության և այլնի) Հայցային Վաղեմության Ժամկետը:

## ՀԱՏՎԱԾ II. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

### Գ Լ ՈՒ Խ 7.

### *ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ*

**ՀՈԴՎԱԾ 92. Սեփականատիրոջ իրավազորությունները**

ՍեփակԱՆԱՏԻՐՈՋՆ ԵՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԳՈՒՅՔԸ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ, ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԵՒ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝ ՕՐԵՆՔՈՎ ՈՐՈՇՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ:

**ՀՈԴՎԱԾ 93. Սոցիալիստական սեփականություն**

ՍոցիԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՆ՝ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ) ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ-ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

ՊետոՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ Է ՍՏԵՂԾՈՒՄ ՆՐԱ ԲԱԶՄԱՊԱՏԿՄԱՆ ՀԱՄԱՐ:

ՈՉ ՈՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՅԼ ՇԱՀԱԴԻՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### Գ Լ ՈՒ Խ 8.

### *ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

**ՀՈԴՎԱԾ 94. Պետությունը որպես պետական գույքի միակ սեփականատեր**

ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԲՈՂՋ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՐԴԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՆԵՑՎԱԾՔՆ Է, ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԸ:
ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՄԲՈՂՋ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՄԻԱԿ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՆ Է:
***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 94.[1] Գույքի օպերատիվ կառավարումը պետական կազմակերպության կողմից**

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԱՅԴ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐՔՈ, ՈՐՈՆՔ ՕՐԵՆՔՈՎ ՈՐՈՇՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ, ԻՐԵՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ, ՊԼԱՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆ ԳՈՒՅՔԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ, ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ:
***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 95. Պետական սեփականության իրավունքի օբյեկտները**

ՀՈՂԸ, ՆՐԱ ԸՆԴԵՐՔԸ, ՋՐԵՐՆ ՈՒ ԱՆՏԱՌՆԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌԻԿ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՎՈՒՄ ԵՆ ՄԻԱՅՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: ՊԵՏՈՒԹՅԱՆՆ ԵՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ, ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՂԱԾ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԲԱՆԿԵՐԸ, ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ, ԿՈՄՈՒՆԱԼ ԵՎ ԱՅԼ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԸ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄՅՈՒՍ ԳՈՒՅՔԸ:
***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 96. Հիմնական միջոցների թվին դասվող պետական գույքը տնօրինելու կարգը**

ՇԵՆՔԵՐԸ, ԿԱՌՈՒՅՎԱԾՔՆԵՐԸ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԹՎԻՆ ԴԱՍՎՈՂ ՄՅՈՒՍ ԳՈՒՅՔԸ ՊԵՏԱԿԱՆ ՄՅՈՒՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԱՅԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՈՒ ՄՅՈՒՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԽՍՀ Միության ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:
ԱՅՍ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՕՏԱՐՎԵԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ, ԲԱՑԻ ԱՅՆ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻՑ, ՈՐԻ ՎԱՃԱՌՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ԽՍՀ Միության ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:
***(28.07.82., 25.12.87. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 97. Պետական կազմակերպությունների՝ իրենց շրջանառու միջոցները և արտադրանքը տնօրինելու իրավազորությունները**

ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՕՐԻՆՈՒՄ ԵՆ ՀՈՒՄՔԸ, ՎԱՌԵԼԻՔԸ, ՆՅՈՒԹԵՐԸ, ԿԻՍԱՖԱԲՐԻԿԱՏՆԵՐԸ, ԴՐԱՄԱԿԱՆ ԵՎ ՄՅՈՒՍ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՏՐԱՍՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ՝ ԱՅԴ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՄԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՊԼԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ:

**ՀՈԴՎԱԾ 98.**

***(ՎԵՐԱՑՎԵԼ Է /25.10.95Թ. ՕՐԵՆՔ/)***

## Գ Լ ՈՒ Խ 9.

## ***ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ***

**ՀՈԴՎԱԾ 99. Կոլտնտեսությունների, այլ կոոպերատիվ կազմակերպությունների, նրանց միավորումների սեփականության իրավունքի բովանդակությունը**

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՅԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՎ ՏՆՕՐԻՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ:
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՅԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԲԱՑԱՌԱՊԵՍ ԻՐԵՆՑ՝ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ:
ՎԵՐԱԴԱՍ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՆ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ՍՏՈՐԱԴԱՍ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԸ:

Կոոպերատիվ ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՖՈՆԴԵՐԸ ԿԱԶՄՎՈՒՄ ԵՒ ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՏԱԿ ԵՒ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ ԵՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄԸ ՏԱՐԱԾԵԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՖՈՆԴԵՐԻ ՎՐԱ:

**ՀՈԴՎԱԾ 100. Կոլտնտեսությունների և այլ կոոպերատիվ կազմակերպությունների, նրանց միավորումների սեփականության իրավունքի օբյեկտները**

ԿոլտՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ԱՅԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԵՆ՝ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՒ ՄՅՈՒՍ ԳՈՒՅՔԸ, ՈՐ ՆՐԱՆՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 101. Կոլտնտեսությունների, այլ կոոպերատիվ կազմակերպությունների, նրանց միավորումների գույքի վրա բռնագանձում տարածելու կարգը**

ԿոլտՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԱՅԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ՆՐԱՆՑ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԵՆՔԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ՏՐԱԿՏՈՐՆԵՐԸ, ԿՈՄԲԱՅՆՆԵՐԸ, ՄՅՈՒՍ ՄԵՔԵՆԱՆԵՐԸ, ՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՒ ԱՅԴ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՅՈՒՍ ԳՈՒՅՔԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՍԵՐՄԱՑՈՒԻ ՈՒ ԿԵՐԻ ՖՈՆԴԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԱՌԱՐԿԱ ԼԻՆԵԼ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ:

ԲռնագԱՆՁՄԱՆ ԱՌԱՐԿԱ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ՄՅՈՒՍ ԳՈՒՅՔԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ, ԻՍԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ԽՍՀ ՄիուԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ:

ՎԱՐԿԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԴ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԽՍՀ ՄիուԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

## Գ Լ ՈՒ Խ 10.

## *ԱՐՀՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

**ՀՈԴՎԱԾ 102. Արհմիութենական և այլ հասարակական կազմակերպությունների սեփականության իրավունքի բովանդակությունը**

ԱրհմիութԵՆԱԿԱՆ ԵՒ ՄՅՈՒՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԻՐԵՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ԵՒ ՏՆՕՐԻՆՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ:

ԱրհմիուԹԵՆԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԲԱՑԱՌԱՊԵՍ ԻՐԵՆՑ՝ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ:

**ՀՈԴՎԱԾ 103. Արհմիութենական և այլ հասարակական կազմակերպությունների սեփականության իրավունքի օբյեկտները**

ԱրհմիուԹԵՆԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԱՅՆ ԳՈՒՅՔԸ, ՈՐ ՆՐԱՆՑ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 104. Արհմիութենական և այլ հասարակական կազմակերպությունների գույքի վրա բռնագանձում տարածելու կարգը**

ԱրհՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԵՆՔԵՐԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ ԵՒ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌՈՂՋԱՐԱՆՆԵՐԻ, ՀԱՆԳՍՏՅԱՆ ՏՆԵՐԻ, ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՊԱԼԱՏՆԵՐԻ, ԱԿՈՒՄԲՆԵՐԻ, ՍՏԱԴԻՈՆՆԵՐԻ ՈՒ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՃԱՄԲԱՐՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՅՈՒՍ ԳՈՒՅՔԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ԱՌԱՐԿԱ ԼԻՆԵԼ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԴԻՄԱՑ:

ԲռնաԳԱՆՁՄԱՆ ԱՌԱՐԿԱ ԿԱՐՈՂ Է ԼԻՆԵԼ ՄՅՈՒՍ ԳՈՒՅՔԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ, ԻՍԿ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ԽՍՀ ՄիուԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ:

ՎարԿԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ ՎԱՐԿԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԴ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ՈՐՈՇՎՈՒՄ Է ԽՍՀ Միության ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:
*(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)*

**Գ Լ ՈՒ Խ 11.**

***ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ***

**ՀՈԴՎԱԾ 105. ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ**

Քաղաքացիների ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԵՆ: Անձնական ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ԱՌՕՐՅԱ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ, ԱՆՁՆԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ, ՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: Քաղաքացիների ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՀՊԱՆՎՈՒՄ ԵՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ:

Քաղաքացիների ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄՈՂ ԳՈՒՅՔԸ ՉՊԵՏՔ Է ԾԱՌԱՅԻ ԱՆԱՇԽԱՏ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ՉՊԵՏՔ Է ՕԳՏԱԳՈՐԾՎԻ Ի ՎՆԱՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԻ:
*(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)*

**ՀՈԴՎԱԾ 106. ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

Որպես ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿԱՐՈՂ Է ՈՒՆԵՆԱԼ ՄԵԿ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ (ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԸ): Համատեղ ԲՆԱԿՎՈՂ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՒՆԵՆԱԼ ՄԻԱՅՆ ՄԵԿ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ, ՈՐԸ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԿԱՐՈՂ Է ՊԱՏԿԱՆԵԼ ՆՐԱՆՑԻՑ ՄԵԿԻՆ ԿԱՄ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ՆՐԱՆՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:
*(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)*

**ՀՈԴՎԱԾ 107. ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՉԱՓԸ**

Անձնական ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ (ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ) ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԻ (ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ) ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԸ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 106 ՀՈԴՎԱԾ) ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱԶԱՆՑԻ ՀԱՐՅՈՒՐ ԵՐԵՍՈՒՆ ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐԻՑ: ՏԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՆՅԱԿԻ, ՆՆՋԱՍԵՆՅԱԿԻ) ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԽՈՀԱՆՈՑԻ, ՆԱԽԱՍԵՆՅԱԿԻ, ԼՈԳԱՍԵՆՅԱԿԻ ԵՎ ԱՅԼՆ) ՉԱՓԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԳՈՐԾՈՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԱՆԵՐՈՎ ՈՒ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ:

ԱՄԱՌԱՅԻՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՊԱՏՇԳԱՄԲԻ, ՎԵՐԱՆԴԱՅԻ, ՍՅՈՒՆԱՊԱՏՇԳԱՄԲԻ, ՏԵՐՐԱՍԻ) ՄԱԿԵՐԵՍԸ ՉԻ ՄՏՆՈՒՄ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍԻ ՄԵՋ (ՍՈՒՅՆ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍ) ԵՎ ՉՊԵՏՔ Է ԳԵՐԱԶԱՆՑԻ ԵՐԵՍՈՒՆ ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐԻՑ:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՎՏՈՏՆԱԿԻ, ՋԵՐՄՈՑԻ ԵՎ ԱՅԼՆ) ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Նախարարների ԽՈՐՀՈՒՐԴԸ:

ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔ ԿԱՄ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲՆԱԿԵԼԻ ՄԱԿԵՐԵՍԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ, ՔԱՂԱՔԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԿԱՄ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ԱՅՆՊԻՍԻ ՏՈՒՆ (ՏԱՆ ՄԻ ՄԱՍ), ՈՐԻ ՄԱԿԵՐԵՍԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է ՍՈՒՅՆ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՈՒՄ ՆՇՎԱԾ ՉԱՓԻՑ, ԲԱՅՑ ՉԻ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՆՈՐՄԱՅՈՎ ՏՎՅԱԼ ԸՆՏԱՆԻՔԻ ՀԱՄԱՐ ՈՐՈՇՎԱԾ ՉԱՓԻՑ, ԻՍԿ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ՝ ՆԱԵՎ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՑԻՉ ԲՆԱԿԵԼԻ ՄԱԿԵՐԵՍԻ ՉԱՓԻՑ:
*(31.05.78., 27.10.82., 26.03.86. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)*

**ՀՈԴՎԱԾ 108. ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ**

ԵԹԵ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿԱՄ ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ԱՄՈՒՍԻՆՆԵՐՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՕՐԵՆՔՈՎ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՂ ՀԻՄՔԵՐՈՎ, ՈՐՊԵՍ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՈՒՆԵՆԱՆ ՄԵԿ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԻՑ ԱՎԵԼԻ, ԱՊԱ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԻՐ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՈՐՊԵՍ ԻՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԹՈՂՆԵԼՈՒ ԱՅԴ ՏՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԸ: ՄյուՍ ՏՈՒՆԸ (ՏՆԵՐԸ) ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՊԵՏՔ Է ՎԱՃԱՌԻ, ՆՎԻՐԻ ԿԱՄ ՕՏԱՐԻ ՄԻ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՈՎ:

Սեփականատիրոջ ԿՈՂՄԻՑ ՏՈՒՆԸ (ՏՆԵՐԸ) ԿԱՄԱՎՈՐ ԿԵՐՊՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԺԱՄԿԵՏԸ ՀԱՇՎՎՈՒՄ Է ԵՐԿՐՈՐԴ ՏԱՆ (ՏՆԵՐԻ) ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ:

ԵԹԵ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՆ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՉՕԳՏԱԳՈՐԾԻ ՈՒԶԱԾ ՁԵՎՈՎ ՏՈՒՆԸ

օտարելու իր իրավունքը, ապա այդ տունը պատգամավորների շրջանային, քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշմամբ ենթակա է հարկադիր վաճառման՝ դատական վճիռների կատարման համար Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Վաճառքից ստացված գումարները, հարկադիր վաճառքի իրականացման հետ կապված ծախսերի հատուցումից հետո, հանձնվում են տան նախկին սեփականատիրոջը:

Այն դեպքում, երբ հարկադիր կարգով տան վաճառքը չի կայանում գնորդներ չլինելու պատճառով, տունը պատգամավորների շրջանային, քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշմամբ անհատույց դառնում է պետության սեփականություն:

Սույն հոդվածի կանոնները համապատասխանորեն կիրառվում են նաեւ այն դեպքերում, երբ քաղաքացին կամ համատեղ ապրող ամուսիններն ու նրանց անչափահաս երեխաները օրենքով թույլատրվող հիմքերով որպես անձնական սեփականություն ունեն՝

1)բացի մեկ տնից՝ մյուս տան մի մասը (մասերը).

2)մեկ տան մի մասը (մասերը), որը ավելի է սույն օրենսգրքի 107 հոդվածում նշված չափերից.

3)տարբեր տների մասերը.

4)մեկ բնակարանից ավելի՝ անհատական կառուցողների բնակարանաշինարարական կոլեկտիվի բազմաբնակարան տունը:

### Հոդված 109. Բնակելի տան նկատմամբ անձնական սեփականության իրավունք ձեռք բերելու հետեւանքները բնակարանաշինարարական կոոպերատիվ տանը բնակարան ունենալու դեպքում

Եթե քաղաքացու կամ համատեղ ապրող ամուսինների ու նրանց անչափահաս երեխաների՝ օրենքով թույլատրվող հիմքերով բնակելի տան կամ տան մի մասի նկատմամբ անձնական սեփականության իրավունք ծագի, երբ նրանք միաժամանակ բնակարան ունեն բնակարանաշինարարական կոոպերատիվ տանը, ապա սեփականատերն իրավունք ունի իր ընտրությամբ իրեն թողնելու տունը (տան մի մասը) կամ բնակարանը՝ բնակարանաշինարարական կոոպերատիվ տանը: Վերջին դեպքում սեփականատերը պետք է օտարի իր տունը (տան մի մասը) տան (տան մի մասի) սեփականության իրավունքը ձեռք բերելու կամ բնակարանաշինարարական կոոպերատիվ բնակարանում բնակեցման օրվանից հաշված՝ մեկ տարվա ընթացքում: Այս պահանջը չկատարվելու դեպքում տունը (տան մի մասը) ենթակա է հարկադիր օտարման սույն օրենսգրքի 108 հոդվածի կանոններով:

### Հոդված 110. Ինքնակամ տուն կառուցելու հետեւանքները

Այն քաղաքացին, որը տունը կամ նրա մի մասը (կցաշենքը) կառուցել է առանց սահմանված թույլտվության, կամ առանց պատշաճ կերպով հաստատված նախագծի, կամ հիմնական շինարարական նորմաների ու կանոնների կոպիտ խախտումով, իրավունք չունի տնօրինելու (վաճառելու, նվիրելու, վարձով տալու եւ այլն) այդ տունը կամ կցաշենքը:

Այդպիսի տունը կամ նրա կցաշենքը դատարանի վճռով կարող է անհատույց վերցվել եւ հանձնվել պատգամավորների տեղական խորհրդի ֆոնդին կամ պատգամավորների շրջանային, քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի որոշմամբ քանդվել կամ ինքնակամ շինարարությունն իրականացնող քաղաքացու կողմից, կամ նրա հաշվին:

Այս հոդվածի երկրորդ մասին համապատասխան տունը վերցվելիս կիրառվում են սույն օրենսգրքի 112 հոդվածի երրորդ մասի կանոնները:

### Հոդված 111. Անաշխատ եկամուտներով ձեռք բերված տունը, ամառանոցը կամ այլ արժեքավոր գույքը վերցնելը

Եթե քաղաքացու սեփականությունն հանդիսացող բնակելի տունը, ամառանոցը կամ այլ շինություն, կամ տան (ամառանոցի, այլ շինության) քաղաքացուն պատկանող մասը այդ քաղաքացու կողմից կառուցվել կամ ձեռք է բերվել անաշխատ եկամուտներով կամ պետական ձեռնարկությունների, հիմնարկների, կոլտնտեսությունների եւ այլ կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների միջոցների ապօրինի օգտագործման հաշվին, ապա համապատասխանորեն այդ տունը, ամառանոցը, այլ շինությունը կամ տան (ամառանոցի, այլ շինության) մի մասը պատգամավորների շրջանային (քաղաքային) խորհրդի գործադիր կոմիտեի հայցով, դատարանի կայացրած վճռով, պետք է անհատույց վերցվի եւ հանձնվի պատգամավորների տեղական խորհրդի կոմունալ ֆոնդին, կոլտնտեսությանը կամ այլ կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպությանը:

Այս հոդվածի առաջին մասի կանոնը կիրառվում է նաեւ այն դեպքերում, երբ անաշխատ եկամուտներով կամ պետական, կոոպերատիվ կամ հասարակական կազմակերպության միջոցների ապօրինի օգտագործման հաշվին ձեռք են բերվել

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐ ԿԱՄ ԱՅԼ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԳՈՒՅՔ:
ԱՅՍ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏՈՒՆԸ ՎԵՐՑՎԵԼԻՍ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 112 ՀՈԴՎԱԾԻ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ:

### ՀՈԴՎԱԾ 112. ԱՆաշխԱՏ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՈՒՆԸ, ԱՄԱՌԱՆՈՑԸ ԿԱՄ ԱՅԼ ԳՈՒՅՔԸ ՎԵՐՑՆԵԼԸ

ԵԹԵ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԱՄԱՌԱՆՈՑԸ ԿԱՄ ԱՅԼ ԳՈՒՅՔԸ, ԿԱՄ ՏԱՆ ( ԱՄԱՌԱՆՈՑԻ) ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՄԱՍԸ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ ՍԻՍՏԵՄԱՏԻԿՈՐԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ Է ԱՆԱՇԽԱՏ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ, ԱՊԱ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՐԵՆ ԱՅԴ ՏՈՒՆԸ, ԱՄԱՌԱՆՈՑԸ ԿԱՄ ՄՅՈՒՍ ԳՈՒՅՔԸ ԿԱՄ ՏԱՆ (ԱՄԱՌԱՆՈՑԻ) ՄԻ ՄԱՍԸ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՅՑՈՎ, ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՅԱՑՐԱԾ ՎՃՌՈՎ, ՊԵՏՔ Է ԱՆՀԱՏՈՒՑ ՎԵՐՑՎԻ: ԴատԱՐԱՆԻ ՈՐՈՇՄԱՄԲ ՎԵՐՑՎԱԾ ՏՈՒՆԸ (ԱՄԱՌԱՆՈՑԸ) ԿԱՄ ՏԱՆ (ԱՄԱՌԱՆՈՑԻ) ՄԻ ՄԱՍԸ ՄՏՑՎՈՒՄ Է ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՖՈՆԴԻ ՄԵՋ:
ԱՅՍ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻ ԿԱՆՈՆԸ ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԱՅՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ԵՐԲ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԸ, ԱՄԱՌԱՆՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ:
ԱՅՍ ՀՈԴՎԱԾԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ, ԱՄԱՌԱՆՈՑԸ ԿԱՄ ԱՅԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ՎԵՐՑՆԵԼԻՍ ԴԱՏԱՐԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՆԱԽԿԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՊՐՈՂ ԱՆՁԱՆՑ ԶՐԿԵԼ ԱՅԴ ՏԱՆԸ (ԱՄԱՌԱՆՈՑՈՒՄ ԿԱՄ ԱՅԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ) ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ: ՍԱԿԱՅՆ ԵԹԵ ԱՅԴ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՉՈՒՆԵՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԻ ԱՅԼ ԲՆԱԿԱՐԱՆ, ԱՊԱ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԿԱՄ ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻՆ ՀԱՆՁՆՎԵԼ Է ՏՈՒՆԸ (ԱՄԱՌԱՆՈՑԸ, ԱՅԼ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ), ՊԵՏՔ Է ՆՐԱՆՑ ՏՐԱՄԱԴՐԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԻ ԱՅԼ ԲՆԱԿԱՐԱՆ:
***(27.10.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 113. ԱՆասունՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿԸ, ՈՐԸ ԿԱՐՈՂ Է ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ

ԱՆաՍՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՔԱՆԱԿԸ, ՈՐԸ ԿԱՐՈՂ Է ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ, ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:

### ՀՈԴՎԱԾ 114. Կոլտնտեսային ԾԽԻ ԱՆԴԱՄԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԿոլՏՆՏԵՍԱՅԻՆ ԾԽԻ ԱՆԴԱՄԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ՈՒ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՆՐԱ ՁԵՌՔ ԲԵՐԱԾ ԿԱՄ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԿԱՄ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԾԽԻՆ Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉՀԱՆՁՆԱԾ ԳՈՒՅՔԸ, ԿԱԶՄՈՒՄ Է ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԾԽԻ ԱՅԴ ԱՆԴԱՄԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:
ԿոլտնտԵՍԱՅԻՆ ԾԽԻ ԱՆԴԱՄ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԱՅՆ ԳՈՒՅՔԸ, ՈՐԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՐՈՂ Է ՄԻԱՅՆ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԾԽԻՆ ՊԱՏԿԱՆԵԼ:

### ՀՈԴՎԱԾ 115. Քաղաքացիներ ԱՅՆ ԳՈՒՅՔԸ, ՈՐԻ ՎՐԱ ՉԻ ԿԱՐՈՂ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾՎԵԼ

ՔաղաՔԱՑԻՆԵՐԻ ԱՅՆ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ, ՈՐԻ ՎՐԱ ՉԻ ԿԱՐՈՂ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾՎԵԼ, ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ:

### ՀՈԴՎԱԾ 116. ՏնայՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԱռԱՆՑ ՈՒՐԻՇԻ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄԱՆՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՈՂ ՏՆԱՅՆԱԳՈՐԾՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ՝ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԵԹԵ ՕՐԵՆՔՈՎ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ:

## Գ Լ ՈՒ Խ 12.

## *ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

### ՀՈԴՎԱԾ 117. ԸնդհԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

ԸՆդՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՊԱՏԿԱՆԵԼ ԵՐԿՈՒ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄ ԱՅԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԵՎ ՄՅՈՒՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿԱՄ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄԵԿ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿԱՄ ԱՅԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԵՎ ՄՅՈՒՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԿԱՄ ԵՐԿՈՒ ԿԱՄ ՄԻ ՔԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ:

ԸՆդհԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿՆԵՐ ԿԱՆ, ԱՅՆ Է՝ ԵՐԲ ՈՐՈՇՎԱԾ ԵՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ (ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ), ԿԱՄ ԵՐԲ ՈՐՈՇՎԱԾ ՉԵՆ ԲԱԺԻՆՆԵՐԸ (ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ):

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 118. ԲաԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ**

ԲԱԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ, ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՆՐԱ ԲՈԼՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ: ՏարԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՏԻՐԱՊԵՏՄԱՆ, ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՐՈՇՈՒՄ Է ԴԱՏԱՐԱՆԸ՝ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՑ ՈՐԵՎԷ ՄԵԿԻ ՀԱՅՑՈՎ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 118.[1] ՄիջկոլՏՆՏԵՍԱՅԻՆ, ՊԵՏԱԿԱՆ-ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ-ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔ ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ**

ՄիջկոԼՏՆՏԵՍԱՅԻՆ, ՊԵՏԱԿԱՆ-ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ-ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԱՅԴ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԵՐՔՈ, ՈՐՈՆՔ ՕՐԵՆՔՈՎ ՈՐՈՇՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ, ԻՐԵՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ, ՊԼԱՆԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆ ԳՈՒՅՔԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ, ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 119. ԲաԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՊԱՀԵԼՈՒ ԾԱԽՍԵՐԸ**

ԲաԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԻՐ ԲԱԺՆԻ ՀԱՄԵՄԱՏ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԵՐԻ, ԳԱՆՁՈՒՅԹՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆԸ ԵՎ ԱՅԼ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎԳՈՒՅՔԸ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ԵՎՊԱՀԵԼՈՒ ԾԱԽՍԵՐԻՆ:

**ՀՈԴՎԱԾ 120. ԲաԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԻ՝ ԻՐ ԲԱԺԻՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

ԲաԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՍՆԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԻՐ ԲԱԺԻՆԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՈՒՐԻՇ ԱՆՁԻ:

**ՀՈԴՎԱԾ 121. ԳՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

ԸՆդՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԸ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՆՁԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՎԱՃԱՌՎՈՂ ԲԱԺԻՆԸ ՆՈՒՅՆ ԳՆՈՎ, ՈՐՈՎ ԱՅՆ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է, ԵՎ ԱՅԼ ՀԱՎԱՍԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԳՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ, ԲԱՑԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՎԱՃԱՌՎԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԻՑ: ԲՆակԵԼԻ ՏՈՒՆԸ ԳՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵԹԵ ԴԱ ՉԻ ՀԱԿԱՍՈՒՄ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 107 ՀՈԴՎԱԾԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԻՐ ԲԱԺԻՆԸ ԿՈՂՄՆԱԿԻ ԱՆՁԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԻՐ ՄՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՑՆԵԼ ԲԱԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ, ՆՇԵԼՈՎ ԳԻՆԸ ԵՎ ՄՅՈՒՍ ԱՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՈՐՈՆՑՈՎ ԻՆՔԸ ՎԱՃԱՌՈՒՄ Է ԲԱԺԻՆԸ: ԵԹԵ ԲԱԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՏԱՍ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵԿ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ԻՍԿ ԱՅԼ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԱՍՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ԳՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՀՐԱԺԱՐՎԵՆ ԿԱՄ ՉԻՐԱԿԱՆԱՑՆԵՆ ԱՅԴ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԱՊԱ ՎԱՃԱՌՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԻՐ ԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԱՄԵՆ ՄԻ ԱՅԼ ԱՆՁԻ:

ԳՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՄԱՄԲ ՎԱՃԱՌՔ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՄԱՍՆԱԿԻՑԸ ԿԱՐՈՂ Է ԵՐԵՔ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՏԱՐԱՆԻՆ ԴԻՄԵԼ ԳՆՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՐ ՎՐԱ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՀԱՅՑՈՎ:

**ՀՈԴՎԱԾ**

**122. ԲաԺՆԻ ԱՆՋԱՏՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՅՔԻՑ**

ԲաԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԻՐ ԲԱԺՆԻ ԱՆՋԱՏՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՅՔԻՑ:

Եթե անջատման ԵՂԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿԱՅԱՑՎԵԼ, ԱՊԱ ԱՄԵՆ ՄԻ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՅՑՈՎ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆՎՈՒՄ Է ՆԱՏՈՒՐԱՅՈՎ, ԵԹԵ ԴԱ ՀՆԱՐԱՎՈՐ Է ԱՆԵԼ ԱՌԱՆՑ ԷԱԿԱՆ ՎՆԱՍ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԳՈՒՅՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ. ՀԱԿԱՌԱԿ ԴԵՊՔՈՒՄ ԲԱԺԱՆՎՈՂ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՆ ՍՏԱՆՈՒՄ Է ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ:

**ՀՈԴՎԱԾ 123. ԲռՆաԳԱՆՁՈՒՄՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՅՔԻ ՄԵՋ ՈՒՆԵՑԱԾ ԲԱԺՆԻ ՎՐԱ ՏԱՐԱԾԵԼԸ**

ԲաԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԻ ՊԱՐՏԱՏԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԻՐ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԲԱԺՆԻ ԱՆՋԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ՝ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄԸ ՆՐԱ ՎՐԱ ՏԱՐԱԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

**ՀՈԴՎԱԾ 124. ՊետուԹՅԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԱԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ**

ՊետուԹՅԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԲԱԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՀԱՇՎԱԾ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՆԹԱԿԱ Է ԴԱԴԱՐԵՑՄԱՆ՝

1) ԳՈՒՅՔԸ ՆԱՏՈՒՐԱՅՈՎ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ, ԵԹԵ ԱՅԴ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է.

2) ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺԻՆՆԵՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ.

3) ՊԵՏՈՒԹՅԱՆԸ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺԻՆԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ.

4) ԱՄԲՈՂՋ ԳՈՒՅՔԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԵՒ ՍՏԱՑՎԱԾ ԳՈՒՄԱՐԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՒ ՆՐԱՆՑ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԲԱՇԽԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ:

Նշված ԵՂԱՆԱԿՆԵՐԻՑ ՈՐԵՒԷ ՄԵԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՑՈՒ ԵՒ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ, ԻՍԿ ԱՅԴՊԻՍԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ԴԱՏԱՐԱՆՈՎ:

Պետական ՄԱՐՄՆԻ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐ ԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԳՆԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ՏԱՆ ԱՅԴ ՄԱՍՈՒՄ ՎԱՐՁԱԿԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ԲՆԱԿՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՐԵՆ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 121 ՀՈԴՎԱԾԻ ԵՐԿՐՈՐԴ ՈՒ ԵՐՐՈՐԴ ՄԱՍԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄՈՎ, ԻՍԿ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՅԴ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԿԱՄ ԱՅՆ ՉԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՅՈՒՍ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ:

**ՀՈԴՎԱԾ 125. ԲաԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ**

ԵԹԵ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՏԱՆ ՄԵԿՈՒՍԻ ՄԱՍԵՐԻՑ (ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻՑ, ՍԵՆՅԱԿՆԵՐԻՑ) ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՎԵՐԱՑՎԱԾ Է ԵՒ ԳՐԱՆՑՎԱԾ Է ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՈՒՄ, ԱՊԱ ԱՅԴ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ Է ԱՅՆ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ, ՈՐԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԲԱԺԻՆ ՁԵՌՔ ԿԲԵՐԻ ԱՅԴ ՏԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ:

**ՀՈԴՎԱԾ 126. ԸնդհաՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԱՆ ՎԵՐՆԱՇԵՆՔ, ԿՑԱՇԵՆՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԿԱՄ ՏՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ**

Եթե ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱԺՆԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑԸ ՄՅՈՒՍ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԵՒ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԿՑԱՇԵՆՔ, ՎԵՐՆԱՇԵՆՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԿԱՄ ՏՈՒՆԸ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԻՐ ՀԱՇՎԻՆ ԸՆԴԼԱՅՆԻ ՏԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆԸ, ԱՊԱ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՐԵՆ ՓՈՓՈԽՎԵՆ ՏԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՒ ՏԱՆ ՍԵՆՅԱԿՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ:

**ՀՈԴՎԱԾ 127. ԿոլՏՆՏԵՍԱՅԻՆ ԾԽԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ԿոլտՆՏԵՍԱՅԻՆ ԾԽԻ ԳՈՒՅՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 117 ՀՈԴՎԱԾ):

ԿոլՏՆՏԵՍԱՅԻՆ ԾՈՒԽԸ ԿԱՐՈՂ Է ԻՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ

որպես սեփականություն ունենալ օժանդակ տնտեսություն, բնակելի տուն, մթերատու անասուններ, թռչուններ եւ գյուղատնտեսական մանր ինվենտար՝ կոլտնտեսության կանոնադրությանը համապատասխան:

Բացի դրանից, կոլտնտեսային ծխին են պատկանում ծխի անդամների կողմից նրան ի սեփականություն հանձնված իրենց աշխատանքային այն եկամուտները, որ նրանք ստացել են կոլտնտեսության հանրային տնտեսությանը մասնակցելու համար, կամ նրանց կողմից ծխին ի սեփականություն հանձնված այլ գույք, ինչպես նաեւ ընդհանուր միջոցների հաշվին ձեռք բերված տնային գործածության եւ անձնական սպառման առարկաները:

### Հոդված 128. Կոլտնտեսային ծխի գույքի տիրապետումը, օգտագործումը եւ տնօրինումը

Կոլտնտեսային ծխի գույքի տիրապետումը, օգտագործումը, տնօրինումը իրականացվում է նրա բոլոր անդամների համաձայնությամբ:

Ծխի գույքի տիրապետման, օգտագործման կամ տնօրինման առթիվ ծագող վեճը լուծում է դատարանը ծխի տասնվեց տարեկան դարձած ամեն մի անդամի հայցով:

Ծխի տասնհինգից մինչեւ տասնվեց տարեկան անդամները այդպիսի հայցեր հարուցում են իրենց ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուների համաձայնությամբ, իսկ ծխի տասնհիգ տարեկան չդարձած անդամների օգտին հայցեր հարուցում են նրանց ծնողները, որդեգրողները կամ խնամակալները:

### Հոդված 129. Կոլտնտեսային ծխի պատասխանատվությունը նրա անդամների պարտավորություններով

Կոլտնտեսային ծխի գլխավորի կնքված գործարքների համար կոլտնտեսային ծուխը իր գույքով պատասխանատու է, եթե գործի հանգամանքներից չի բխում, որ գործարքը կնքված է ծխի գլխավորի անձնական շահերի օգտին:

Ծխի մյուս անդամները իրենց պարտավորություններով պատասխանատու են իրենց անձնական գույքով, ինչպես նաեւ ծխի գույքում ունեցած իրենց բաժնով (սույն օրենսգրքի 130 հոդված), եթե գործի հանգամանքներից չի բխում, որ գործարքը կնքված է ծխի շահերի օգտին:

Կոլտնտեսային ծխի անդամի հանցագործությամբ պատճառված վնասը հատուցելու համար կատարվող բռնագանձումը կարող է ծխի գույքի վրա տարածվել, եթե դատարանի դատավճռով հաստատվել է, որ այդ գույքը ստացվել է հանցագործ ճանապարհներով ձեռք բերված միջոցներով կամ ավելացել է այդ միջոցների հաշվին:

Կոլտնտեսային ծխի այն գույքի ցանկը, որի վրա պարտատերերի պահանջների դիմաց բռնագանձում չի կարող տարածվել, սահմանվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

### Հոդված 130. Բաժնի որոշումը ծխի գույքի մեջ

Կոլտնտեսային ծխի անդամի բաժինը ծխի գույքի մեջ որոշվում է՝

երբ նա դուրս է գալիս ծխի կազմից առանց նոր ծուխ կազմելու (բաժին հանելը).

երբ մեկ ծխից կազմվում են երկու եւ ավելի ծխեր (բաժանվելը).

երբ բռնագանձումը տարածվում է ըստ ծխի անդամի անձնական պարտավորությունների:

Ծխի անդամի բաժնի չափը որոշվում է ելնելով ծխի բոլոր անդամների բաժինների հավասարությունից, ներառյալ չափահաս չդարձածներին ու անաշխատունակներին:

Ծխի աշխատունակ անդամի բաժինը ծխի գույքի մեջ կարող է պակասեցվել, եթե նա կարճատեւ է եղել ծխի կազմում կամ իր աշխատանքով կամ միջոցներով աննշան մասնակցություն է ունեցել ծխի տնտեսությանը:

### Հոդված 131. Կոլտնտեսային ծխից բաժին հանելը

Երբ կոլտնտեսային ծխի մեկ կամ մի քանի անդամներ դուրս են գալիս նրա կազմից, ապա նատուրայով նրանց բաժին է հանվում այն հաշվով, որ ծուխը չզրկվի իր օժանդակ տնտեսությունը վարելու համար անհրաժեշտ շինություններից, անասուններից ու գյուղատնտեսական ինվենտարից:

Եթե անհնար է ծխի անդամին հասանելիք գույքի բաժինը նատուրայով տալը, ապա նրա արժեքը վճարվում է փողով:

Ծխի կազմից դուրս գալիս ծխի գույքից բաժին հանելու պահանջի իրավունք ունեն ծխի տասնվեց տարեկան դարձած անդամները: Ծխի տասնհինգից մինչեւ տասնվեց տարեկան անդամները բաժին հանելու պահանջ կարող են դնել իրենց ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուների համաձայնությամբ: Ծխի տասնհինգ տարեկան չդարձած անդամների շահերի օգտին բաժին հանելու պահանջ կարող են դնել նրանց

ԾՆՈՂՆԵՐԸ, ՈՐԴԵԳՐՈՂՆԵՐԸ ԿԱՄ ԽՆԱՄԱԿԱԼՆԵՐԸ:

**ՀՈԴՎԱԾ 132. ԿոլՏՆՏԵՍԱՅԻՆ ԾԽԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ**

ԿոլտՆՏԵՍԱՅԻՆ ԾԽԻ ԲԱԺԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆՐԱ ԳՈՒՅՔԸ ՆՈՐ ԿԱԶՄՎՈՂ ԾԽԵՐԻ ՄԻՋԵՒ ԲԱԺԱՆՎՈՒՄ Է ՆՐԱՆՑ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ԸՆԴ ՈՐՈՒՄ ՀԱՇՎԻ ԵՆ ԱՌՆՎՈՒՄ ԾԽԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԸ:

ԿոլՏՆՏԵՍԱՅԻՆ ԾԽԻ ԲԱԺԱՆՈՒՄ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ԾԽԻ ԱՅՆ ՉԱՓԱՀԱՍ ԱՆԴԱՄՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՏՎՅԱԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՆ:

**ՀՈԴՎԱԾ 133. ԿոլտնտեՍԱՅԻՆ ԾԽԻ ԳՈՒՅՔԻ ՄԵՋ ԲԱԺՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿՈՐՑՆԵԼԸ**

ԿոլտՆՏԵՍԱՅԻՆ ԾԽԻ ԱՇԽԱՏՈՒՆԱԿ ԱՆԴԱՄԸ ԾԽԻ ԳՈՒՅՔՈՒՄ ԲԱԺՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿՈՐՑՆՈՒՄ Է, ԵԹԵ ՆԱ ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՆԸՆԴՀԱՏ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԾԽԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԵԼՈՒՆ: Այս ԿԱՆՈՆԸ ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ, ԵԹԵ ԾԽԻ ԱՆԴԱՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՐԵԼՈՒՆ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉՎԵԼՈՒ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԿԱՄ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ:

**ՀՈԴՎԱԾ 134. ԿոլտՆՏԵՍԱՅԻՆ ԾԽԻ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԾՈՒԽԸ ԴԱԴԱՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ**

ԿոլտՆՏԵՍԱՅԻՆ ԾԽԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ԵՒ ԾԽԻ ԴԱԴԱՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ ՄՆԱՑԱԾ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 130 ԵՒ 133 ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ:

**ՀՈԴՎԱԾ 135. Մենատնտես ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԾԽԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ՄենաՏՆՏԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԾԽԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ, ԲԱՑԻ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 127 ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԳՈՒՅՔԻՑ, ԲԱՆՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ՈՒ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՎԵՆՏԱՐ, ՈՐՈՆՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԾԽԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ՝ ԱՌԱՆՑ ՈՒՐԻՇԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ:

ՄԵՆԱՏՆՏԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԾԽԻ ԱՌԱՆՁԻՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿԱՐՈՂ ԼԻՆԵԼ ԱՅՍ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՈՒՄ ՀԻՇՎԱԾ ԳՈՒՅՔԸ:

ՄենաՏՆՏԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԾԽԻ՝ ԱՅՍ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 117 ՀՈԴՎԱԾ):

ՄԵՆԱՏՆՏԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԾԽԻ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՐԵՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 128-133 ՀՈԴՎԱԾՆԵՐԸ:

## Գ Լ ՈՒ Խ 13.

## *ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐՈՒՄԸ*

**ՀՈԴՎԱԾ 136. ՊայմԱՆԱԳՐՈՎ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՊԱՀԸ**

ՊայմանագրՈՎ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ (ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ) ԾԱԳՈՒՄ Է ԻՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՀԻՑ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՕՐԵՆՔՈՎ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ:

ԵԹԵ ԻՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՆԹԱԿԱ Է ԳՐԱՆՑՄԱՆ, ԱՊԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԾԱԳՈՒՄ Է ԳՐԱՆՑՄԱՆ ՊԱՀԻՑ:

**(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)**

**ՀՈԴՎԱԾ 137. ԻՐԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ**

Հանձնում Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԻՐԵՐԸ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՆ ՀԱՆՁՆԵԼԸ, ԻՆՉՊԵՍ ԵՒ ԱՌԱՆՑ ՏԵՂ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՎԱԾ ԻՐԵՐԸ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՆ ՈՒՂԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԵՒ ՓՈՍՏԻՆ ՀԱՆՁՆԵԼԸ: Իրերի ՀԱՆՁՆՄԱՆԸ ՀԱՎԱՍԱՐԵՑՎՈՒՄ Է ՆԱՎԱԲԵՌՆԱԳՐԻ ԿԱՄ ԻՐԵՐԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ:

**ՀՈԴՎԱԾ 138. ԱռարկԱՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼ ՄԻԱՅՆ ՀԱՏՈՒԿ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ**

Այն ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ, ՈՐՈՆՔ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՈՒՆԵՑԱԾ ԻՐԵՆՑ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ, ՊԵՏԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ ԿԱՄ ԱՅԼ ՀԻՄՔԵՐՈՎ ԿԱՐՈՂ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼ ՄԻԱՅՆ ՀԱՏՈՒԿ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ (ԶԵՆՔ, ԹՌՉՈՂ ԱՊԱՐԱՏՆԵՐ, ԽԻՍՏ ՆԵՐԳՈՐԾՈՂ ԹՈՒՅՆԵՐ ԵՒ ԱՅԼՆ), ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԱՅԴ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՈՐՈՇՎՈՒՄ ԵՆ ԽՍՀ Միության ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:

### ՀՈԴՎԱԾ 139. Հատուկ ԿԱՐԳՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԸ (ՎԱԼՅՈՒՏԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐ)

ՎաԼՅՈՒՏԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ` ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՎԱԼՅՈՒՏԱՆ (ԹՂԹԱԴՐԱՄՆԵՐ, ԴՐԱՄԱՆԻՇՆԵՐ, ՄԵՏԱՂԱԴՐԱՄՆԵՐ). ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՎԱԼՅՈՒՏԱՅՈՎ ՎՃԱՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ (ՉԵԿԵՐ, ՄՈՒՐՀԱԿՆԵՐ, ԱԿՐԵԴԻՏԻՎՆԵՐ ԵՒ ԱՅԼՆ) ԵՒ ՖՈՆԴԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ (ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐ, ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐ ԵՒ ԱՅԼՆ) ԲԱՆԿԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՌՈՒԲԼԻՆԵՐՈՎ (ՉԵԿԵՐ ԵՒ ԱՅԼՆ), ՈՐՈՆՔ ՁԵՌՔ ԵՆ ԲԵՐՎՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՎԱԼՅՈՒՏԱՅԻ ԴԻՄԱՑ` ԴՐԱՆՔ ԱՅԴՊԻՍԻ ՎԱԼՅՈՒՏԱՅԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ. ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԸ` ՈՍԿԻ, ԱՐԾԱԹ, ՊԼԱՏԻՆ ԵՒ ՊԼԱՏԻՆԱՅԻՆ ԽՄԲԻ ՄԵՏԱՂՆԵՐ (ՊԱԼԼԱԴԻՈՒՄ, ՊՐԻԴԻՈՒՄ, ՌԱԴԻՈՒՄ, ՌՈՒԹԵՆԻՈՒՄ ԵՒ ՕՍՄԻՈՒՄ) ԱՄԵՆ ՄԻ ՏԵՍՔՈՎ ՈՒ ՎԻՃԱԿՈՎ ԵՒ ԲՆԱԿԱՆ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՔԱՐԵՐՆ ԱՆՄՇԱԿ ՈՒ ՄՇԱԿՎԱԾ ՁԵՒՈՎ (ԱԼՄԱՍՏ, ԳՈՀԱՐ, ՍՈՒՏԱԿ, ԶՄՐՈՒԽՏ, ՇԱՓՅՈՒՂԱ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ), ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՅԴ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՈՒ ՔԱՐԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԻՐԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԱՅԴՊԻՍԻ ԻՐԵՐԻ ՋԱՐԴՈՆԻ, ԿԱՐՈՂ ԵՆ ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼ ՄԻԱՅՆ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԵՒ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ:
***(27.07.77. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 140. ՊատԱՀԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԸ

ՕտարՎԱԾ ԻՐԵՐԻ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ ԿԱՄ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՓՉԱՑՄԱՆ ՌԻՍԿԸ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՆ Է ԱՆՑՆՈՒՄ ՆՐԱ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ՀԵՏ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ:

ԵթԵ ՕՏԱՐՈՂԸ ՈՒՇԱՑՐԵԼ Է ԻՐԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԿԱՄ ՁԵՌՔ ԲԵՐՈՂՆ ՈՒՇԱՑՐԵԼ Է ԴՐԱՆՑ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ԱՊԱ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ ԿԱՄ ՊԱՏԱՀԱԿԱՆ ՓՉԱՑՄԱՆ ՌԻՍԿԸ ԿՐՈՒՄ Է ՈՒՇԱՑՆՈՂ ԿՈՂՄԸ:

### ՀՈԴՎԱԾ 141. Գլխավոր ԻՐԸ ԵՒ ՊԱՏԿԱՆԵԼԻՔԸ

ՊատկԱՆԵԼԻՔԸ, ԱՅՍԻՆՔՆ ԱՅՆ ԻՐԸ, ՈՐԻ ՆՊԱՏԱԿՆ Է ԾԱՌԱՅԵԼ ԳԼԽԱՎՈՐ ԻՐԻՆ ԵՒ ՈՐԸ ԿԱՊՎԱԾ Է ՆՐԱ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ, ՀԵՏԵՒՈՒՄ Է ԳԼԽԱՎՈՐ ԻՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՆ, ԵԹԵ ՕՐԵՆՔՈՎ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ:

### ՀՈԴՎԱԾ 142. ՊտուՂՆԵՐԻ ՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՊտուՂՆԵՐԸ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՃԸ, ԻՐԻ ՏՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՆ ԻՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՕՐԵՆՔՈՎ ԿԱՄ ԱՅԼ ԱՆՁԻ ՀԵՏ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿՆՔԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ:

### ՀՈԴՎԱԾ 143. ՏուՆԸ ԱՆՏՆՏԵՍՈՐԵՆ ՊԱՀԵԼԸ

ԵԹԵ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՆՏՆՏԵՍՎԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ Է ՑՈՒՅՑ ՏԱԼԻՍ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՆԸ, ԹՈՒՅԼ ՏԱԼՈՎ ՆՐԱ ԱՎԵՐՈՒՄԸ, ԱՊԱ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆ ԿԱՐՈՂ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԺԱՄԿԵՏ ՏԱԼ ՏՈՒՆԸ ՆՈՐՈԳԵԼՈՒ ՀԱՄԱՐ: ԵթԵ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԱՌԱՆՑ ՀԱՐԳԵԼԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՈԳՈՒՄ ՉԿԱՏԱՐԻ, ԱՊԱ ԴԱՏԱՐԱՆԸ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՅՑՈՎ ԿԱՐՈՂ Է ԱՆՏՆՏԵՍՈՐԵՆ ՊԱՀՎՈՂ ՏՈՒՆԸ ԱՆՀԱՏՈՒՑ ՎԵՐՑՆԵԼ ԵՒ ՀԱՆՁՆԵԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՖՈՆԴԻՆ:

### ՀՈԴՎԱԾ 144. ԿուլՏՈՒՐԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐՆ ԱՆՏՆՏԵՍՈՐԵՆ ՊԱՀԵԼԸ

ԵԹԵ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԱՆՏՆՏԵՍՎԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ Է ՑՈՒՅԱԲԵՐՈՒՄ ԻՐԵՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՄԱԿԱՆ, ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԶԳԱԼԻ ԱՐԺԵՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ, ԱՊԱ ԱՅՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԵՋ Է ՄՏՆՈՒՄ ԱՅԴ ՏԵՍԱԿ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ ԵՆ, ՈՐՊԵՍԶԻ ՆԱ ԴԱԴԱՐԵՑՆԻ ԱՆՏՆՏԵՍՎԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԱՅԴ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ: ԵԹԵ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ՉԿԱՏԱՐԻ ԱՅԴ ՊԱՀԱՆՋԸ, ԱՊԱ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՐԵՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅՑՈՎ ԴԱՏԱՐԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՎԵՐՑՆԵԼ ԱՅԴ ԳՈՒՅՔԸ, ՈՐԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ Է ՎԵՐՑՎԱԾ ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԸ՝ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՈՐՈՇՎԱԾ, ԻՍԿ ՎԵՃ ԾԱԳԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ԴԱՏԱՐԱՆՈՎ ՈՐՈՇՎԱԾ ՉԱՓՈՎ:

ԱՆհԵՏԱՁԳԵԼԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԸ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅՑԸ ԿԱՐՈՂ Է ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ ԱՌԱՆՑ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՄԱՆ:

## ՀՈԴՎԱԾ 145. ՏիրաԶՈՒՐԿ ԳՈՒՅՔ

ԱՅՆ ԳՈՒՅՔԸ, ՈՐԸ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՉՈՒՆԻ ԿԱՄ ՈՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՆ ԱՆՀԱՅՏ Է (ՏԻՐԱԶՈՒՐԿ ԳՈՒՅՔ), ԴԱՌՆՈՒՄ Է ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌՈՎ, ՈՐ ԿԱՅԱՑՎՈՒՄ Է ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԴԻՄՈՒՄԸ ՏՐՎՈՒՄ Է ԳՈՒՅՔԸ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ:

ՏիրաԶՈՒՐԿ ԳՈՒՅՔԸ, ՈՐԸ ՊԱՏԿԱՆԵԼԻՍ Է ԵՂԵԼ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԾԽԻՆ, ԴԱՌՆՈՒՄ Է ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃՌՈՎ, ՈՐ ԿԱՅԱՑՎՈՒՄ Է ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: Դիմումը ՏՐՎՈՒՄ Է ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ (ԱՎԱՆԱՅԻՆ) ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԿՈՄԻ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԸ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ:

ՏիրԱԶՈՒՐԿ ԳՈՒՅՔԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՈՒ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ:

## ՀՈԴՎԱԾ 146. ԳտՆՎԱԾ ԻՐ

ԿՈՐԱԾ ԻՐ ԳՏՆՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՅԴ ՄԱՍԻՆ ԻՍԿՈՒՅՆ ՀԱՅՏՆԵԼ ԻՐԸ ԿՈՐՑՆՈՂ ԱՆՁԻՆ ԵՒ ՆՐԱՆ ՀԱՆՁՆԵԼ ԳՏԱԾ ԻՐԸ ԿԱՄ ԳՏԱԾ ԻՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏՆԵԼ ԵՒ ԻՐԸ ՀԱՆՁՆԵԼ ՄԻԼԻՑԻԱՅԻՆ ԿԱՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ (ԱՎԱՆԱՅԻՆ) ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻՆ, ԻՍԿ ԵԹԵ ԻՐԸ ԳՏՆՎԱԾ Է ՀԻՄՆԱՐԿՈՒՄ, ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՄ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ՝ ԱՅՆ ՀԱՆՁՆԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՅԻՆ:

## ՀՈԴՎԱԾ 147. ԳտնվաԾ ԻՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Այն ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱՆ, ՈՐԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ Է ԳՏՆՎԱԾ ԻՐԸ, ԵԹԵ ԵՐԿՈՒ ՇԱԲԱԹՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՉՀԱՅՏԱԲԵՐՎԻ ԻՐԸ ԿՈՐՑՐԱԾ ԱՆՁԸ, ԻՐԸ ՀԱՆՁՆՈՒՄ Է ՄԻԼԻՑԻԱՅԻՆ ԿԱՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ (ԱՎԱՆԱՅԻՆ) ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻՆ: ՏրաՆՍՊՈՐՏԻ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԳՏՆՎԱԾ ԻՐԵՐԸ ՊԱՀՈՒՄ ԵՒ ԻՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ:

Միլիցիան ԿԱՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ (ԱՎԱՆԱՅԻՆ) ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆ ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ ԻՐԵՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԳՏՆՎԱԾ ԻՐԵՐԸ ՊԱՀԵԼ ՎԵՑ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: Հիշյալ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՈՒՄ ԻՐԸ ԿՈՐՑՐԱԾ ԱՆՁԻ ՀԱՅՏԱԲԵՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՒՄ Է ՆՐԱՆ: Եթե ՀԻՇՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՈՒՄ ԱՅԴ ԱՆՁԸ ՉՀԱՅՏԱԲԵՐՎԻ, ԱՊԱ ԻՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԱՆՑՆՈՒՄ Է ՊԵՏՈՒԹՅԱՆԸ Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ:

## ՀՈԴՎԱԾ 148. ԻրԸ ԳՏՆՈՂԻ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Այն ԱՆՁԸ, ՈՐՆ ԳՏԵԼ Է ԵՒ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 146 ՀՈԴՎԱԾ) ՎԵՐԱԴԱՐՁՐԵԼ Է ԻՐԸ ԿՈՐՑՐԱԾ ԱՆՁԻՆ, ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԻՐԸ ԿՈՐՑՐԱԾ ԱՆՁԻՑ, ԻՍԿ ԻՐԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՌՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԸ ՊԱՀԵԼՈՒ ԵՒ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ:

## ՀՈԴՎԱԾ 149. ԱռաՆՑ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԹՈՂՆՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ

ԱռաՆՑ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԹՈՂՆՎԱԾ ԿԱՄ ՄՈԼՈՐՎԱԾ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ԳՏՆՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՅԴ ՄԱՍԻՆ ԱՆՀԱՊԱՂ ՀԱՂՈՐԴԵԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ ՈՒ ՆՐԱՆ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԳՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՐԵՔ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՂՈՐԴԵԼ ՄԻԼԻՑԻԱՅԻՆ ԿԱՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ (ԱՎԱՆԱՅԻՆ) ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻՆ:

Միլիցիան ԿԱՄ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ (ԱՎԱՆԱՅԻՆ) ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ ԳՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵՒ ՈՐՈՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԿՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՄԲ, ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՆ ՀԱՆՁՆՈՒՄ ՄՈՏԱԿԱ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԱՄ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ, ՈՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՆ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԱՆԱՍՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ:

ԵԹԵ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ՍՈՎԽՈԶԻՆ ԿԱՄ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆՎԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՎԵՑ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԻ ԲԱՆՈՂ ԿԱՄ ԽՈՇՈՐ ԵՂՋԵՐԱՎՈՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ (ՈՒ ՆՐԱՆՑ ՄԱՏՂԱՇՆԵՐԻ) ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ, ԻՍԿ ԵՐԵՔ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ՝ ՄԱՆՐ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ (ՈՒ ՆՐԱՆՑ ՄԱՏՂԱՇՆԵՐԻ) ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ, ԱՊԱ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՒՄ ԵՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԸ, ՈՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՍՈՎԽՈԶԻՆ ԿԱՄ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՀԱՏՈՒՑԵԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ՊԱՀԵԼՈՒ ԾԱԽՍԵՐԸ, ԴՈՒՐՍ ԳԱԼՈՎ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ՕԳՈՒՏՆԵՐԸ:

Եթե ԱՅՍ ՀՈԴՎԱԾԻ ԵՐՐՈՐԴ ՄԱՍՈՒՄ ՆՇՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ՉՀԱՅՏԱԲԵՐՎԻ, ԱՊԱ ՆԱ ԿՈՐՑՆՈՒՄ Է ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՅԴ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ: ԱՅԴ ԴԵՊՔՈՒՄ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՏՎՅԱԼ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԻՍԿ ՍՈՎԽՈԶՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՄՏՑՎՈՒՄ ԱՅՆ ՍՈՎԽՈԶԻ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ, ՈՐՏԵՂ ՆՐԱՆՔ ՊԱՀՎԵԼ ԵՆ:

### ՀՈԴՎԱԾ 150. Գանձ

Գանձը ԱՅՍԻՆՔՆ ՀՈՂՈՒՄ ԹԱՂՎԱԾ ԿԱՄ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՈՎ ԹԱՔՑՎԱԾ ՓՈՂԸ (ՈՍԿԵ ԵՒ ԱՐԾԱԹԵ ԴՐԱՄՆԵՐ, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵՒ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՎԱԼՅՈՒՏԱ) ԿԱՄ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՌԱՐԿԱՆԵՐ (ԹԱՆԿԱԳԻՆ ՔԱՐԵՐ, ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐ, ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐ, ՇԻՆՎԱԾՔՆԵՐ ԵՒ ՋԱՐԴՈՆ), ՈՐՈՆՑ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ ԿԱՄ ՕՐԵՆՔՈՎ ՆԱ ԿՈՐՑՐԵԼ Է ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ, ԴԱՌՆՈՒՄ Է ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԵՒ ԳՏՆՈՂԸ ԱՅՆ ՊԵՏՔ Է ՀԱՆՁՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ:

Այն ԱՆՁԻՆ, ՈՐԸ ԳՏԵԼ ԵՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ Է ՀԱՆՁՆԵԼ ԳԱՆՁԸ, ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ Է ՏՐՎՈՒՄ ՀԱՆՁՆՎԱԾ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԳՆԻ ՔՍԱՆՀԻՆԳ ՏՈԿՈՍԻ ՉԱՓՈՎ, ԵԹԵ ՄԻԱՅՆ ԱՅԴ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ԿԱՄ ՈՐՈՆՈՒՄՆԵՐԸ ՉԵՆ ՄՏԵԼ ԱՅԴ ԱՆՁԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ:

### ՀՈԴՎԱԾ 151. Ռեկվիզիցիա ԵՒ ԲՌՆԱԳՐԱՎՈՒՄ

ՊետԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՀԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ, ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՎՃԱՐՄԱՄԲ ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԻՑ ՎԵՐՑՆԵԼԸ (ՌԵԿՎԻԶԻՑԻԱ), ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՐՊԵՍ ՍԱՆԿՑԻԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՎԵՐՑՆԵԼԸ (ԲՌՆԱԳՐԱՎՈՒՄ) ԹՈՒՅԼ ԵՆ ՏՐՎՈՒՄ ԽՍՀ Միության ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՈՒ ԿԱՐԳՈՎ ՄԻԱՅՆ:

### ՀՈԴՎԱԾ 152. Թանկարժեք ՄԵՏԱՂՆԵՐ ԵՒ ԱԼՄԱՍՏ ՎԵՐՑՆԵԼԸ

ՔննչԱԿԱՆ ԿԱՄ ԴԱՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ ՎԵՐՑՎԱԾ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻ (ՈՍԿՈՒ, ՊԼԱՏԻՆԻ, ԱՐԾԱԹԻ) ՁՈՒԼԱԿՏՈՐՆԵՐԻ, ՄԱՆՐԱՀԱՆՔԻ, ԲՆԱԿՏՈՐՆԵՐԻ, ԿԻՍԱՖԱԲՐԻԿԱՏՆԵՐԻ ԵՒ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՈՒ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՇԻՆՎԱԾՔՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԱԼՄԱՍՏԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ, ԵԹԵ ՆՐԱՆՔ ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ ԵՆ ԱՌԱՆՑ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳՐԱՎՄԱՆ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՅԱՑՎԵԼ Է ԱՐԴԱՐԱՑՄԱՆ ԴԱՏԱՎՃԻՌ ԿԱՄ ԳՈՐԾԸ ԿԱՐՃՎԵԼ Է, ՎՃԱՐՎՈՒՄ Է ՎԵՐՑՎԱԾ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԳԻՆԸ, ԻՍԿ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՀԱՆՁՆՎՈՒՄ ԵՆ ԽՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ՖՈՆԴԻՆ:

## Գ Լ ՈՒ Խ 14.

## ***ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ***

### ՀՈԴՎԱԾ 153. Սեփականատիրոջ ԿՈՂՄԻՑ ԳՈՒՅՔԸ ՈՒՐԻՇԻ ԱՊՕՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՏ ՊԱՀԱՆՋԵԼԸ

ՍեփԱԿԱՆԱՏԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՈՒՐԻՇԻ ԱՊՕՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՏ ՊԱՀԱՆՋԵԼՈՎ ԻՐ ԳՈՒՅՔԸ:

### ՀՈԴՎԱԾ 154. Բարեխիղճ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՑ ԳՈՒՅՔԸ ԵՏ ՊԱՀԱՆՋԵԼԸ

Եթե ԳՈՒՅՔԸ ՎՃԱՐՈՎ ՁԵՌՔ Է ԲԵՐՎԵԼ ԱՅԴ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՑ, ՈՐԻ ՄԱՍԻՆ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԸ ՉԻ ԻՄԱՑԵԼ ԵՒ ՊԱՐՏԱՎՈՐ ՉԵՐ ԻՄԱՆԱԼ (ԲԱՐԵԽԻՂՃ ՁԵՌՔ ԲԵՐՈՂ), ԱՊԱ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՑ ՏՎՅԱԼ ԳՈՒՅՔԸ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԻԱՅՆ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՈՒՅՔԸ ԿՈՐՑՐԵԼ Է ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԿԱՄ ԱՅՆ ԱՆՁԸ, ՈՐԻՆ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ ԱՅԴ ԳՈՒՅՔԸ ՀԱՆՁՆՎԱԾ Է ԵՂԵԼ Ի ՏԻՐԱՊԵՏՈՒՄ, ԿԱՄ ՀԱՓՇՏԱԿՎԱԾ Է ԵՂԵԼ ԴՐԱՆՑԻՑ ՄԵԿԻ ԿԱՄ ՄՅՈՒՍԻ ՄՈՏԻՑ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ

ԴՈՒՐՍ Է ԵԿԵԼ ԱՅԼ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ՝ ԱՆԿԱԽ ՆՐԱՆՑ ԿԱՄՔԻՑ:

ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ԳՈՒՅՔԸ ԵՏ ՊԱՀԱՆՋԵԼ ԱՅՍ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՋԻՆ ՄԱՍՈՒՄ ՆՇՎԱԾ ՀԻՄՔԵՐՈՎ, ԵԹԵ ԳՈՒՅՔԸ ՎԱՃԱՌՎԱԾ Է ԵՂԵԼ ԴԱՏԱԿԱՆ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

Եթե ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ Է ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼ ԱՅՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՑ, ԱՊԱ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՅԴ ԳՈՒՅՔԸ ԵՏ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԲՈԼՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ:

### ՀՈԴՎԱԾ 155. ԱպօրիՆԱԲԱՐ ՕՏԱՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՏ ՊԱՀԱՆՋԵԼԸ

ՊետԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ԱՅԼ ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԵՒ ՄՅՈՒՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՅՔԸ, ՈՐԸ ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ՕՏԱՐՎԵԼ Է ՈՐԵՒԷ ԵՂԱՆԱԿՈՎ, ԿԱՐՈՂ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԵՏ ՊԱՀԱՆՋՎԵԼ ԱՄԵՆ ՄԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՑ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 156. ՓողԸ ԵՒ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ ԵՏ ՊԱՀԱՆՋԵԼԸ

ՓՈՂԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՆԵՐԿԱՅՉԱԿԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԵՏ ՊԱՀԱՆՋՎԵԼ ԲԱՐԵԽԻՂՃ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՑ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 154 ՀՈԴՎԱԾ):

### ՀՈԴՎԱԾ 157. ՀաշՎԱՐԿՆԵՐԸ՝ ԱՊՕՐԻՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԻՐԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼԻՍ

ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 153 ՀՈԴՎԱԾԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԳՈՒՅՔԸ ԵՏ ՊԱՀԱՆՋԵԼԻՍ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՅՆ ԱՆՁԻՑ, ՈՐԸ ԳԻՏԵՐ ԿԱՄ ՊԱՐՏԱՎՈՐ ԷՐ ԳԻՏԵՆԱԼ, ՈՐ ԻՐ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՊՕՐԻՆԻ Է (ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՏԻՐԱՊԵՏՈՂ), ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ԿԱՄ ՀԱՏՈՒՑԵԼ ՆԱԵՒ ԱՅՆ ԲՈԼՈՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, ՈՐ ԱՅԴ ԱՆՁԸ ՍՏԱՑԵԼ Է ԿԱՄ ՊԱՐՏԱՎՈՐ ԷՐ ՍՏԱՆԱԼ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՂՋ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՈՒՄ, ԻՍԿ ԲԱՐԵԽԻՂՃ ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՑ՝ ԱՅՆ ԲՈԼՈՐ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, ՈՐ ՆԱ ՍՏԱՑԵԼ Է ԿԱՄ ՊԱՐՏԱՎՈՐ ԷՐ ՍՏԱՆԱԼ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿՎԱՆԻՑ Ի ՎԵՐ, ԵՐԲ ԻՄԱՑԵԼ Է ԿԱՄ ՊԱՐՏԱՎՈՐ ԷՐ ԻՄԱՆԱԼ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՊՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԿԱՄ, ԵՐԲ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ Է ՍՏԱՑԵԼ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՅՑԻ ՄԱՍԻՆ: Ինչպես ԲԱՐԵԽԻՂՃ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ՏԻՐԱՊԵՏՈՂԸ, ԻՐ ՀԵՐԹԻՆ, ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋԻՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՀԱՏՈՒՑԵԼ ԳՈՒՅՔԻ ՎՐԱ ԻՐ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱԽՍԵՐԸ ԱՅՆ ՊԱՀԻՑ Ի ՎԵՐ, ԵՐԲ ԳՈՒՅՔԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋՆ ԵՆ ՀԱՍՆՈՒՄ:

ԲարեԽԻՂՃ ՏԻՐԱՊԵՏՈՂԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԻՐԵՆ ԹՈՂՆԵԼՈՒ ԻՐ ԿԱՏԱՐԱԾ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ, ԵԹԵ ԴՐԱՆՔ ԿԱՐԵԼԻ Է ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼ ԱՌԱՆՑ ՎՆԱՍ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԻՐԻՆ: Եթե ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԻ ԱՅԴՊԻՍԻ ԱՌԱՆՁՆԱՑՈՒՄՆ ԱՆՀՆԱՐ Է, ԱՊԱ ԲԱՐԵԽԻՂՃ ՏԻՐԱՊԵՏՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՀԱՏՈՒՑԵԼ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍԵՐԸ, ԲԱՅՑ ՈՉ ԱՎԵԼԻ ԱՅՆ ՉԱՓԻՑ, ՈՐՈՎ ԱՎԵԼԱՑԵԼ Է ԻՐԻ ԱՐԺԵՔԸ:

### ՀՈԴՎԱԾ 158. ՍեփաԿԱՆԱՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՆՊԻՍԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻՑ, ՈՐՈՆՔ ԿԱՊՎԱԾ ՉԵՆ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԵՏ

ՍեփաԿԱՆԱՏԵՐԸ ԿԱՐՈՂ Է ՊԱՀԱՆՋԵԼ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՄԵՆ ՄԻ ԽԱԽՏՈՒՄ, ԹԵԿՈՒԶԵՒ ԱՅԴ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԶՈՒԳՈՐԴՎԱԾ ՉԵՆ ԵՂԵԼ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԵՏ:

### ՀՈԴՎԱԾ 159. ՍեփակԱՆԱՏԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԻՐԱՊԵՏՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սույն ՕՐԵՆՍԳՐՔԻ 153-158 ՀՈԴՎԱԾՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՆ ՆԱԵՒ ԱՅՆ ԱՆՁԻՆ, ՈՐԸ ԹԵԵՒ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՉԷ, ԲԱՅՑ ԳՈՒՅՔԸ ՏԻՐԱՊԵՏՈՒՄ Է ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ:

## ՀԱՏՎԱԾ III. ՊԱՐՏԱՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## Գ Լ ՈՒ Խ 15.

## *ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ*

### ՀՈԴՎԱԾ 160. ՊարտԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՆՐԱ ԾԱԳՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԸսՏ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻ ԱՆՁ (ՊԱՐՏԱՊԱՆԸ) ՊԱՐՏԱՎՈՐ Է ՄԻ ՈՒՐԻՇ ԱՆՁԻ (ՊԱՐՏԱՏԻՐՈՋ) ՕԳՏԻՆ ԿԱՏԱՐԵԼ ՈՐՈՇԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ, ԱՅՆ Է՝ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼ,

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼ, ՓՈՂ ՎՃԱՐԵԼ ԵՒ ԱՅԼՆ, ԿԱՄ ՁԵՌՆՊԱՀ ՄՆԱԼ ՈՐՈՇԱԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԻՑ, ԻՍԿ ՊԱՐՏԱՏԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՐՏԱՊԱՆԻՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ, ՈՐ ՆԱ ԿԱՏԱՐԻ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

ՊարտԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱԳՈՒՄ ԵՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԿԱՄ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 4 ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՅԼ ՀԻՄՔԵՐԻՑ:

### ՀՈԴՎԱԾ 161. ՊլանԱՎՈՐՄԱՆ ԱԿՏԵՐԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ԱնմիջԱԿԱՆՈՐԵՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱԿՏԻՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԱՅԴ ԱԿՏՈՎ:

ՊետաԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ԱՅԴ ՊԱՏՎԵՐԻՆ:

***(25.12.87. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ):***

### ՀՈԴՎԱԾ 162. ՊայմԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

ՊայմԱՆԱԳԻՐԸ ԿՆՔՎԱԾ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ, ԵՐԲ ՊԱՏՇԱՃ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՁԵՒՈՎ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ Է ՁԵՌՔ ԲԵՐՎԵԼ ՆՐԱ ԲՈԼՈՐ ԷԱԿԱՆ ԿԵՏԵՐՈՒՄ:

ԷԱԿԱՆ ԵՆ ՀԱՄԱՐՎՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՅՆ ԿԵՏԵՐԸ, ՈՐՈՆՔ ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻՔ ԵՆ ՃԱՆԱՉՎԵԼ ՕՐԵՆՔՈՎ ԿԱՄ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ՏՎՅԱԼ ՏԵՍԱԿԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԱՅՆ ԲՈԼՈՐ ԿԵՏԵՐԸ, ՈՐՈՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿՈՂՄԵՐԻՑ ՄԵԿԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐՎԻ:

### ՀՈԴՎԱԾ 163. ՊայմԱՆԱԳՐԻ ՁԵՒԸ

ԵթԵ ԿՈՂՄԵՐԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔԵԼ ՈՐՈՇԱԿԻ ՁԵՒՈՎ, ԱՊԱ ԱՅՆ ԿՆՔՎԱԾ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ՆՐԱՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՁԵՒԸ ՏԱԼՈՒ ՊԱՀԻՑ, ԹԵԿՈՒԶԵՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՏՎՅԱԼ ՏԵՍԱԿԻ ՀԱՄԱՐ ԱՅԴ ՁԵՒԸ ՕՐԵՆՔՈՎ ՉԻ ԷԼ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ:

ԵթԵ ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՄ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՊԵՏՔ Է ԿՆՔՎԻ ԳՐԱՎՈՐ, ԱՊԱ ԱՅՆ ԿԱՐՈՂ Է ԿՆՔՎԵԼ ԻՆՉՊԵՍ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՄԵԿ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ՆԱՄԱԿՆԵՐԻ, ՀԵՌԱԳՐԵՐԻ, ՀԵՌԱԽՈՍԱԳՐԵՐԻ ԵՒ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ, ՈՐՈՆՔ ՍՏՈՐԱԳՐԵԼ Է ԱՅՆ ԿՈՂՄԸ, ՈՐՆ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ԴՐԱՆՔ:

ՕրԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿԱՐՈՂ Է ԿՆՔՎԵԼ ՊԱՏՎԵՐԸ ԿԱՄ ԿԱՐԳԱԳԻՐԸ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ:

### ՀՈԴՎԱԾ 164. ՊայմանԱԳՐԻ ԿՆՔՈՒՄՆ ԱՅՆՊԻՍԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՄԲ, ՈՐԻ ՄԵՋ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՄԱՐ ԺԱՄԿԵՏ Է ՆՇԱՆԱԿՎԱԾ

ԵրԲ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՎԱԾ Է ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՄԱՐ ԺԱՄԿԵՏԻ ՆՇԱՆԱԿՄԱՄԲ, ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔՎԱԾ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ, ԵԹԵ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՂ ԱՆՁԸ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ ԱՅԴ ԺԱՄԿԵՏՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Է ՍՏԱՑԵԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

### ՀՈԴՎԱԾ 165. ՊայմԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄՆ ԱՅՆՊԻՍԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՄԲ, ՈՐԻ ՄԵՋ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՄԱՐ ԺԱՄԿԵՏ ՉԻ ՆՇԱՆԱԿՎԱԾ

ԵրԲ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՎԱԾ Է ԲԱՆԱՎՈՐ, ԱՌԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀԱՄԱՐ ԺԱՄԿԵՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔՎԱԾ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ, ԵԹԵ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԸ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՂ ԱՆՁԻՆ ԱՆՀԱՊԱՂ ՀԱՅՏՆԵԼ Է ԱՅԴ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԵրԲ ԱՅԴՊԻՍԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՎՈՐ Է ԱՐՎԱԾ, ԱՊԱ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔՎԱԾ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ, ԵԹԵ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՊԱՏԱՍԽԱՆՆ ՍՏԱՑՎԵԼ Է ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՆՈՐՄԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՈՒՄ:

### ՀՈԴՎԱԾ 166. ՊայմանԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՇԱՑՈՒՄՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ

ԵԹԵ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՇԱՑՈՒՄՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԻՑ ԵՐԵՒՈՒՄ Է, ՈՐ ՊԱՏԱՍԽԱՆՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ԺԱՄԱՆԱԿԻՆ, ԱՊԱ ՎԵՐՋԻՆՍ ՈՒՇԱՑԱԾ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ ՄԻԱՅՆ, ԵԹԵ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ ԱՆՈՂ ԱՆՁԸ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՆ ԱՆՀԱՊԱՂ ՀԱՂՈՐԴԻ ՊԱՏԱՍԽԱՆՆ ՈՒՇԱՑՈՒՄՈՎ ՍՏԱՑՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ: ԱՅԴ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ:

### ՀՈԴՎԱԾ ՊայմանԱԳԻՐՆ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

**167. ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ**

ԱռաՋԱՐԿՎԱԾԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՎԵԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԱՍԽԱՆԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՈՒՄ ԵՒ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ՝ ՄԻ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ: ԵԹԵ ՊԵՏԱԿԱՆ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԵՒ ԱՅԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼԻՍ ԱՅՆՊԻՍԻ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԾԱԳՈՒՄ, ՈՐՈՆՔ ԵՆԹԱԿԱ ԵՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ, ԴԱՏԱՐԱՆԻ, ԿԱՄ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ ԼՈՒԾՄԱՆԸ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 168 ՀՈԴՎԱԾ), ԱՊԱ ԱՅՍ ՀՈԴՎԱԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՉԵՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ:
***(25.10.72. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ):***

**ՀՈԴՎԱԾ 168. ՆախԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ**

ԵրԿՈՒ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼԻՍ ԾԱԳՈՂ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՈՒԾՎՈՒՄ ԵՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԻՋՈՑՈՎ, ԵԹԵ ԿՈՂՄԵՐԻՑ ԹԵԿՈՒԶԵՒ ՄԵԿԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ Է, ՄԻՋԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ, ՊԵՏԱԿԱՆ-ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՄԻԱՎՈՐՈՒՄ ԵՒ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ (ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԻ) ՄԻՋՈՑՈՎ, ԵԹԵ ԿՈՂՄԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԵՒ ԱՅԼ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ (ԲԱՑԻ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՄԻՋԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ, ՊԵՏԱԿԱՆ-ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ, ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՑ), ՈՐՉԱՓՈՎ ՕՐԵՆՔՈՎ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ:
ԵրկՈՒ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՎՐԱ ՉՀԻՄՆՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼԻՍ ՀԻՇՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԾԱԳՈՂ ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԼՈՒԾՎԵԼ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ՝ ԴԱՏԱՐԱՆԻ ԿԱՄ ԱՐԲԻՏՐԱԺԻ ԿՈՂՄԻՑ, ԵԹԵ ԴԱ ՀԱՏԿԱՊԵՍ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՕՐԵՆՔՈՎ ԿԱՄ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ:
***(25.10.72Թ., 28.07.82Թ.,25.12.87. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ):***

**ՀՈԴՎԱԾ 169. ՊայմԱՆԱԳԻՐ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ՕԳՏԻՆ**

ԵթԵ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔՈՂ ԱՆՁԸ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐԵԼ Է ՀՕԳՈՒՏ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ, ԱՊԱ ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԵՒ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ԲԽՈՒՄ ՆՐԱ ԻՄԱՍՏԻՑ, ԿԱՏԱՐՈՒՄ ԿԱՐՈՂ Է ՊԱՀԱՆՋԵԼ ԻՆՉՊԵՍ ԱՅՆ ԱՆՁԸ, ՈՐԻ ԱՆՈՒՆԻՑ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔՎԵԼ Է, ԱՅՆՊԵՍ ԷԼ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԸ, ՈՐԻ ՕԳՏԻՆ ՎԵՐԱՊԱՀՎԱԾ Է ԿԱՏԱՐՈՒՄԸ:
ԵԹԵ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԸ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆՐԱՆ ՏՐՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ, ԱՊԱ ԱՅՆ ԱՆՁԸ, ՈՐԻ ԱՆՈՒՆԻՑ ԿՆՔՎԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ԿԱՐՈՂ Է ՕԳՏՎԵԼ ԱՅԴ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ, ԵԹԵ ԴԱ ՉԻ ՀԱԿԱՍՈՒՄ ՕՐԵՆՔԻՆ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԻՄԱՍՏԻՆ:

## Գ Լ ՈՒ Խ 16.

## ***ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ***

**ՀՈԴՎԱԾ 170. ԸնդհԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

ՊարտավՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐՎԵՆ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԵՒ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ՝ ՕՐԵՆՔԻ, ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱԿՏԻ, ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ԻՍԿ ԱՅԴՊԻՍԻ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ՍՈՎՈՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ:

**ՀՈԴՎԱԾ 171. ՊարտԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ՄԻԱԿՈՂՄ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**

ԹույԼ ՉԻ ՏՐՎՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ՄԻԱԿՈՂՄ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԵՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԻԱԿՈՂՄ ՓՈՓՈԽԵԼ, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՔԵՐԻ:

**ՀՈԴՎԱԾ 172. ՊարտԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՄԱՍ-ՄԱՍ**

ՊարՏԱՏԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՉԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍ-ՄԱՍ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ԲԽՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԻՑ:

**ՀՈԴՎԱԾ 173. ՊարտավՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ**

Պայմանագրից ծագած պարտավորության կատարումը կարող է ամբողջապես կամ մասամբ դրվել երրորդ անձի վրա, եթե դա նախատեսված է սահմանված կանոններով, ինչպես եւ եթե երրորդ անձի կողմերից մեկի հետ կապված է վարչական ենթակայությամբ կամ համապատասխան պայմանագրով:

Եթե պարտավորությունը անձամբ կատարելու քաղաքացու պարտականությունը չի բխում օրենքից, պայմանագրից կամ պարտավորության էությունից, ապա պարտատերը պարտավոր է ընդունել այն կատարումը, որ պարտապանի փոխարեն առաջարկել է երրորդ անձը:

### Հոդված 174. Պարտավորության կատարման ժամկետի անորոշությունը

Եթե պարտավորության կատարման ժամկետ չի սահմանված կամ այն որոշված է պահանջի պահով, ապա ամեն ժամանակ պարտատերն իրավունք ունի կատարում պահանջելու, իսկ պարտապանը՝ իրականացնելու կատարումը:

Պարտապանը այդպիսի պարտավորությունը պարտավոր է կատարել պարտատիրոջ կողմից պահանջը ներկայացվելու օրվանից յոթ օրվա ընթացքում, եթե օրենքից, պայմանագրից կամ պարտավորության էությունից չի բխում անհապաղ կատարման պարտականություն:

### Հոդված 175. Պարտավորության կատարումը ժամկետից շուտ

Պարտապանն իրավունք ունի ժամկետից շուտ կատարելու պարտավորությունը, եթե օրենքից, պայմանագրից կամ պարտավորության էությունից այլ բան չի բխում:

Պետական, կոոպերատիվ եւ հասարակական կազմակերպությունների միջեւ պարտավորությունների ժամկետից շուտ կատարումը թույլատրվում է այն դեպքում, երբ դա նախատեսված է օրենքով կամ պայմանագրով, ինչպես նաեւ պարտատիրոջ համաձայնությամբ:

### Հոդված 176. Պարտավորության կատարման վայրը

Պարտավորությունը պետք է կատարվի այն վայրում, որը որոշված է օրենքում, պայմանագրում, պլանավորման այն ակտում, որի հիման վրա ծագել է պարտավորությունը, կամ այն վայրում, որ հետեւում է պարտավորության էությունից: Եթե կատարման վայրը չի որոշված (այս հոդվածի առաջին մաս), ապա պարտավորությունը պետք է կատարվի՝

1) շինություն հանձնելու պարտավորությունը՝ շինությունը գտնվելու վայրում.

2) դրամական պարտավորությունը (բացի պետական, կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների դրամական պարտավորություններից)՝ այն վայրում, որտեղ պարտատերը ապրելիս է եղել պարտավորության ծագման պահին, իսկ եթե պարտատերը պարտավորության կատարման պահից առաջ փոխել է բնակության վայրը եւ այդ մասին հաղորդել պարտապանին, ապա պարտատիրոջ նոր բնակության վայրում պարտատիրոջ վրա դնելով կատարման վայրի փոփոխման հետ կապված բոլոր ծախսերը.

3) մյուս բոլոր պարտավորությունները՝ պարտապանի բնակության վայրում, իսկ եթե պարտապանը իրավաբանական անձ է՝ ապա նրա գտնվելու վայրում (սույն օրենսգրքի 30 հոդված):

### Հոդված 177. Դրամական պարտավորության կատարումը կազմակերպությունների միջեւ

Պետական, կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների միջեւ եղած դրամական պարտավորություններով վճարումները, եթե այլ բան չի սահմանված ԽՍՀ Միության օրենսդրությամբ, կատարվում են ԽՍՀՄ պետական բանկի եւ մյուս վարկային հիմնարկների միջոցով՝ ԽՍՀ Միության օրենսդրությամբ սահմանվող կարգով:

### Հոդված 178. Դրամական պարտավորությունների վալյուտան

Դրամական պարտավորությունները պետք է արտահայտվեն եւ վճարվեն խորհրդային վալյուտայով:

Դրամական պարտավորություններն օտարերկրյա վալյուտայով արտահայտելը եւ վճարելը թույլատրվում են միայն ԽՍՀ Միության օրենսդրությամբ սահմանված դեպքում ու կարգով:

### Հոդված 179. Տոկոսներ

Դրամական եւ այլ պարտավորություններով տոկոսներ չեն թույլատրվում, բացառությամբ վարկային հիմնարկների գործառնությունների, արտաքին առեւտրի գծով պարտավորությունների եւ օրենքում նշված այլ դեպքերի:

### Հոդված 180. Փոխադարձ պարտականությունների կատարումը

Փոխադարձ պարտականություններն ըստ պայմանագրի պետք է կատարվեն միաժամանակ, եթե օրենքից, պլանավորման ակտից, պայմանագրից կամ պարտավորության էությունից այլ բան չի բխում:

### Հոդված 181. Երկընտրելի պարտավորության կատարումը

Այն պարտապանը, որը պարտավոր է կատարել երկու կամ մի քանի գործողություններից մեկը, ընտրության իրավունք ունի, եթե օրենքից, պայմանագրից կամ պարտավորության էությունից այլ բան չի բխում:

### Հոդված 182. Այն պարտավորության կատարումը, որին մասնակցում են մի քանի պարտատեր կամ մի քանի պարտապան

Եթե պարտավորությանը մասնակցում են մի քանի պարտատեր կամ մի քանի պարտապան, ապա պարտատերերից յուրաքանչյուրն իրավունք ունի կատարում պահանջելու, իսկ պարտապաններից յուրաքանչյուրը պարտավոր է կատարել պարտավորությունը՝ մյուսներին հավասար բաժիններով, եթե օրենքից կամ պայմանագրից այլ բան չի բխում:

Սոցիալիստական կազմակերպությունների միջեւ բաժնային պայմանագրերից ծագող պարտավորություններում պարտատիրոջ՝ կատարում պահանջելու իրավունքը, եւ պարտապանի՝ պարտավորությունը կատարելու պարտականությունը, որոշվում են պայմանագրով սահմանվող բաժիններով:

### Հոդված 183. Համապարտ պարտավորություններ

Համապարտ պարտավորությունը կամ համիրավ պահանջը ծագում է, եթե դա նախատեսված է պայմանագրով կամ սահմանված է օրենքով, մասնավորապես՝ երբ անբաժանելի է պարտավորության առարկան:

### Հոդված 184. Պարտատիրոջ իրավունքները պարտապանների համապարտ պարտականության դեպքում

Պարտապանների համապարտ պարտականության դեպքում պարտատերն իրավունք ունի ինչպես բոլոր պարտապաններից համատեղ, այնպես էլ յուրաքանչյուրից առանձին կատարում պահանջելու ինչպես լրիվ, այնպես էլ պարտքի մի մասում:

Եթե պարտատերը համապարտ պարտապաններից որեւէ մեկից լրիվ բավարարում չի ստացել, ապա նա իրավունք ունի չստացած մասը պահանջելու մյուս համապարտ պարտապաններից:

Համապարտ պարտապանները պարտական են մնում, քանի դեռ լրիվ չի մարվել պարտավորությունը:

### Հոդված 185. Համապարտ պարտապանների առարկությունները պարտատիրոջ պահանջների դեմ

Համապարտ պարտականության դեպքում պարտապանն իրավունք չունի պարտատիրոջ պահանջների դեմ այնպիսի առարկություններ անելու, որոնք հիմնված են մյուս պարտապանների ու պարտատիրոջ այն հարաբերությունների վրա, որոնց տվյալ պարտապանը չի մասնակցում:

### Հոդված 186. Համապարտ պարտականության կատարումը պարտապաններից մեկի կողմից

Համապարտ պարտականության լրիվ կատարումը պարտապաններից մեկի կողմից մյուս պարտապաններին ազատում է պարտատիրոջ հանդեպ պարտականության կատարումից:

Համապարտ պարտականությունը կատարած պարտապանը ետադարձ պահանջի իրավունք ունի մյուս պարտապանների նկատմամբ հավասար բաժիններով, դուրս գալով այն բաժինը, որ ընկնում է իր վրա, եթե այլ բան չի սահմանված օրենքով կամ պայմանագրով: Համապարտ պարտականությունը կատարած պարտապանին

ՀԱՄԱՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՑ ՄԵԿԻ ՉՎՃԱՐԱԾԸ ՀԱՎԱՍԱՐ ԲԱԺՆՈՎ ԸՆԿՆՈՒՄ Է ՆՐԱ ԵՒ ՄՅՈՒՍ ԵՒ ՀԱՄԱՊԱՐՏԱՊԱՆՆԵՐԻ ՎՐԱ:

**ՀՈԴՎԱԾ 187. ՀաՄԻՐԱՎ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

ՊահԱՆՋԸ ՀԱՄԻՐԱՎ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՄԻՐԱՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԼՐԻՎ ԾԱՎԱԼՈՎ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՊԱՆԻՆ:

ՊարՏԱՊԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՀԱՄԻՐԱՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՑ ՄԵԿԻ ՊԱՀԱՆՋԻ ԴԵՄ ԱՅՆՊԻՍԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԵԼՈՒ, ՈՐՈՆՔ ՀԻՄՆՎԱԾ ԵՆ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՈՒ ՄՅՈՒՍ ՀԱՄԻՐԱՎ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԱՅՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ, ՈՐՈՆՑ ՏՎՅԱԼ ՊԱՐՏԱՏԵՐԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ:

ՀաՄԻՐԱՎ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՑ ՄԵԿԻ ՀԱՆԴԵՊ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԼՐԻՎ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՊԱՐՏԱՊԱՆԻՆ ԱԶԱՏՈՒՄ Է ՄՅՈՒՍ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԱՅԴ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ:

ՊԱՐՏԱՊԱՆԻՑ ԿԱՏԱՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՀԱՄԻՐԱՎ ՊԱՐՏԱՏԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՄՅՈՒՍ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ՀԱՏՈՒՑԵԼ ՆՐԱՆՑ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԲԱԺԻՆԸ, ԵԹԵ ՆՐԱՆՑ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ԲԽՈՒՄ:

**ՀՈԴՎԱԾ 188 ԴրամաԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՊԱՐՏՔԸ ԴԵՊՈԶԻՏ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ**

ԲացակայՈՒՄ Է ՊԱՐՏԱՏԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԵՐԲ ՆԱ ԽՈՒՍԱՓՈՒՄ Է ԿԱՏԱՐՈՒՄՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ ԿԱՄ ԹՈՒՅԼ Է ՏԱԼԻՍ ԱՅԼ ԿԵՍԱՆՑՈՒՄ, ԱՅԼԵՒ ԵՐԲ ԲԱՑԱԿԱՅՈՒՄ Է ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ, ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՐԺԵԹՂԹԵՐ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՐՏԱՊԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԻՐԵՆԻՑ ՀԱՍԱՆԵԼԻՔ ՓՈՂԸ ԿԱՄ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ ԴԵՊՈԶԻՏ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ, ՈՐՆ ԱՅԴ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿ Է ԴԱՐՁՆՈՒՄ ՊԱՐՏԱՏԻՐՈՋԸ:

ԴրամաԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ ԿԱՄ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ ԴԵՊՈԶԻՏ ՀԱՆՁՆԵԼԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄ:

## Գ Լ ՈՒ Խ 17.

## *ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ*

**ՀՈԴՎԱԾ 189. ԸնդհԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

ՊարտավՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔԻ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԱՊԱՀՈՎՎԵԼ ՏՈՒԺԱՆՔՈՎ (ՏՈՒԳԱՆՔՈՎ, ՏՈՒՅԺՈՎ), ԳՐԱՎԱԿԱՆՈՎ ԵՒ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ:

ԲԱՑԻ ԴՐԱՆԻՑ, ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԿԱՄ ՆՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՊԱՀՈՎՎԵԼ ԿԱՆԽԱՎՃԱՐՈՎ, ԻՍԿ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՒ ԾԱԳԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԵՐԱՇԽԻՔՈՎ:

**ՀՈԴՎԱԾ 190. ՏուԺԱՆՔ**

Տուժանք (ՏՈՒԳԱՆՔ, ՏՈՒՅԺ) Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՈՐՈՇՎԱԾ ԱՅՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ, ՈՐԸ ՊԱՐՏԱՊԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՎՃԱՐԵԼ ՊԱՐՏԱՏԻՐՈՋԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՈՒՇԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

ՏՈՒԺԱՆՔՈՎ (ՏՈՒԳԱՆՔՈՎ, ՏՈՒՅԺՈՎ) ԿԱՐՈՂ Է ԱՊԱՀՈՎՎԵԼ ՄԻԱՅՆ ԻՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԸ:

ՊարտԱՏԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՏՈՒԺԱՆՔԻ (ՏՈՒԳԱՆՔԻ, ՏՈՒՅԺԻ) ՎՃԱՐՈՒՄԸ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ, ԵԹԵ ՊԱՐՏԱՊԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 224 ՀՈԴՎԱԾ):

**ՀՈԴՎԱԾ 191. ՏուժանՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՒԸ**

ՏուժանՔԻ (ՏՈՒԳԱՆՔԻ, ՏՈՒՅԺԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԿՆՔՎԻ ԳՐԱՎՈՐ: ԳրավՈՐ ՁԵՒԸ ՉՊԱՀՊԱՆԵԼԸ ԱՆՎԱՎԵՐ Է ԴԱՐՁՆՈՒՄ ՏՈՒԺԱՆՔԻ (ՏՈՒԳԱՆՔԻ, ՏՈՒՅԺԻ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ:

**ՀՈԴՎԱԾ 192. Գրավ**

ԳրավԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ԵՒ «ԳՐԱՎԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ:

*/25.10.95 ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ /:*

**ՀՈԴՎԱԾ 193-202**

**ՀոդվածՆԵՐԸ ՎԵՐԱՑՎԵԼ ԵՆ** ***/25.10.95Թ. ՕՐԵՆՔ/***

**ՀՈԴՎԱԾ 203. Երաշխավորություն**

ԵրաշխավՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ԱՅԼ ԱՆՁԻ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԱՌԱՋ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԼԻՆԵԼ ԱՅԴ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՐԻՎ ԿԱՄ ՄԱՍԱՄԲ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՐՈՂ Է ԱՊԱՀՈՎՎԵԼ ՄԻԱՅՆ ԻՐԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԸ:

ԵրաշխԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՊԵՏՔ Է ԿՆՔՎԻ ԳՐԱՎՈՐ: Գրավոր ՁԵՒԸ ՉՊԱՀՊԱՆԵԼԸ ԱՆՎԱՎԵՐ Է ԴԱՐՁՆՈՒՄ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ:

**ՀՈԴՎԱԾ 204. Երաշխավորի պատասխանատվությունը**

ՊարՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՊԱՆՆ ՈՒ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՆ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԱՌԱՋ ՈՐՊԵՍ ՀԱՄԱՊԱՐՏ ՊԱՐՏԱՊԱՆՆԵՐ, ԵԹԵ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ:

ԵրաՇԽԱՎՈՐԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԿՐՈՒՄ ՆՈՒՅՆ ԾԱՎԱԼՈՎ, ՈՐՔԱՆ ԵՒ ՊԱՐՏԱՊԱՆԸ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ՏՈԿՈՍՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ, ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ, ՏՈՒԺԱՆՔԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ, ԵԹԵ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ:

ՀամաՏԵՂ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՎԱԾ ԱՆՁԻՆՔ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԱՌԱՋ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՆ ՀԱՄԱՊԱՐՏ ԿԱՐԳՈՎ, ԵԹԵ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ:

**ՀՈԴՎԱԾ 205. Երաշխավորի իրավունքներն ու պարտականությունները նրա դեմ հայց հարուցելու դեպքում**

Եթե ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԴԵՄ ՀԱՅՑ Է ՀԱՐՈՒՑՎԵԼ, ՆԱ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԳՈՐԾԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՐՁՆԵԼ ՊԱՐՏԱՊԱՆԻՆ:

ՀակառակԿ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՊԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋԻ ԴԵՄ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 206 ՀՈԴՎԱԾ) ԱՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՒՆԵՑԱԾ ԻՐ ԲՈԼՈՐ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ԵրԱՇԽԱՎՈՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՊԱՀԱՆՋԻ ԴԵՄ ԱՆԵԼՈՒ ԱՅՆ ԲՈԼՈՐ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐ ԿԱՐՈՂ Է ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՊԱՐՏԱՊԱՆԸ: ԵրաշխԱՎՈՐԸ ՉԻ ԿՈՐՑՆՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՅԴ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՈՒՅՆԻՍԿ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՊԱՐՏԱՊԱՆԸ ԴՐԱՆՑԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ԿԱՄ ԸՆԴՈՒՆԵԼ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

**ՀՈԴՎԱԾ 206. Պարտավորությունը կատարած երաշխավորի իրավունքները**

ՊարտաՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԱԾ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՆ ԵՆ ԱՆՑՆՈՒՄ ԱՅԴ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՈՎ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՈՒՆԵՑԱԾ ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ:

Մի ՔԱՆԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՊԱՆԻՆ ԻՐ ՎՃԱՐԱԾ ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓՈՎ:

ԵրաշխավՈՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՊԱՐՏԱՏԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԻՆ ՀԱՆՁՆԵԼ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԴԵՄ ՈՒՆԵՑԱԾ ԻՐ ՊԱՀԱՆՋԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ԵՒ ԱՅԴ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ:

**ՀՈԴՎԱԾ 207. Պարտավորության կատարման մասին պարտապանի կողմից երաշխավորին տեղեկացնելը**

ՊարՏԱՊԱՆԸ, ՈՐԸ ԿԱՏԱՐԵԼ Է ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՅԴ ՄԱՍԻՆ ԱՆՀԱՊԱՂ ՀԱՂՈՐԴԵԼ ԵՐԱՇԽԱՎՈՐԻՆ: ՀակաՌԱԿ ԴԵՊՔՈՒՄ ԻՐ ՀԵՐԹԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԱԾ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ՊԱՐՏԱՊԱՆԻ ԴԵՄ ԵՏԱԴԱՐՁ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ՊարՏԱՊԱՆՆ ԱՅԴ ԴԵՊՔՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՐՏԱՏԻՐՈՋԻՑ ԲՌՆԱԳԱՆՁԵԼՈՒ ՄԻԱՅՆ ԱՆՀԻՄՆ ՍՏԱՑՎԱԾԸ:

**ՀՈԴՎԱԾ 208. Երաշխավորության դադարումը**

ԵրաշխԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ԴՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄՈՎ:

ԵրաշխԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ՆԱԵՒ, ԵԹԵ ՊԱՐՏԱՏԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ

ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ԵՐԵՔ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅՑ ՉՀԱՐՈՒՑԻ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ԴԵՄ: Եթե ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՉԻ ՆՇՎԱԾ ԿԱՄ ՈՐՈՇՎԱԾ Է ՑՊԱՀԱՆՋԻ ՊԱՀՈՎ, ԱՊԱ ԱՅԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԱՇԽԱՎՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՄԵԿ ՏԱՐԻ ԱՆՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ:

**ՀՈԴՎԱԾ 209. Կանխավճար**

Կանխավճար Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԱՅՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԸ, ՈՐ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎՈՂ ԿՈՂՄԵՐԻՑ ՄԵԿԸ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՀԱՍԱՆԵԼԻՔ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՏԱԼԻՍ Է ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՆ՝ Ի ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՒ Ի ԱՊԱՀՈՎՈՒՄՆ ՆՐԱ ԿԱՏԱՐՄԱՆ:

Կանխավճարի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԿԱԽ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԻՑ, ՊԵՏՔ Է ԿՆՔՎԻ ԳՐԱՎՈՐ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 46 ՀՈԴՎԱԾ):

Եթե ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ԿԱՆԽԱՎՃԱՐ ՏՎՈՂ ԿՈՂՄԸ, ԱՊԱ ԿԱՆԽԱՎՃԱՐԸ ՄՆՈՒՄ Է ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻ ՄՈՏ: Եթե ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ԿԱՆԽԱՎՃԱՐ ՍՏԱՑԱԾ ԿՈՂՄԸ, ԱՊԱ ՆԱ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՆ ՎՃԱՐԵԼ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԿՐԿՆԱԿԻ ԳՈՒՄԱՐԸ:

ԲԱՑԻ ԴՐԱՆԻՑ, ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿՈՂՄԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՆ ՀԱՏՈՒՑԵԼ ՎՆԱՍՆԵՐԸ՝ ՀԱՇՎԱԿՑԵԼՈՎ ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԳՈՒՄԱՐԸ, ԵԹԵ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ:

**ՀՈԴՎԱԾ 210. Երաշխիք**

Սույն ՕՐԵՆՍԳՐՔԻ 203, 205, 207 ԵՒ 208 ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՏԱՐԱԾՎՈՒՄ ԵՆ ՄԵԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄՅՈՒՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ՄԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՂ ԵՐԱՇԽԻՔԻ ՎՐԱ, ԵԹԵ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ:

## Գ Լ ՈՒ Խ 18.

## *ՊԱՀԱՆՋԻ ԶԻՋՈՒՄ ԵՎ ՊԱՐՏՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ*

**ՀՈԴՎԱԾ 211. Պահանջի զիջում**

Պարտատիրոջ ԿՈՂՄԻՑ ՊԱՀԱՆՋԸ ՄԻ ԱՅԼ ԱՆՁԻ ԶԻՋԵԼԸ ԹՈՒՅԼ Է ՏՐՎՈՒՄ, ԵԹԵ ԴԱ ՉԻ ՀԱԿԱՍՈՒՄ ՕՐԵՆՔԻՆ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ԿԱՄ ԵԹԵ ՊԱՀԱՆՋԸ ԿԱՊՎԱԾ ՉԷ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ:

Չի ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ԶԻՋԵԼ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՎՆԱՍԵԼՈՒՑ ԿԱՄ ՄԱՀ ՊԱՏՃԱՌԵԼՈՒՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԸ:

Պահանջը ՁԵՌՔ ԲԵՐՈՂԻՆ ԵՆ ԱՆՑՆՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ:

**ՀՈԴՎԱԾ 212. Պահանջը զիջող պարտատիրոջ պարտականություններն ու պատասխանատվությունը**

Պահանջը ՄԻ ԱՅԼ ԱՆՁԻ ԶԻՋՈՂ ՊԱՐՏԱՏԵՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՅԴ ԱՆՁԻՆ ՀԱՆՁՆԵԼ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ:

ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՏԵՐԸ ՆՈՐ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԱՌԱՋ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ՆՐԱՆ ՀԱՆՁՆՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԱՆՎԱՎԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԲԱՅՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՉԷ ԱՅԴ ՊԱՀԱՆՋԸ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԲԱՑԻ ԱՅՆ ԴԵՊՔԵՐԻՑ, ԵՐԲ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՏԵՐԸ ՆՈՐ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԱՌԱՋ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ Է ՍՏԱՆՁՆԵԼ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՀԱՄԱՐ:

**ՀՈԴՎԱԾ 213. Պարտավորության ԿԱՏԱՐՈՒՄԸ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՕԳՏԻՆ, ԵՐԲ ՊԱՐՏԱՊԱՆԸ ՊԱՀԱՆՋԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿ ՉԻ ԴԱՐՁՎԵԼ**

Եթե ՊԱՐՏԱՊԱՆԸ ԻՐԱԶԵԿ ՉԻ ԴԱՐՁՎԵԼ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ ՊԱՀԱՆՋԸ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ԱՊԱ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀՕԳՈՒՏ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ԿԱՏԱՐՈՒՄ ՀՕԳՈՒՏ ՊԱՏՇԱՃ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ:

**ՀՈԴՎԱԾ 214. ՊարՏԱՊԱՆԻ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՊԱՀԱՆՋԻ ԴԵՄ**

ՊարտԱՊԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՆՈՐ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՊԱՀԱՆՋԻ ԴԵՄ ԱՆԵԼՈՒ ԱՅՆ ԲՈԼՈՐ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐ ՆԱ ՈՒՆԵՑԵԼ Է ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԴԵՄ ՊԱՀԱՆՋԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՊԱՀԻՆ:

**ՀՈԴՎԱԾ 215. ՊարՏՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ**

ՊարտԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՐՏՔԸ ՄԻ ԱՅԼ ԱՆՁԻ ՓՈԽԱՆՑԵԼԸ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ:

ՆՈՐ պարՏԱՊԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՊԱՀԱՆՋԻ ԴԵՄ ԱՆԵԼՈՒ ԱՅՆ ԲՈԼՈՐ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՀԻՄՆՎԱԾ ԵՆ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԵՒ ՍԿԶԲՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ:

ԵրաշխԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳՐԱՎԸ ԴԱԴԱՐՈՒՄ ԵՆ ՊԱՐՏՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԵՏ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ, ԵԹԵ ԵՐԱՇԽԱՎՈՐԸ ԿԱՄ ԳՐԱՎԱՏՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՉԵՆ ՀԱՅՏՆԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԼԻՆԵԼ ՆՈՐ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՀԱՄԱՐ:

**ՀՈԴՎԱԾ 216. ՊաhԱՆՋԻ ԶԻՋՄԱՆ ԵՒ ՊԱՐՏՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՁԵՒԸ**

ԳրաՎՈՐ ԿՆՔՎԱԾ ԳՈՐԾԱՐՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԶԻՋՈՒՄԸ ԵՒ ՊԱՐՏՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐՎԵՆ ԳՐԱՎՈՐ:

**Գ Լ ՈՒ Խ 19.**

***ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ***

**ՀՈԴՎԱԾ 217. ՊարտաՊԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ` ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՎՆԱՍՆԵՐԸ**

ԵթԵ ՊԱՐՏԱՊԱՆԸ ՉԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԿԱՄ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ՉԻ ԿԱՏԱՐՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՊԱ ՆԱ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՊԱՐՏԱՏԻՐՈՋԸ ՀԱՏՈՒՑԵԼ ԴՐԱՆՈՎ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ:

ՎնասնԵՐ ԱՍԵԼՈՎ ՀԱՍԿԱՑՎՈՒՄ ԵՆ` ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԸ, ՆՐԱ ԳՈՒՅՔԻ ԿՈՐՈՒՍՏԸ ԿԱՄ ՎՆԱՍՈՒՄԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՉՍՏԱՑԱԾ ԱՅՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՆԱ ԿՍՏԱՆԱՐ, ԵԹԵ ՊԱՐՏԱՊԱՆԸ ԿԱՏԱՐԵՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

**ՀՈԴՎԱԾ 218. ՏուժաՆՔ ԵՒ ՎՆԱՍՆԵՐ**

ԵթԵ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ Է ՏՈՒԺԱՆՔ (ՏՈՒԳԱՆՔ, ՏՈՒՅԺ), ԱՊԱ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ Է ՎՆԱՍՆԵՐԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԸ ՉԻ ԾԱԾԿՎԵԼ ՏՈՒԺԱՆՔՈՎ (ՏՈՒԳԱՆՔՈՎ, ՏՈՒՅԺՈՎ):

ՕրԵՆՔՈՎ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱՐՈՂ ԵՆ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԼԻՆԵԼ ԱՅՆՊԻՍԻ ԴԵՊՔԵՐ, ԵՐԲ ԹՈՒՅԼ Է ՏՐՎՈՒՄ ԲՌՆԱԳԱՆՁԵԼ ՄԻԱՅՆ ՏՈՒԺԱՆՔԸ (ՏՈՒԳԱՆՔԸ, ՏՈՒՅԺԸ), ԲԱՑԻ ՉԲՌՆԱԳԱՆՁԵԼ ՎՆԱՍՆԵՐԸ, ԵՐԲ ՎՆԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ ԼՐԻՎ ԳՈՒՄԱՐՈՎ, ՉՀԱՇՎԱԾ ՏՈՒԺԱՆՔԸ, (ՏՈՒԳԱՆՔԸ, ՏՈՒՅԺԸ), ԵՐԲ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ` ԿԱՐՈՂ ԵՆ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ ԿԱՄ ՏՈՒԺԱՆՔԸ (ՏՈՒԳԱՆՔԸ, ՏՈՒՅԺԸ) ԿԱՄ ՎՆԱՍՆԵՐԸ:

**ՀՈԴՎԱԾ 219. ՏուժաՆՔԸ ՊԱԿԱՍԵՑՆԵԼԸ**

ԵթԵ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏՈՒԺԱՆՔԸ (ՏՈՒԳԱՆՔԸ, ՏՈՒՅԺԸ) ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԿՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ ՉԱՓԱԶԱՆՑ ՄԵԾ Է, ԱՊԱ ԴԱՏԱՐԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՏՈՒԺԱՆՔԸ (ՏՈՒԳԱՆՔԸ, ՏՈՒՅԺԸ): ԸնդՄԻՆ ՊԵՏՔ Է ՀԱՇՎԻ ԱՌՆՎԵՆ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ, ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՈՉ ՄԻԱՅՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ, ԱՅԼԵՒ ՀԱՐԳՎԵԼՈՒ ԱՐԺԱՆԻ ՄՅՈՒՍ ԱՄԵՆ ՄԻ ՇԱՀԸ:

ԱՐԲԻՏՐԱԺԸ (ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԸ) ԲԱՑԱՌԻԿ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ, ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՈՒ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՀԱՐԳՎԵԼՈՒ ԱՐԺԱՆԻ ՇԱՀԵՐԸ, ՊԱԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՏԻՐՈՋԸ ՎՃԱՐՎԵԼԻՔ ՏՈՒԺԱՆՔԸ (ՏՈՒԳԱՆՔԸ, ՏՈՒՅԺԸ):

**ՀՈԴՎԱԾ 220. ՊատԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ ԱՌԱՆՁԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ**

ՊարտԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՍՀ ՄիուԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՐՈՂ Է ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆՎԵԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՍոցԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԹՈՒՅԼ ՉԻ ՏՐՎՈՒՄ ՄԻՄՅԱՆՑ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԳԱԼ ԻՐԵՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ԵԹԵ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՎՅԱԼ ՏԵՍԱԿԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՃՇՏՈՒԹՅԱՄԲ ՈՐՈՇՎԱԾ Է ՕՐԵՆՔՈՎ:

**ՀՈԴՎԱԾ 221. ՏուժԱՆՔ ՎՃԱՐԱԾ ԿԱՄ ՎՆԱՍՆԵՐԸ ՀԱՏՈՒՑԱԾ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱՏՈՒՐԱՅՈՎ**

Պարտավորության կատարումն ուշացնելու կամ այն ոչ պատշաճ կերպով կատարելու այլ դեպքերի համար սահմանված տուժանքի (տուգանքի, տույժի) վճարումը և պարտականությունը ոչ պատշաճ կերպով կատարելու հետևանքով պատճառած վնասների հատուցումը պարտապանին չեն ազատում պարտավորությունը նատուրայով կատարելուց, բացի այնպիսի դեպքերից, երբ ուժը կորցրել է պլանային այն առաջադրանքը, որի վրա հիմնված է պարտավորությունը սոցիալիստական կազմակերպությունների միջև:

**ՀՈԴՎԱԾ 222. ԱնհատաՊԵՍ ՈՐՈՇՎՈՂ ԻՐԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ**

ԱնհաՏԱՊԵՍ ՈՐՈՇՎՈՂ ԻՐԸ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ, ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՏԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ, ՈՐ ԱՅԴ ԻՐԸ ՎԵՐՑՎԻ ՊԱՐՏԱՊԱՆԻՑ ԵՒ ՀԱՆՁՆՎԻ ԻՐԵՆ: ԱՅԴ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱՆՈՒՄ Է, ԵԹԵ ԻՐՆ ԱՐԴԵՆ ՀԱՆՁՆՎԵԼ Է ՆՈՒՅՆՊԻՍԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ: ԵԹԵ ԻՐԸ ԴԵՌ ՉԻ ՀԱՆՁՆՎԵԼ, ԱՊԱ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՑ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՆԱ, ՈՒՄ ՕԳՏԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻ ՇՈՒՏ Է ԾԱԳԵԼ, ԻՍԿ ԵԹԵ ԴԱ ԱՆՀՆԱՐ Է ՈՐՈՇԵԼ, ԱՊԱ ՆԱ, ՈՎ ԱՎԵԼԻ ՇՈՒՏ Է ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼ:

**ՀՈԴՎԱԾ 223. ՈրոշԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ**

ՈրոշԱԿԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՐՏԱՏԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՅԴ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՀԱՇՎԻՆ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ԲԽՈՒՄ ՕՐԵՆՔԻՑ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ, ԿԱՄ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ:

**ՀՈԴՎԱԾ 224. ՄեղքԸ ՈՐՊԵՍ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ**

ՊարտԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԱԾ ԿԱՄ ԱՅՆ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԱԾ ԱՆՁԸ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԿՐՈՒՄ ՄԻԱՅՆ ՄԵՂՔԻ (ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՆԶԳՈՒՇՈՒԹՅԱՆ) ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ԲԱՑԻ ՕՐԵՆՔՈՎ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՔԵՐԻՑ: ՄԵՂՔԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՔ Է ԱՊԱՑՈՒՑԻ ԱՅՆ ԱՆՁԸ, ՈՐԸ ԽԱԽՏԵԼ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ:

**ՀՈԴՎԱԾ 225. ՊարտաՊԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

ՊարտաՊԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ԴՐՎԱԾ Է ԵՂԵԼ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 173 ՀՈԴՎԱԾ), ԵԹԵ ԽՍՀ ՄիոՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՒ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ, ՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԿՐՈՒՄ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԿԱՏԱՐՈՂԸ:

**ՀՈԴՎԱԾ 226. ՊարտԱՏԻՐՈՋ ՄԵՂՔԸ: ԵրԿՈՒ ԿՈՂՄԵՐԻ ՄԵՂՔՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ**

Եթե ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԿԱՏԱՐՎԵԼ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ Է ԿԱՏԱՐՎԵԼ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՆԶԳՈՒՇՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ, ՊԱՐՏԱՊԱՆՆ ԱԶԱՏՎՈՒՄ Է ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ, ԵԹԵ ՕՐԵՆՔՈՎ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ:

Եթե պարՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԿԱՏԱՐՎԵԼ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ Է ԿԱՏԱՐՎԵԼ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐԻ ՄԵՂՔՈՎ, ԱՊԱ ԴԱՏԱՐԱՆԸ, ԱՐԲԻՏՐԱԺԸ ԿԱՄ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՐԵՆ ՆՎԱԶԵՑՆՈՒՄ Է ՊԱՐՏԱՊԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ:

ԴԱՏԱՐԱՆԸ, ԱՐԲԻՏՐԱԺԸ ԿԱՄ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՆԱԵՒ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ, ԵԹԵ ՊԱՐՏԱՏԵՐԸ ԴԻՏԱՎՈՐՅԱԼ ԿԵՐՊՈՎ ԿԱՄ ԱՆԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏԵԼ Է ԱՅՆ ՎՆԱՍՆԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆԸ, ՈՐՈՆՔ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏԵՒԱՆՔ ԵՆ, ԿԱՄ ՄԻՋՈՑՆԵՐ ՉԻ ՁԵՌՆԱՐԿԵԼ ԱՅԴ ՎՆԱՍՆԵՐԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ՍՈՒՅՆ ՀՈԴՎԱԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՐԵՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՆԱԵՒ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՊԱՐՏԱՊԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԵՐՊՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՕՐԵՆՔՈՎ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 224 ՀՈԴՎԱԾ) ԳՈՒՅՔԱՅԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԿՐՈՒՄ ԱՆԿԱԽ ԻՐ ՄԵՂՔԻՑ:

### Հոդված 227. Պարտապանի կետանցումը

Կատարումը ուշացրած պարտապանը պարտատիրոջ առաջ պատասխանատու է կետանցումով պատճառած վնասների համար եւ կետանցումից հետո կատարման պատահաբար առաջացած անհնարինության համար:
Եթե պարտապանի կետանցման հետեւանքով կատարումը պարտատիրոջ համար կորցրել է իր նշանակությունը, ապա նա կարող է հրաժարվել կատարումն ընդունելուց եւ պահանջել վնասների հատուցում: Սոցիալիստական կազմակերպությունների փոխհարաբերություններում ուշացված կատարումից հրաժարվելը թույլ է տրվում միայն օրենքով կամ պայմանագրով սահմանված դեպքերում ու կարգով:
Պարտապանը կետանցող չի համարվում, քանի դեռ պարտավորությունը չի կարող կատարվել պարտատիրոջ կետանցման հետեւանքով (սույն օրենսգրքի 229 հոդված):

### Հոդված 228. Պարտապանի կետանցումը դրամական պարտավորություններով

Դրամական պարտավորության կատարումն ուշացնող պարտապանը պարտավոր է կետանցված ժամանակվա համար վճարել ուշացրած գումարի տարեկան երեք տոկոսը, եթե օրենքով կամ պայմանագրով տոկոսների այլ չափ չի սահմանված:
Սոցիալիստական կազմակերպությունների միջեւ դրամական պարտավորություններով պարտապանը պարտավոր է ուշացման յուրաքանչյուր օրվա համար պարտատիրոջը տոկոսներ (տույժ) վճարել ԽՍՀ Միության օրենսդրությամբ սահմանված չափով:

### Հոդված 229. Պարտատիրոջ կետանցումը

Պարտատերը կետանցող է համարվում, եթե նա հրաժարվել է պարտապանի կողմից առաջարկված պատշաճ կատարումն ընդունելուց կամ չի կատարել այն գործողությունները, որոնց կատարումից առաջ պարտապանը չէր կարող կատարել իր պարտավորությունը:
Պարտատերը կետանցող է համարվում նաեւ սույն օրենսգրքի 230 հոդվածում նշված դեպքերում:
Պարտատիրոջ կետանցումը պարտապանին իրավունք է տալիս պահանջելու կետանցումով պատճառած վնասների հատուցումը, եթե պարտատերը չապացուցի, որ ուշացման պատճառը անձամբ իր կամ այն անձանց դիտավորությունը կամ անզգուշությունը չէ, որոնց վրա օրենքով կամ պարտատիրոջ հանձնարարությամբ դրված է եղել կատարման ընդունումը: Պարտատիրոջ կետանցումը դադարելուց հետո պարտապանը պատասխանատվություն է կրում ընդհանուր հիմունքներով:
Դրամական պարտավորությունով պարտապանը պարտավոր չէ տոկոսներ վճարել պարտատիրոջ կետանցման ժամանակվա համար:

## Գ Լ ՈՒ Խ 20.

## *ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱԴԱՐՈՒՄԸ*

### Հոդված 230. Պարտավորության դադարումը կատարմամբ

Պատշաճ կերպով իրականացված կատարումը դադարեցնում է պարտավորությունը:
Պարտատերը, կատարումն ընդունելուց հետո, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացագիր տալ կատարումը լրիվ կամ մասամբ ստանալու մասին: Պետական, կոոպերատիվ ու հասարակական կազմակերպությունների միջեւ կամ այդ կազմակերպությունների եւ քաղաքացիների միջեւ բանավոր կնքված գործարքների կատարման դեպքում կիրառվում է սույն օրենսգրքի 44 հոդվածի երրորդ մասով սահմանված կանոնը:
Եթե պարտապանը ի հաստատումն պարտավորության պարտքային փաստաթուղթ է տվել պարտատիրոջը, ապա պարտատերը, ընդունելով կատարումը, պետք է վերադարձնի այդ փաստաթուղթը, իսկ վերադարձնելն անհնար լինելու դեպքում՝ այդ մասին նշի իր կողմից տրվող ստացագրում: Ստացագիրը կարելի է փոխարինել վերադարձվող պարտքային փաստաթղթի վրա արվող մակագրությամբ: Պարտքային փաստաթուղթը պարտապանի մոտ գտնվելը հաստատում է պարտավորության դադարումը, քանի դեռ այլ բան չի ապացուցված:
Եթե պարտատերը հրաժարվի ստացագիր տալուց, պարտքային փաստաթուղթը վերադարձնելուց կամ այն վերադարձնելն անհնար լինելու մասին ստացագրում նշելուց, ապա պարտապանն իրավունք ունի ձգձգելու կատարումը: Այդ դեպքում

ՊԱՐՏԱՏԵՐՆ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԿԵՏԱՆՑՈՂԸ:

**ՀՈԴՎԱԾ 231. ՊարտավՈՐՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ ՀԱՇՎԱԿՑՄԱՄԲ**

ՊաՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ՄԻԱՏԵՍԱԿ ՀԱԿԸՆԴԴԵՄ ՊԱՀԱՆՋԻ ՀԱՇՎԱԿՑՄԱՄԲ, ՈՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՑԵԼ Է ԿԱՄ ՈՐԻ ԺԱՄԿԵՏԸ ՉԻ ՆՇՎԱԾ, ԿԱՄ ՆՇՎԱԾ ԿԱՄ ՈՐՈՇՎԱԾ Է ՊԱՀԱՆՋՄԱՆ ՊԱՀՈՎ:

ՀաշվԱԿՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՎԱԿԱՆ Է ՄԵԿ ԿՈՂՄԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ:

**ՀՈԴՎԱԾ 232. ՀաշվԱԿՑՄԱՆ ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**

ՉԻ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ՀԱՇՎԱԿՑԵԼ ԱՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ,

1) ՈՐՈՆՑ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ԼՐԱՑԵԼ Է ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ.

2) ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՎՆԱՍ ՀԱՍՑՆԵԼՈՒՑ ԿԱՄ ՄԱՀ ՊԱՏՃԱՌԵԼՈՒՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆԸ.

3) ՈՐՈՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ ԵՆ ՑՄԱՀ ՀՈԳ ՏԱՆԵԼՈՒՆ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 258 ՀՈԴՎԱԾ).

4) ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՅԼ ԴԵՊՔԵՐՈՒՄ:

**ՀՈԴՎԱԾ 233. ՀաշվԱԿՑՈՒՄԸ ՊԱՀԱՆՋԻ ԶԻՋՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

ՊահԱՆՋԻ ԶԻՋՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 221 ՀՈԴՎԱԾ) ՊԱՐՏԱՊԱՆՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՆՈՐ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՊԱՀԱՆՋԻ ԴԵՄ ՀԱՇՎԱԿՑԵԼՈՒ ԻՐ ՊԱՀԱՆՋԸ ՆԱԽԿԻՆ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՆԿԱՏՄԱՄԲ, ԵԹԵ ՊԱՐՏԱՊԱՆԻ ՊԱՀԱՆՋԻ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՑԵԼ Է ՄԻՆՉԵՎ ՊԱՀԱՆՋԻ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼԸ, ԿԱՄ ԵԹԵ ԱՅԴ ԺԱՄԿԵՏԸ ՉԻ ՆՇՎԱԾ ԿԱՄ ՈՐՈՇՎԱԾ Է ՊԱՀԱՆՋՄԱՆ ՊԱՀՈՎ:

**ՀՈԴՎԱԾ 234. ՊարտԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ, ԵՐԲ ՊԱՐՏԱՊԱՆՆ ՈՒ ՊԱՐՏԱՏԵՐԸ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ ԵՆ ՄԵԿ ԱՆՁԻ ՄԵՋ**

ՊարՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է, ԵՐԲ ՊԱՐՏԱՊԱՆՆ ՈՒ ՊԱՐՏԱՏԵՐԸ ՀԱՄԸՆԿՆՈՒՄ ԵՆ ՄԵԿ ԱՆՁԻ ՄԵՋ:

**ՀՈԴՎԱԾ 235. Պարտավորության դադարումը կողմերի համաձայնությամբ**

ՊարտԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ՆՈՒՅՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԵՎ ԵՂԱԾ ՄԵԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՈՒՐԻՇՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ:

ՍոցիԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ, ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ՝ ՄԵԿ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՈՒՐԻՇՈՎ ՓՈԽԱՐԻՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ, ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է, ԵԹԵ ԴԱ ՉԻ ՀԱԿԱՍՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱԿՏԻՆ:

**ՀՈԴՎԱԾ 236. Պարտավորության դադարումը կամ փոփոխումը պլանի փոփոխման հետևանքով**

ՍոցիԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԵՂԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՂՄԵՐԸ ՊԵՏՔ Է ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԴԱԴԱՐԵՑՆԵՆ ԿԱՄ ՓՈՓՈԽԵՆ ԱՅՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ԵՐԲ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱԿՏԵՐԸ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՄՆՎԱԾ Է, ՓՈՓՈԽՎԵԼ ԵՆ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ:

**ՀՈԴՎԱԾ 237. Պարտավորության դադարումը կատարումն անհնարին լինելու պատճառով**

ՊաՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ԿԱՏԱՐՄԱՆ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ, ԵԹԵ ԴԱ ՀԵՏԵՎԱՆՔ Է ԱՅՆՊԻՍԻ ՄԻ ՀԱՆԳԱՄԱՆՔԻ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱՊԱՆԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՉԷ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 224 ՀՈԴՎԱԾ):

**ՀՈԴՎԱԾ 238. Պարտավորության դադարումը քաղաքացու մահով կամ իրավաբանական անձի լուծարումով**

ՊաՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ՊԱՐՏԱՊԱՆԻ ՄԱՀՈՎ, ԵԹԵ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼ ԱՌԱՆՑ ՊԱՐՏԱՊԱՆԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ:

ՊարտԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐՈՒՄ Է ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՄԱՀՈՎ, ԵԹԵ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ԱՆՁԱՄԲ ՊԱՐՏԱՏԻՐՈՋ ՀԱՄԱՐ:

Պարտավորությունը դադարում է իրավաբանական անձի (պարտապանի կամ պարտատիրոջ) լուծարումով:

Լուծարված իրավաբանական անձի պարտավորության կատարումը ԽՍՀ Միության օրենսդրությամբ կամ Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ կարող է դրվել այլ իրավաբանական անձի վրա:

## 2. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐ

## Գ Լ ՈՒ Խ 21.

## *ԱՌՈՒԾԱԽ*

### ՀՈԴՎԱԾ 239. Առուծախի պայմանագիր

Առուծախի պայմանագրով վաճառողը պարտավորվում է գույքը հանձնել գնորդին ի սեփականություն, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել գույքը եւ որոշակի դրամական գումար վճարել նրա համար:

Եթե գնորդը պետական կազմակերպություն է կամ սույն օրենսգրքի 118[1] հոդվածում նշված այլ կազմակերպություն, ապա առաջանում է գույքի օպերատիվ կառավարման նրա իրավունքը:

***(28.07.82. խմբագրությամբ):***

### ՀՈԴՎԱԾ 240. Բնակելի տան առուծախի պայմանագիր

Քաղաքացու անձնական սեփականությունը հանդիսացող կամ համատեղ ապրող ամուսիններին եւ նրանց անչափահաս երեխաներին պատկանող բնակելի տունը (կամ նրա մի մասը) կարող է առուծախի պայմանագրի առարկա լինել սույն օրենսգրքի 106 ու 107 հոդվածների կանոնների պահպանումով, ինչպես նաեւ այն պայմանով, որ վաճառողը, նրա ամուսնու եւ նրանց անչափահաս երեխաների անունից երեք տարվա ընթացքում չվաճառվի մեկ տնից (կամ նրա մի մասից) ավելի, բացառությամբ ամուսնության կամ ժառանգման հետեւանքով ձեռք բերված տների վաճառքի:

Քաղաքացուն թույլատրվում է երեք տարվա ընթացքում մեկ անգամից ավելի բնակելի տուն օտարել նաեւ հարգելի պատճառի առկայության դեպքում՝ յուրաքանչյուր անգամ պատգամավորների շրջանային, քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի հատուկ թույլտվությամբ:

Եթե քաղաքացին կամ նրա հետ համատեղ ապրող ամուսինը եւ նրանց անչափահաս երեխաները անձնական սեփականության իրավունքով բնակելի տուն ունեն, ապա նախքան ունեցած տան սեփականության իրավունքի դադարումը նրանք պատգամավորների շրջանային, քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի թույլտվությամբ կարող են երկրորդ տունը գնել, երբ դա անհրաժեշտ է քաղաքացու ընտանիքի բնակարանային պահանջը բավարարելու համար:

Երկրորդ տունը գնվելու դեպքում առաջին տունը ենթակա է օտարման սույն օրենսգրքի 108 հոդվածի կանոններին համապատասխան:

### ՀՈԴՎԱԾ 241. Բնակելի տան առուծախի պայմանագրի ձեւը

Քաղաքում կամ քաղաքատիպ ավանում գտնվող բնակելի տան առուծախի պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով, եթե կողմերից թեկուզ մեկը քաղաքացի է, եւ գրանցվի պատգամավորների շրջանային, քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեում:

Գյուղական բնակավայրում գտնվող բնակելի տան առուծախի պայմանագիրը պետք է կնքվի գրավոր եւ գրանցվի պատգամավորների գյուղական խորհրդի գործադիր կոմիտեում:

Բնակելի տան առուծախի պայմանագիրը կնքված է համարվում նրա գրանցման պահից: Գրանցումը պետք է կատարվի նոտարական վավերացման օրվանից ամենաուշը երեք ամսում:

Այս հոդվածի կանոնների չկատարումը անվավեր է դարձնում տան առուծախի պայմանագիրը:

### ՀՈԴՎԱԾ 241.[1] Քաղաքացիների միջեւ կնքվող շինանյութերի առուծախի պայմանագրի ձեւը

Քաղաքացիների միջեւ կնքվող շինանյութերի առուծախի պայմանագիրը պետք է վավերացվի նոտարական կարգով, բացի այն դեպքերից, երբ վաճառողը գույքը գնորդին է տալիս առեւտրական կամ այլ կազմակերպություններում այն ձեռք բերելուն վերաբերյալ փաստաթղթերի հետ միասին:

Այդ պահանջը չկատարելը առաջացնում է սույն օրենսգրքի 48 հոդվածով

ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ:
***(25.06.86. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ):***

**ՀՈԴՎԱԾ 242. Գին**

ՊետաԿԱՆ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԵՎ ՄՅՈՒՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԳՆԵՐՈՎ, ԲԱՑԻ ԽՍՀ Միության ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՆՐԱ ՈՐՈՇԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՔԵՐԻՑ:
ԿոլտնտԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՉԳՆՎՈՂ ԱՎԵԼՑՈՒԿՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԻՐԵՆՑ ԳՈՒՅՔԸ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ԳՆԵՐՈՎ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՍՀ Միության ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:
***(28.07.82., 25.06.86. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ):***

**ՀՈԴՎԱԾ 243. Վաճառողի պարտականությունը՝ գնորդին նախազգուշացնելու վաճառվող իրի նկատմամբ երրորդ անձանց իրավունքների մասին**

ՊաՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼԻՍ ՎԱՃԱՌՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԳՆՈՐԴԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ ՎԱՃԱՌՎՈՂ ԻՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԲՈԼՈՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ (ՎԱՐՁԱԿԱԼԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԳՐԱՎԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ, ՑՄԱՀ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԵՎ ԱՅԼ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ) ՄԱՍԻՆ: ԱՅՍ ԿԱՆՈՆԸ ՉԿԱՏԱՐԵԼԸ ԳՆՈՐԴԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ Է ՏԱԼԻՍ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԳՆԻ ԻՋԵՑՈՒՄ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄ ԵՎ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ:

**ՀՈԴՎԱԾ 244. Վաճառողի պարտականությունը՝ պահպանելու վաճառված իրը**

ԵրԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԱՄ ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՆՈՐԴԻՆ Է ԱՆՑՆՈՒՄ ՄԻՆՉԵՎ ԻՐԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 136 ՀՈԴՎԱԾ), ՎԱՃԱՌՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՄԻՆՉԵՎ ՀԱՆՁՆՈՒՄԸ ՊԱՀՊԱՆԵԼ ԻՐԸ, ԹՈՒՅԼ ՉՏԱԼՈՎ ՆՐԱ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄ:
ԴրԱ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱԽՍԵՐԸ ԳՆՈՐԴԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՀԱՏՈՒՑԵԼ ՎԱՃԱՌՈՂԻՆ, ԵԹԵ ԴԱ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ:

**ՀՈԴՎԱԾ 245. Վաճառողի կողմից իրը հանձնելու պարտականությունը չկատարելու հետևանքները**

ԵթԵ ՎԱՃԱՌՈՂԸ, Ի ԽԱԽՏՈՒՄՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ԳՆՈՐԴԻՆ ՉԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՎԱՃԱՌՎԱԾ ԻՐԸ, ԱՊԱ ԳՆՈՐԴՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԻՐԵՆ ՀԱՆՁՆԵԼ ՎԱՃԱՌՎԱԾ ԻՐԸ ԵՎ ՀԱՏՈՒՑԵԼ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՒՇԱՑՈՒՄՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԿԱՄ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԵՎ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ:

**ՀՈԴՎԱԾ 246. Վաճառված իրն ընդունելուց կամ նրա համար վճարելուց գնորդի հրաժարվելու հետևանքները**

ԵԹԵ ԳՆՈՐԴԸ, Ի ԽԱԽՏՈՒՄՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ, ՀՐԱԺԱՐՎԻ ԳՆԱԾ ԻՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒՑ ԿԱՄ ՆՐԱ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳԻՆԸ ՎՃԱՐԵԼՈՒՑ, ԱՊԱ ՎԱՃԱՌՈՂՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ, ՈՐ ԳՆՈՐԴՆ ԸՆԴՈՒՆԻ ԻՐԸ ԵՎ ՎՃԱՐԻ ԳԻՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՏՈՒՑԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՒՇԱՑՈՒՄՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ, ԿԱՄ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԵՎ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ:

**ՀՈԴՎԱԾ 247. Վաճառված իրի որակը**

ՎաճաՌՎԱԾ ԻՐԻ ՈՐԱԿԸ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ, ԻՍԿ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՉԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ՍՈՎՈՐԱԲԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ:
ԱռԵՎՏՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՎԱՃԱՌՎՈՂ ԻՐԸ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻ ՏՎՅԱԼ ՏԵՍԱԿԻ ԻՐԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՍՏԱՆԴԱՐՏԻՆ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ԿԱՄ ՆՄՈՒՇՆԵՐԻՆ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ԲԽՈՒՄ ՏՎՅԱԼ ՏԵՍԱԿԻ ԱՌՈՒԾԱԽԻ ԲՆՈՒՅԹԻՑ:
***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ):***

**ՀՈԴՎԱԾ 248. Գնորդի իրավունքները իրեն ոչ պատշաճ որակի իր վաճառվելու դեպքում**

ԳնորդԸ, ՈՐԻՆ ՎԱՃԱՌՎԵԼ Է ՈՉ ՊԱՏՇԱՃ ՈՐԱԿԻ ԻՐ, ԵԹԵ ՎԱՃԱՌՈՂԸ ՆԱԽՕՐՈՔ ՉԻ ՀԱՅՏՆԵԼ ԻՐԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ԸՍՏ ԻՐ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ՝

ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՈՐՈՇՎԱԾ ՏԵՍԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ ԻՐԸ ՓՈԽԱՐԻՆԵԼ ՊԱՏՇԱՃ ՈՐԱԿԻ ԻՐՈՎ.
ԿԱՄ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆՈՐԵՆ ԻՋԵՑՆԵԼ ԳՆՄԱՆ ԳԻՆԸ.
ԿազմԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՀԱՏՈՒՑԵԼ ԱՅՆ ՎՆԱՍԸ, ՈՐ ՆՐԱ ԱՇԽԱՏՈՂՆԵՐՆ ԻՐԵՆՑ ՄԵՂՔՈՎ ՊԱՏՃԱՌԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ (ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԻՍ:

### ՀՈԴՎԱԾ 449. ՊատասԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ

ՊետԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ Է ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 447 ԵՎ 448 ՀՈԴՎԱԾՆԵՐ), ԵԹԵ ՕՐԵՆՔՈՎ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ: ԱյդՊԻՍԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՆՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

***(28.06.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ***

### ՀՈԴՎԱԾ 450. ՊատասԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ

ԱպօՐԻՆԻ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՒ, ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ, ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼՈՒ, ԿԱԼԱՆՔԻ ԿԱՄ ՈՒՂՂԻՉ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՎՈՎ ԱՊՕՐԻՆԱԲԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑՈՒՆ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ Է ԼՐԻՎ ԾԱՎԱԼՈՎ՝ ԱՆԿԱԽ ՀԵՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՄԵՂՔԻՑ:

***(28.06.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 451. ԱնհրաժԵՇՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍԸ

ՀատուՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՉԷ ԱՅՆ ՎՆԱՍԸ, ՈՐ ՊԱՏՃԱՌՎԵԼ Է ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ, ԵԹԵ ԸՆԴՈՒՄԻՆ ՉԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՆՑՎԵԼ ԱՅԴ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

### ՀՈԴՎԱԾ 452. ՊատԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ

ԾայրաՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԸ ՊԵՏՔ Է ՀԱՏՈՒՑԻ ԱՅԴ ՎՆԱՍԸ ՊԱՏՃԱՌՈՂ ԱՆՁԸ:

ՀաշՎԻ ԱՌՆԵԼՈՎ ԱՅՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ, ՈՐՈՆՑՈՒՄ ՀԱՍՑՎԵԼ Է ԱՅԴՊԻՍԻ ՎՆԱՍԸ, ԴԱՏԱՐԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԴՐԱ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴՆԵԼ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻ ՎՐԱ, ՈՐԻ ՇԱՀԵՐԻՑ ԵԼՆԵԼՈՎ ԳՈՐԾԵԼ Է ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂԸ, ԿԱՄ ՎՆԱՍ ՀԱՏՈՒՑԵԼՈՒՑ ԼՐԻՎ ԿԱՄ ՄԱՍՆԱԿԻ ԱԶԱՏԵԼ ԻՆՉՊԵՍ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԻՆ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂԻՆ:

**Հոդված 453. Պատասխանատվությունը տասնհինգ տարեկան չդարձած անչափահասի պատճառած վնասի համար**

Տասնիինգ տարեկան չդարձած անչափահասի պատճառած վնասի համար պատասխանատու են նրա ծնողները կամ խնամակալը, եթե չապացուցեն, որ վնասը առաջացել է ոչ իրենց մեղքով:

Եթե տասնիինգ տարեկան չդարձած անչափահասը վնաս է պատճառել ուսումնական հաստատության, դաստիարակչական կամ բուժական հիմնարկի հսկողության տակ գտնված ժամանակ, ապա այդ հաստատությունը կամ հիմնարկը պատասխանատու է պատճառած վնասի համար, եթե չապացուցի, որ վնասը առաջացել է ոչ իր մեղքով:

**Հոդված 454. Պատասխանատվությունը տասնհինգից մինչեւ տասնութ տարեկան անչափահասի պատճառած վնասի համար**

Տասնհինգից մինչեւ տասնութ տարեկան անչափահասը իր պատճառած վնասի համար պատասխանատու է ընդհանուր հիմքերով (սույն օրենսգրքի 447, 452 եւ 457 հոդվածներ):

Այն դեպքում, երբ տասնհինգից մինչեւ տասնութ տարեկան անչափահասը չունի գույք կամ վաստակ, որը բավականացներ վնասի հատուցման համար, ապա վնասի համապատասխան մասը պետք է հատուցեն նրա ծնողները կամ հոգաբարձուները, եթե չապացուցեն, որ վնասը առաջացել է ոչ իրենց մեղքով: Նրանց այդ պարտականությունը դադարում է, երբ վնաս պատճառողը չափահաս է դառնում, ինչպես նաեւ այն դեպքում, երբ մինչեւ չափահաս դառնալը նա գույք կամ վաստակ ունենա, որը բավական է վնասի հատուցման համար:

**Հոդված 455. Պատասխանատվությունը անգործունակ ճանաչված քաղաքացու պատճառած վնասի համար**

Անգործունակ ճանաչված քաղաքացու վնասի համար (սույն օրենսգրքի 16 հոդված) պատասխանատու է նրա խնամակալը կամ այն կազմակերպությունը, որը պարտավոր է հսկողություն ապահովել նրա նկատմամբ, եթե չապացուցի, որ վնասը առաջացել է ոչ իր մեղքով:

**Հոդված 456. Պատասխանատվությունը այն քաղաքացու պատճառած վնասի համար, որն ընդունակ չէ հասկանալու իր գործողությունների նշանակությունը**

Գործունակ քաղաքացին, որը վնաս է պատճառել այնպիսի վիճակում, երբ ինքը չէր կարող հասկանալ կամ ղեկավարել իր գործողությունները, պատասխանատու չէ իր պատճառած վնասի համար: Սակայն նա չի ազատվում պատասխանատվությունից, եթե ալկոհոլի կամ թմրադեղերի գործածությամբ կամ այլ միջոցներով ինքն է այդպիսի վիճակի հասցրել իրեն:

**Հոդված 457. Պատասխանատվությունը առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասի համար**

Այն կազմակերպություններն ու քաղաքացիները, որոնց գործունեությունը կապված է շրջապատողների համար առավել վտանգի հետ (տրանսպորտային կազմակերպությունները, արդյունաբերական ձեռնարկությունները, կառույցները, ավտոմոբիլների տերերը եւայլն), պարտավոր են հատուցել առավել վտանգի աղբյուրով պատճառված վնասը, եթե չապացուցեն, որ վնասը առաջացել է անհաղթահարելի ուժի կամ տուժողի դիտավորության հետեւանքով:

**Հոդված 458. Պատասխանատվությունը մի քանի անձանց համատեղ պատճառած վնասի համար**

Համատեղ վնաս պատճառած անձինք համապարտ պատասխանատվություն են կրում տուժողի առաջ:

**Հոդված 459. Վնաս պատճառող անձի նկատմամբ ռեգրեսի իրավունքը**

Այն անձը, որը հատուցել է ուրիշի պատճառած վնասը, վնաս պատճառող անձի նկատմամբ հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունք ունի հատուցվածի չափով, եթե այլ չափ չի սահմանված օրենքով:

Ծնողները, խնամակալը կամ հոգաբարձուն, ինչպես նաեւ սույն օրենսգրքի 453 ու 455 հոդվածներում նշված կազմակերպությունները, որոնք հատուցել են չափահաս

ՉԴԱՐՁԱԾ ԿԱՄ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱՉՎԱԾ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍԸ, ՌԵԳՐԵՍԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՆ ԱՅԴ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ:

### ՀՈԴՎԱԾ 460. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ԾԱՎԱԼԸ, ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՉԱՓԸ

ՎՆԱՍԸ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎՃԻՌ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ ԴԱՏԱՐԱՆԸ, ԱՐԲԻՏՐԱԺԸ ԿԱՄ ՄԻՋՆՈՐԴ ԴԱՏԱՐԱՆԸ, ԳՈՐԾԻ ՊԱՐԱԳԱՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ, ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆՈՒՄ Է ՎՆԱՍԸ ՀԱՏՈՒՑԵԼ ՆԱՏՈՒՐԱՅՈՎ (ՏԱԼ ՆՈՒՅՆ ՏԵՍԱԿԻ ՈՒ ՈՐԱԿԻ ԻՐ, ՇՏԿԵԼ ՎՆԱՍՎԱԾ ԻՐԸ ԵՎԱՅԼՆ) ԿԱՄ ԼՐԻՎ ՀԱՏՈՒՑԵԼ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ $7^1$ ԵՎ 217 ՀՈԴՎԱԾՆԵՐ):

***(460-ՐԴ ՀՈԴՎԱԾԸ ՓՈՓ. 23.06.97 ՀՕ-135)***

### ՀՈԴՎԱԾ 461. ՏուժՈՂԻ ՄԵՂՔԸ ԵՎ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂ ԱՆՁԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼԸ

ԵԹԵ ՏՈՒԺՈՂԻ ԿՈՊԻՏ ԱՆԶԳՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ ՆՊԱՍՏԵԼ Է ՎՆԱՍԻ ԱՌԱՋԱՑՄԱՆԸ ԿԱՄ ԱՎԵԼԱՑՄԱՆԸ, ԱՊԱ ՆԱՅԱԾ ՏՈՒԺՈՂԻ ՄԵՂՔԻ ԱՍՏԻՃԱՆԻՆ (ԻՍԿ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂԻ ՄԵՂՔԻ ԴԵՊՔՈՒՄ ՆԱԵՎ ՆՐԱ ՄԵՂՔԻ ԱՍՏԻՃԱՆԻՆ) ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՍՀ Միության ՕՐԵՆՔՈՎ, ՊԵՏՔ Է ՆՎԱԶԵՑՎԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՄԵՐԺՎԻ:

ԴատԱՐԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՆՎԱԶԵՑՆԵԼ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԸ, ՆԱՅԱԾ ՆՐԱ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՎԻՃԱԿԻՆ:

***(30.10.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 462. Վնասի ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՎՆԱՍԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

ՀաշՄՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ԱՅԼ ՎՆԱՍ ՀԱՍՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎՆԱՍԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՏՈՒԺՈՂԻՆ ՀԱՏՈՒՑԵԼ ԱՅՆ ՎԱՍՏԱԿԸ, ՈՐԻՑ ՆԱ ԶՐԿՎԵԼ Է ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԿԱՄ ԱՅՆ ՊԱԿԱՍԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՏՈՒՑԵԼ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՎՆԱՍԵԼՈՒՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԸ (ՈՒԺԵՂ ՍՆՈՒՆԴ, ՊՐՈԹԵԶ ԴՆԵԼԸ ԿՈՂՄՆԱԿԻ ԽՆԱՄՔ ԵՎ ԱՅԼՆ):

ԴիտԱՎՈՐՅԱԼ ՀԱՆՑԱՎՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԱՆՑՈՒՄՈՎ ԿԱՄ ՏՈՒԺՈՂԻ ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՀԱՆԿԱՐԾԱԿԻ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՈԳԵԿԱՆ ԽԻՍՏ ՀՈՒԶՄԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒՑ) ԱՅԴ ՀԱՆՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՊԱՐՏՎԱԾ ԱՆՁԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ԵԿԱՄՈՒՏ ՀԱՏՈՒՑԵԼ ՏՈՒԺՈՂԻ ՍՏԱՑԻՈՆԱՐ ԲՈՒԺՄԱՆ ՎՐԱ ԾԱԽՍՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԸ:

***(28.05.75. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 463. ՊատասխԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՎՆԱՍԵԼՈՒ ԵՎ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ ՄՈՒԾԵԼ

Եթե ԱՇԽԱՏՈՂԻՆ ՆՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ (ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ) ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՄՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՏՃԱՌՎԵԼ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ԱՅԼ ՎՆԱՍ Է ՀԱՍՑՎԵԼ ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՄԵՂՔՈՎ, ՈՐԸ ՆՐԱ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՄՈՒԾԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ, ԱՊԱ ԱՅԴ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՊԵՏՔ Է ՏՈՒԺՈՂԻՆ ՀԱՏՈՒՑԻ ՎՆԱՍԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԸ ԳԵՐԱԶԱՆՑՈՒՄ Է ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՆՊԱՍՏԻ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆԸ ՎՆԱՍՎԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՆՐԱՆ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԵՎ ՆՐԱ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏՈՐԵՆ ՍՏԱՑՎՈՂ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԳՈՒՄԱՐԸ: ԲացառուԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՅՍ ԿԱՆՈՆԻՑ ԿԱՐՈՂ ԵՆ ՍԱՀՄԱՆՎԵԼ ԽՍՀ Միության ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:

ՏուժՈՂԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ԱՅՆ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿ ԱՆՁԻՆՔ, ՈՐՈՆՔ ԳՏՆՎԵԼԻՍ ԵՆ ԵՂԵԼ ՄԵՌԱԾԻ ԽՆԱՄՔԻ ՏԱԿ ԿԱՄ ՄԻՆՉԵՎ ՄԱՀՎԱՆ ՕՐԸ ՆՐԱՆԻՑ ԱՊՐՈՒՍՏԻ ՄԻՋՈՑՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵՌԱԾԻ ԱՅՆ ԵՐԵԽԱՆ, ՈՐԸ ԾՆՎԵԼ Է ՆՐԱ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ: ՀիշյԱԼ ԱՆՁԱՆՑ ՎՆԱՍԸ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ Է ՏՈՒԺՈՂԻ ՎԱՍՏԱԿԻ ԱՅՆ ԲԱԺՆԻ ՉԱՓՈՎ, ՈՐԸ ՆՐԱՆՔ ՈՐՊԵՍ ԱՊՐՈՒՍՏԻ ՄԻՋՈՑ ՍՏԱՆՈՒՄ ԷԻՆ ԿԱՄ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵԻՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՏՈՒԺՈՂԻ ԿԵՆԴԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ:

ՎՆԱՍԸ ՀԱՏՈՒՑՎՈՒՄ Է՝

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻՆ՝ ՄԻՆՉԵՎ ՏԱՍՆՎԵՑ ՏԱՐԵԿԱՆ, ԻՍԿ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ՝ ՄԻՆՉԵՎ ՏԱՍՆՈՒԹ ՏԱՐԵԿԱՆ ԴԱՌՆԱԼԸ.

ՀԻՍՈՒՆՀԻՆԳ ՏԱՐԵԿԱՆԻՑ ՄԵԾ ԿԱՆԱՆՑ ԵՎ ՎԱԹՍՈՒՆ ՏԱՐԵԿԱՆԻՑ ՄԵԾ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ՝ ՑՄԱՀ.

ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻՆ՝ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՄԻՋՈՑՈՒՄ.

մեռածի ամուսնու կամ ծնողին, անկախ նրա տարիքից եւ աշխատունակությունից, եթե նա չի աշխատում եւ խնամում է մեռածի ութ տարեկան չդարձած երեխաներին, թոռներին, եղբայրներին կամ քույրերին` մինչեւ դրանց ութ տարեկան դառնալը:

### Հոդված 464. Պատասխանատվությունը այն քաղաքացու առողջությունը վնասելու եւ մահվան դեպքում, որի համար վնաս պատճառողը պարտավոր չէ ապահովագրական վճարներ մուծել

Եթե պետական սոցիալական ապահովագրության ենթակա քաղաքացուն հաշմություն է պատճառվել կամ նրա առողջությանը այլ վնաս է հասցվել այն կազմակերպության կամ քաղաքացու կողմից, որը պարտավոր չէ տուժողի համար պետական սոցիալական ապահովագրության վճարներ մուծել, ապա այդ կազմակերպությունը կամ քաղաքացին պետք է սույն օրենսգրքի 447, 448 եւ 457 հոդվածների կանոնների համաձայն տուժողին հատուցի վնասի այն մասը, որը գերազանցում է նրա կողմից ստացվող նպաստի կամ առողջության վնասումից հետո նրան նշանակված եւ նրա կողմից փաստորեն ստացվող կենսաթոշակի գումարը:

Տուժողի մահվան դեպքում վնասի հատուցում ստանալու իրավունք ունեն սույն օրենսգրքի 463 հոդվածի երկրորդ մասում նշված քաղաքացիները` այդ մասում սահմանված չափերով, այն ժամկետներում, որ նշված են նույն հոդվածի երրորդ մասում:

### Հոդված 465. Վնասի հատուցումը այն քաղաքացու առողջությունը վնասելու համար, որին նպաստ կամ կենսաթոշակ չի նշանակվել

Եթե պետական սոցիալական ապահովագրության ենթակա քաղաքացուն հաշմություն պատճառվելու կամ նրա առողջությանը այլ վնաս հասցվելու կապակցությամբ նպաստ կամ կենսաթոշակ չի նշանակվել, ապա պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունը կամ քաղաքացին պարտավոր է լրիվ չափով հատուցել պատճառած վնասը (սույն օրենսգրքի 462 հոդված):

### Հոդված 466. Սոցիալական ապահովագրության եւ սոցիալական ապահովության մարմինների ռեգրեսային պահանջները

Պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունը կամ քաղաքացին պարտավոր է պետական սոցիալական ապահովագրության կամ սոցիալական ապահովության մարմնի ռեգրեսային պահանջով հատուցել նպաստների կամ կենսաթոշակների այն գումարները, որոնք վճարվել են սույն օրենսգրքի 463 եւ 464 հոդվածներում նշված անձանց: Նույնպիսի ռեգրեսային պահանջ կարող է ներկայացնել այն կոլտնտեսությունը, որը կենսաթոշակային ապահովություն է վճարում սույն օրենսգրքի 467 հոդվածում նշված քաղաքացիներին:

Վնասի հատուցման չափը պակասեցվելու դեպքում (սույն օրենսգրքի 461 հոդված) համապատասխանորեն նվազեցվում է նաեւ ռեգրեսային պահանջով կատարվելիք հատուցման չափը:

### Հոդված 467. Պատասխանատվությունը այն քաղաքացու առողջությունը վնասելու եւ մահվան համար, որը սոցիալական ապահովագրության ենթակա չէ

Եթե հաշմություն կամ այլ վնաս է պատճառվել այն քաղաքացու առողջությանը, որը պետական սոցիալական ապահովագրության ենթակա չէ, ապա պատճառված վնասի համար պատասխանատու կազմակերպությունը կամ քաղաքացին պարտավոր է տուժողին հատուցել նրա առողջության վերականգնման հետ կապված ծախսերը, ինչպես նաեւ նրա աշխատունակությունը կորցնելու կամ պակասելու հետեւանքով առաջացած վնասը այն չափով, որը հաշվարկվում է համապատասխան կատեգորիայի բանվորների ու ծառայողների վաստակի համեմատ, եթե օրենքով այլ բան չի նախատեսված:

Եթե հաշմություն կամ այլ վնաս է պատճառվել այն կոլտնտեսականի առողջությանը, ապա վնասի համար պատասխանատու կազմակերպությունը կամ քաղաքացին պարտավոր է տուժողին հատուցել նրա առողջության վերականգնման հետ կապված ծախսերը, ինչպես նաեւ նրա աշխատունակությունը կորցնելու կամ պակասելու հետեւանքով առաջացած վնասը տուժողի կորցրած այն եկամուտների չափով, որ նա կստանար կոլտնտեսության հանրային տնտեսությանը մասնակցելիս կամ այդ եկամուտների այն մասը, որը գերազանցում է կոլտնտեսականների համար սահմանված կարգով տուժողի կողմից ստացվող կենսաթոշակային ապահովության գումարը:

Տուժողի մահվան դեպքում վերոհիշյալ կարգով հաշվարկվող վնասի հատուցում ստանալու իրավունք ունեն իրավունք ունեն սույն օրենսգրքի 463 հոդվածի երկրորդ մասում նշված քաղաքացիները` նույն հոդվածի երրորդ մասում նշված ժամկետներով:

### Հոդված Տասնհինգ տարեկան չդարձած քաղաքացու առողջությանը պատճառած

## 468. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Տասնհինգ տարեկան չդարձած եւ վաստակ չունեցող քաղաքացու առողջությանը հաշմություն կամ այլ վնաս պատճառելու համար պատասխանատու կազմակերպությունը կամ քաղաքացին պարտավոր է հատուցել տուժողի առողջության վնասման հետ կապված ծախսերը:

Տուժողի տասնհինգ տարեկան դառնալուց հետո վնասի համար պատասխանատու կազմակերպությունը կամ քաղաքացին պարտավոր է տուժողին հատուցել նաեւ նրա աշխատունակությունը կորցնելու կամ պակասելու հետ կապված վնասը, ելնելով ոչ որակյալ բանվորի միջին վաստակից տվյալ վայրում:

Եթե տասնհինգ տարեկան չդարձած քաղաքացին իր առողջության վնասման պահին վաստակ է ունեցել, ապա վնասը պետք է նրան հատուցվի, ելնելով այդ վաստակի չափից, բայց ոչ պակաս, քան ոչ որակյալ բանվորի նվազագույն վաստակը տվյալ վայրում:

Տուժողի աշխատանքային գործունեությունն սկսվելուց հետո տուժողն իրավունք ունի պահանջելու իր ստացած որակավորմանը համապատասխան ավելացնել այն վնասի հատուցումը, որը կապված է առողջության վնասման հետեւանքով նրա աշխատունակությունը պակասելու հետ` ելնելով նույն որակավորման աշխատողի վարձատրության չափից:

## ՀՈԴՎԱԾ 469. ՏՈՒԺՈՂԻ ՊԱՀԱՆՋՈՎ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ` ՆՐԱ ԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՓՈՓՈԽՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Աշխատունակությունը մասամբ կորցրած տուժողը ուշացած ժամանակ իրավունք ունի իրեն հաշմություն պատճառելու կամ առողջությանը այլ վնաս հասցնելու համար պատասխանատու կազմակերպությունից կամ քաղաքացուց պահանջելու համապատասխանորեն ավելացնել դատարանով որոշված հատուցման չափը, եթե առողջությանը հասցված վնասի կապակցությամբ հետագայում նվազել է նրա աշխատունակությունը` նրան հատուցում որոշելու պահին նրա ունեցած աշխատունակության համեմատությամբ, կամ եթե պակասեցվել է պետական սոցիալական ապահովագրության կարգով նրա կողմից ստացվող կենսաթոշակի չափը:

## ՀՈԴՎԱԾ 470. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՉԱՓԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌՈՂ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԱՆՋՈՎ

Այն կազմակերպությունը կամ քաղաքացին, որից որոշվել է գանձել տուժողին հաշմություն պատճառելու կամ նրա առողջությանը վնաս հասցնելու հետեւանքով նրա աշխատունակությունը պակասելու հետ կապված վնասի հատուցումը, ուշացած ժամանակ իրավունք ունի պահանջելու, որ համապատասխանորեն պակասեցվի որոշված հատուցման չափը, եթե աճել է տուժողի աշխատունակությունը նրան հատուցում որոշելու պահին եղածի համեմատությամբ, կամ եթե ավելացվել է պետական սոցիալական ապահովագրության կարգով նրա կողմից ստացվող կենսաթոշակի չափը:

## ՀՈԴՎԱԾ 471. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

Տուժողի աշխատունակությունը պակասելու հետ կապված վնասի, ինչպես նաեւ նրա մահվան հետ կապված վնասի ինչպես նաեւ նրա մահվան հետ կապված վնասի հատուցումը կատարվում է ամենամսյա վճարումներով:

## ՀՈԴՎԱԾ 472. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԴԱԴԱՐՈՒՄ Է ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՎԱԾ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԸ

Իրավաբանական անձի վերակառուցման դեպքում ամենամսյա այն վճարումները (սույն օրենսգրքի 471 հոդված), որ նա պարտավոր է կատարել հաշմություն պատճառելու կամ նրա առողջությանը այլ վնաս հասցնելու կամ մահ պատճառելու կապակցությամբ, դրվում են իրավաբանական անձի իրավահաջորդների վրա:

Իրավահաջորդ չունեցող իրավաբանական անձի լուծարման դեպքում տուժողին կամ սույն օրենսգրքի 463 հոդվածի երկրորդ մասում նշված անձանց հասանելիք վճարումները պետք է կապիտալացվեն պետական ապահովագրության կանոններով ու նրա մարմիններին մուծվեն` վնասի հատուցման վերաբերյալ համապատասխան վճռի մեջ նշված չափով եւ ժամկետներին դրանք վճարելու համար:

Իրավաբանական անձի լուծարման դեպքում քաղաքացու առողջության վնասման կամ մահվան հետ կապված այն վնասի հատուցման վերաբերյալ հայցերը, որը պատճառել է լուծարված իրավաբանական անձը, ներկայացվում են վերադաս կազմակերպությանը կամ իրավաբանական անձի լուծարման վերաբերյալ որոշման մեջ նշված կազմակերպությանը:

Տուժողի կողմից ստացվող վնասի հատուցման չափը սույն օրենսգրքի 469 ու 470 հոդվածներում նախատեսված հիմքերով ավելացնելու կամ պակասեցնելու վերաբերյալ

պահանջը ներկայացվում է իրավահաջորդին կամ համապատասխանորեն այս հոդվածի երրորդ մասում նշված կազմակերպություններն՝ կամ համապատասխանորեն վնասը հատուցող իրավաբանական անձի իրավահաջորդի, կամ այս հոդվածի երրորդ մասում նշված կազմակերպությունների կողմից:

### Հոդված 473. Թաղման ծախսերի հատուցումը

Տուժողի մահվան դեպքում թաղման ծախսերը տուժողի մահվան հետ կապված վնասի համար պատասխանատու կազմակերպությունը կամ քաղաքացին հատուցում է՝ այդ ծախսերը կրող անձին:

## Գ Լ ՈՒ Խ 42.

## *ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՓՐԿԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

### Հոդված 474. Սոցիալիստական գույքը փրկելիս կրած վնասի հատուցումը

Սպառնացող վտանգից սոցիալիստական գույքը փրկելիս քաղաքացու կրած վնասը պետք է հատուցի այն կազմակերպությունը, որի գույքը փրկելիս է եղել տուժողը:

Այդ վնասի հատուցման նկատմամբ համապատասխանորեն կիրառվում են սույն օրենսգրքի 447 հոդվածի առաջին մասի, 458, 460, 462 հոդվածների, 463 հոդվածի երկրորդ ու երրորդ մասերի, 464, 465 եւ 467-473 հոդվածների կանոնները:

## Գ Լ ՈՒ Խ 43. *ԱՆՀԻՄՆ ԿԵՐՊՈՎ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒՑ ԿԱՄ ԳՈՒՅՔ ԽՆԱՅԵԼՈՒՑ ԾԱԳՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

### Հոդված 475. Անհիմն կերպով ձեռք բերած կամ անհիմն կերպով խնայած գույքը վերադարձնելու պարտականությունը

Այն անձը, որը օրենքով կամ գործարքով սահմանված հիմքեր չունենալով գույք է ձեռք բերել ուրիշի հաշվին, պարտավոր է վերջինիս վերադարձնել անհիմն կերպով ձեռք բերած գույքը:

Նույնպիսի պարտականություն է ծագում, երբ հետագայում վերանում է այն հիմքը, որով ձեռք է բերվել գույքը:

Անհիմն կերպով ձեռք բերած գույքը նատուրայով վերադարձնելն անհնարին լինելու դեպքում պետք է հատուցվի նրա արժեքը այն չափով, որչափով կգնահատվեր գույքը ձեռք բերվելու պահին:

Այն գույքը, որը ուրիշ անձի հաշվին ձեռք է բերվել ոչ թե գործարքով, այլ ուրիշ այնպիսի գործողությունների շնորհիվ, որոնք ակնհայտ հակասում են սոցիալիստական պետության ու հասարակության շահերին, բռնագանձվում է հօգուտ պետության, եթե բռնագրավման ենթակա չէ:

Անհիմն կերպով գույք ստացող անձը պարտավոր է վերադարձնել կամ հատուցել նաեւ այն բոլոր եկամուտները, որոնք նա այդ գույքից ստացել է կամ պետք է ստանար այն պահից ի վեր, երբ ինքն իմացել է կամ պետք է իմանար գույքը ստանալն անհիմն լինելու մասին:

Այս կանոնները տարածվում են այն դեպքի վրա, երբ ուրիշ անձի հաշվին գույք խնայելը օրենքով կամ պայմանագրով սահմանված հիմքեր չի ունեցել:

### Հոդված 476. Այն գույքը, որը ենթակա չէ վերադարձման

Որպես անհիմն կերպով ձեռք բերված ետ պահանջելու ենթակա չէ՝

1) այն գույքը, որը ի կատարումն պարտավորության հանձնված է մինչեւ կատարման ժամկետը լրանալը.

2) հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո ի կատարումն պարտավորության հանձնված գույքը այն դեպքերում, երբ այդպիսի կատարումը թույլ է տրվում սույն օրենսգրքի 89 հոդվածով.

3) ավելորդ վճարված կամ հետագայում վերացված հիմքով վճարված հեղինակային վարձատրությունը կամ հայտնագործության, ինչպես նաեւ գյուտի կամ ռացիոնալիզատորական առաջարկության համար վարձատրությունը, եթե կազմակերպությունը վճարումը կատարել է կամավոր կերպով՝ երբ նրա կողմից հաշվային սխալ եւ ստացողի կողմից անբարեխղճություն չի եղել:

## ՀԱՏՎԱԾ 4. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

*/ՀԱՏՎԱԾ 4 ՈՒԺԸ ԿՈՐՑՐԵԼ Է 13.05.96 ՕՐԵՆՔՈՎ/*

**Հոդված 477. Այն երկերը, որոնց վրա տարածվում է հեղինակային իրավունքը**

Հեղինակային իրավունքը տարածվում է գիտության, գրականության կամ արվեստի երկերի վրա, անկախ երկի ձեւից, նպատակից ու արժանիքներից, ինչպես նաեւ այն վերարտադրելու եղանակից:

Հեղինակային իրավունքը տարածվում է լույս ընծայված կամ լույս չընծայված, բայց որեւէ այնպիսի օբյեկտիվ ձեւով արտահայտված երկերի վրա, որը թույլ է տալիս վերարտադրել հեղինակի ստեղծագործական գործունեության արդյունքը (ձեռագիր, գծագիր, պատկեր, հրապարակային արտասանություն կամ կատարում, ժապավեն, մեխանիկական կամ մագնիսային գրառում եւ այլն):

Հեղինակային իրավունքի առարկա կարող են լինել՝

բանավոր երկերը (ճառեր, դասախոսություններ, զեկուցումներ եւ այլն).

գրավոր երկերը (գրական, գիտական եւ այլ երկեր).

դրամատիկական եւ երաժշտադրամատիկական, ինչպես նաեւ տեքստավոր եւ անտեքստ երաժշտական երկերը.

թարգմանությունները.

սցենարները, սցենարների պլանները.

կինոֆիլմերը, հեռուստատեսային ֆիլմերը, ռադիո եւ հեռուստատեսային հաղորդումները.

խորեոգրաֆիական երկերը եւ մնջախաղերը, որոնց բեմադրության մասին կամ գրավոր կամ այլ եղանակով շարադրված ցուցումներ.

նկարչության, քանդակագործության, ճարտարապետության, գծանկարչական եւ դեկորատիվ-կիրառական արվեստի երկերը, պատկերազարդումները նկարները, գծագրերը.

այն հատակագծերը, էսքիզները եւ պլաստիկ երկերը, որոնք վերաբերում են գիտությանը, տեխնիկային կամ դրամատիկական կամ երաժշտադրամատիկական երկի բեմադրությանը.

աշխարհագրական, երկրաբանական եւ այլ քարտեզներ.

լուսանկարչական երկերը կամ լուսանկարչությանը համանման եղանակներով ստացված երկերը.

մեխանիկական կամ այլ տեխնիկական գրառման օգնությամբ արտահայտված երկերը.

այլ երկեր

Լուսանկարչական երկերի կամ լուսանկարչությանը համանման եղանակներով ստացված երկերի նկատմամբ հեղինակային իրավունքը ճանաչվում է, եթե երկի յուրաքանչյուր օրինակի վրա նշված է հեղինակի անունը, երկը լույս ընծայելու վայրն ու թվականը:

***(28.08.74. խմբագրությամբ)***

**Հոդված 478. Լույս ընծայված երկեր**

Երկը լույս ընծայված (հրապարակված) է համարվում, եթե այն հրատարակվել է, հրապարակորեն կատարվել է, հրապարակորեն ցուցադրվել է, հաղորդվել է ռադիոյով կամ հեռուստատեսությամբ, կամ որեւէ այլ եղանակով հաղորդվել է անորոշ թվով անձանց:

Երկի լույս ընծայում (հրապարակում) չի համարվում երկի բովանդակության շարադրումը պարունակող ինֆորմացիան, իսկ Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհրդի որոշումներով նախատեսված դեպքերում՝ նաեւ երկի բազմացումը ձեռագրի իրավունքով:

**Հոդված 479. Հեղինակային իրավունքը ԽՍՀՄ տերիտորիայում լույս ընծայված երկերի նկատմամբ**

ԽՍՀՄ տերիտորիայում առաջին անգամ լույս ընծայված կամ լույս ընծայված, բայց որեւէ օբյեկտիվ ձեւով ԽՍՀՄ տերիտորիայում գտնվող երկի նկատմամբ հեղինակային իրավունքը ճանաչվում է հեղինակի եւ նրա ժառանգների համար, անկախ նրանց քաղաքացիությունից, ինչպես նաեւ հեղինակի այլ իրավահաջորդների համար:

***(28.08.74. խմբագրությամբ)***

**Հոդված 480. Հեղինակային իրավունքը արտասահմանում լույս ընծայված երկերի նկատմամբ**

Հեղինակային իրավունքը ճանաչվում է Հայաստանի Հանրապետության եւ միութենական մյուս հանրապետությունների այն քաղաքացիների համար, որոնց երկերը առաջին անգամ լույս են ընծայվել կամ որեւէ օբյեկտիվ ձեւով գտնվում են օտարերկրյա պետության տերիտորիայում, ինչպես նաեւ նրանց իրավահաջորդների համար:

Մյուս անձանց համար հեղինակային իրավունքը այն երկի նկատմամբ, որն առաջին

ԱՆԳԱՄ ԼՈՒՅՍ Է ԸՆԾԱՅՎԵԼ ԿԱՄ ՈՐԵՎԷ ՕԲՅԵԿՏԻՎ ՁԵՎՈՎ ԳՏՆՎՈՒՄ Է ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՐԻՏՈՐԻԱՅՈՒՄ, ՃԱՆԱՉՎՈՒՄ Է ԽՍՀՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ: Միջազգային ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՐԻՏՈՐԻԱՅՈՒՄ ԵՐԿԻ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՄԱՆ ՓԱՍՏԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄՅՈՒՍ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՐԻՏՈՐԻԱՅՈՒՄ ՃԱՆԱՉՎՈՒՄ Է ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵԹԵ ԱՅԴ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՆՐԱՆՑ Է ՓՈԽԱՆՑՎՈՒՄ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

***(28.08.74., 28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 481. ՀեղինԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՀԵՂԻՆԱԿԻՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ՝

1) ՕՐԵՆՔՈՎ ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԲՈԼՈՐ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ՝ ԻՐ ԱՆՈՒՆՈՎ, ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԱՆՈՒՆՈՎ (ԿԵՂԾԱՆՈՒՆՈՎ) ԿԱՄ ԱՌԱՆՑ ԱՆՈՒՆԸ ՆՇԵԼՈՒ (ԱՆԱՆՈՒՆ) ԻՐ ԵՐԿԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ, ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼՈՒ ԿԱՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ.

2) ԵՐԿԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ.

3) ուրիշ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԲԱՑԻ ՕՐԵՆՔՈՒՄ ՆՇՎԱԾ ԴԵՊՔԵՐԻՑ:

ՀեղինԱԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԴՐՈՒՅՔՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆաԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ, ԲԱՑԻ ԱՅՆ ԴԵՊՔԵՐԻՑ, ԵՐԲ ԱՅԴ ԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԽՍՀ ՄիությԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՊԱՀՈՒՄ Է ԽՍՀ ՄիությԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆԸ:

ՀեղինԱԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴՐՈՒՅՔՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԵՐԿԸ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԵՐԻՏՈՐԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ԽՍՀ ՄիությԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:

***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 482. ՀեղինԱԿԻ ԵՐԿԵՐԻ ԵՎ ԱՆՎԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ԿԵՆԴԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ

ԵրԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻՍ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՐԵՆ ԿԱՏԱՐԵԼԻՍ ԿԱՄ ԱՅԼ ԿԵՐՊ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԻՍ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ԱՌԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՈՐԵՎԷ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ՄՏՑՆԵԼ ԻՆՉՊԵՍ ԲՈՒՆ ԵՐԿԻ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ՆՐԱ ԱՆՎԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՆՎԱՆ ՄԵՋ:

ԵրԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԵԼԻՍ ՆԱԵՎ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է ԱՌԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴԵԼ ԱՅՆ, ԱՌԱՋԱԲԱՆ, ՎԵՐՋԱԲԱՆ ԳՐԵԼ ԿԱՄ ՄԵԿՆԱԲԱՆԵԼ ԵՎ ՈՐԵՎԷ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ ՏԱԼ:

ՀեղինԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ ՏՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՂԻՆԱԿԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՀՐԱԺԱՐՎԵԼ:

***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 483. ԵրկԵՐԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ

ՀեղինԱԿԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՅՆ ԿԱՐԳՈՎ, ԻՆՉ ԿԱՐԳՈՎ ՆՇԱՆԱԿՎՈՒՄ Է ԿՏԱԿԱԿԱՏԱՐԸ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 547 ՀՈԴՎԱԾ), ՆՇԵԼ ԱՅՆ ԱՆՁԻՆ, ՈՐԻՆ ԻՆՔԸ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ Է ԻՐ ԵՐԿԵՐԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ: Այդ ԱՆՁԸ ԻՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ Է ՑՄԱՀ:

ԱՅԴՊԻՍԻ ՑՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԵՐԿԵՐԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆ ՆՐԱ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱՐԱՐՎԱԾ Է ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Այդ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ՆԱԵՎ ԵՐԿԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԵԹԵ ԺԱՌԱՆԳՆԵՐ ՉԿԱՆ ԿԱՄ ԴԱԴԱՐԵԼ Է ՆՐԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 498 ԵՎ 499 ՀՈԴՎԱԾՆԵՐ):

### ՀՈԴՎԱԾ 484. ՀամԱՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵրԿՈՒ ԿԱՄ ԱՎԵԼԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՐԿԻ (ԿՈԼԵԿՏԻՎ ԵՐԿԻ ) ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱԿԱՆԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՄԱՏԵՂ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ, ԱՆԿԱԽ ԱՅՆ ԲԱՆԻՑ, ԹԵ ԱՐԴՅՈՔ ԱՅԴՊԻՍԻ ԵՐԿԸ ԿԱԶՄՈՒՄ Է ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԻ

ԱՄԲՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ԹԵ ԲԱՂԿԱՑԱԾ Է ԱՅՆՊԻՍԻ ՄԱՍԵՐԻՑ, ՈՐՈՆՑԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐՆ ՈՒՆԻ ՆԱԵՎ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ:

ՀԱՄԱՀեղինԱԿՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ԻՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿՈԼԵԿՏԻՎԻ ԵՐԿԻ՝ ԻՐ ՍՏԵՂԾԱԾ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ:

Կոլեկտիվ ԵՐԿԻ ՄԱՍԸ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ, ԵԹԵ ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԱՆԿԱԽ ԱՅԴ ԵՐԿԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻՑ:

ՀամաhԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՈՐՈՇՎԵԼ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ: Այդպիսի ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿՈԼԵԿՏԻՎ ԵՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ՀԱՄԱՏԵՂ, ԻՍԿ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱՆՑ ՄԻՋԵՎ ԲԱՇԽՎՈՒՄ Է ԽՍՀ Միության ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

### ՀՈԴՎԱԾ 485. Հեղինակային ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԳիտաԿԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԵՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՅԴ ԵՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՅԴՊԻՍԻ ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԻՆ ՎԱՐՁԱՏՐԵԼՈՒ ԴԵՊՔԵՐԸ ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:

### ՀՈԴՎԱԾ 486. ԻրավԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ԻրաՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉՎՈՒՄ Է ԽՍՀ ՄիուԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՎ ՈՐՈՇՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՈՒ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ: ԱՅՍ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՉԵՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎՐԱ:

***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ):***

### ՀՈԴՎԱԾ 487. ԿազմԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԻնքնՈՒՐՈՒՅՆ ԿԵՐՊՈՎ ԿԱՄ ՈՐԵՎԷ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳԻՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ, ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆՆԵՐ, ՀԱՆԴԵՍՆԵՐ ԿԱՄ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԱՅԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՅԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ ՎԵՐՑՎԱԾ:

Այդ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՋ ՄՏՑՎԱԾ ԵՐԿԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԻՐԵՆՑ ԵՐԿԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ:

### ՀՈԴՎԱԾ 488. Հեղինակային ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿԻՆՈՖԻԼՄԵՐԻ, ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՖԻԼՄԵՐԻ, ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ԿինՈՆԿԱՐԻ ԿԱՄ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՆԿԱՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԴՐԱՆՑ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆԸ:

ՍիրողՆԵՐԻ ԿԻՆՈՖԻԼՄԵՐԻ ԿԱՄ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՖԻԼՄԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԿԱՄ ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ:

Սցենարի ՀԵՂԻՆԱԿԻՆ, ԿՈՄՊՈԶԻՏՈՐԻՆ, ԲԵՄԱԴՐՈՂ ՌԵԺԻՍՈՐԻՆ, ԳԼԽԱՎՈՐ ՕՊԵՐԱՏՈՐԻՆ, ԲԵՄԱԴՐՈՂ ՆԿԱՐՉԻՆ ԵՎ ԿԻՆՈՆԿԱՐԻ ԿԱՄ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՆԿԱՐԻ ՄԵՋ ՈՐՊԵՍ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ ՄՏԱԾ ԱՅԼ ԵՐԿԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻՆ ԻՐ ԵՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ:

ՌադիոՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԴՐԱՆՔ ՀԱՂՈՐԴՈՂ ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ, ԻՍԿ ԱՅԴ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՄՏՑՎԱԾ ԵՐԿԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ՝ ԴՐԱՆՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ:

### ՀՈԴՎԱԾ 489. ԺողովԱԾՈՒՆԵՐ ԿԱԶՄՈՂՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՀեղինակԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՅՆՊԻՍԻ ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՈՐՈՆՔ ՈՐԵՎԷ ՄԵԿԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱ ՉԵՆ, ԱՅՆ Է՝ ՕՐԵՆՔՆԵՐ, ԴԱՏԱԿԱՆ ՎՃԻՌՆԵՐ, ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՅՆՊԻՍԻ ԵՐԿԵՐ, ՈՐՈՆՑ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՆ ԱՆՀԱՅՏ ԵՆ, ՀՆԱԳԱՐՅԱՆ ԱԿՏԵՐ ՈՒ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ, ԻՆՉՊԵՍ

ՆԱԵՒ ԱՅԼ ԱՅՆՊԻՍԻ ԵՐԿԵՐ, ՈՐՈՆՔ ՉԵՆ ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՊԱՏԿԱՆՈՒՄ ԵՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ ԿԱԶՄՈՂՆԵՐԻՆ, ԵԹԵ ՆՐԱՆՔ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՄՇԱԿՄԱՆ ԿԱՄ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԵՆ ԵՆԹԱՐԿԵԼ ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԵՋ ՄՏԱԾ ՆՅՈՒԹԸ:

Նույն ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԱՅՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՄՇԱԿԵԼ ԵՆ ՀԻՇՅԱԼ ՏԵՍԱԿԻ ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿԵՐ:

Այս ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՐԳԵԼՔ ՉԻ ՀԱՐՈՒՑՈՒՄ ՆՈՒՅՆ ԵՐԿԵՐԸ ԱՅԼ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅԵԼՈՒՆ, ԵԹԵ ՆՐԱՆՔ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԿԵՐՊՈՎ ՀԱՄԱԿԱՐԳԵԼ ԿԱՄ ՄՇԱԿԵԼ ԵՆ ԱՅԴ ԵՐԿԵՐԸ:

ԺՈՂՈՎԱԾՈՒ ԿԱԶՄՈՂԸ, ՈՐԸ ՄՇԱԿԵԼ ԿԱՄ ՀԱՄԱԿԱՐԳԵԼ Է ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԵՋ ՄՏՑՎԱԾ ԵՒ ՈՐԵՒԷ ՄԵԿԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿԵՐԸ, ՕԳՏՎՈՒՄ Է ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԱՅՆ ՊԱՅՄԱՆՈՎ, ՈՐ ՊԱՀՊԱՆՎԵՆ ԱՅԴ ԵՐԿԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ:

**ՀՈԴՎԱԾ 490.** **ՀեղինԱԿԻ ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՈՒՐԻՇ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ**

ՈւրիՇ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ) ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ՈՉ ԱՅԼ ԿԵՐՊ, ՔԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԿԱՄ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԲԱՑԻ ՕՐԵՆՔՈՒՄ ՆՇՎԱԾ ԴԵՊՔԵՐԻՑ:

***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 491.** **Երկի ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Երկը ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԹԱՐԳՄԱՆԵԼ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ՈՉ ԱՅԼ ԿԵՐՊ, ՔԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԿԱՄ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ:

ԽՍՀՄ ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԽՍՀ ՄիՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԹՈՒՅԼԱՏՐԵԼ ԵՐԿԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՅԴ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՈՒՄԸ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆԵԼՈՎ ԽՍՀՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:

***(28.08.74., 28. 07 82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 492.** **ԹարԳՄԱՆՉԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

ԹարԳՄԱՆՉԻՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԻՐ ԿԱՏԱՐԱԾ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ:

***(28.08.74., ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 493.** **ԻՐ ԹԱՐԳՄԱՆՎԱԾ ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ**

Թարգմանված ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԲՈԼՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ, ԲԱՑԻ ՕՐԵՆՔՈՒՄ ՆՇՎԱԾ ԴԵՊՔԵՐԻՑ:

***(28.08.74., ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 494.** **ԵրԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՌԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՌԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ**

ԱռԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՌԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ, ՍԱԿԱՅՆ ԱՆՊԱՅՄԱՆ ՆՇԵԼՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԵՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԵՒ ԸՆԴՕՐԻՆԱԿՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ, ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է՝

1) ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ՈՒՐԻՇԻ ԵՐԿԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՆՈՐ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՐԵՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԵՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԲԱՑԻ ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ԵՐԿԸ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՐԿ ԿԱՄ ՍՑԵՆԱՐ ԴԱՐՁՆԵԼՈՒՑ ԵՒ ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՐԿԸ ՍՑԵՆԱՐ ԴԱՐՁՆԵԼՈՒՑ ԵՒ ԸՆԴՀԱԿԱՌԱԿԸ.

2) ԳԻՏԱԿԱՆ ՈՒ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐՎԵՍՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑԻՑ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ, ԸՍՏ ՈՐՈՒՄ ՔԱՂՎԱԾՔՆԵՐԻ ՁԵՒՈՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ, ԻՍԿ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՈՎ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՎ, ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ՄԵԿ ՀԵՂԻՆԱԿԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՌՄԱՄԲ ՄԵԿ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԻՑ ՈՉ ԱՎԵԼԻ ԾԱՎԱԼՈՎ.

3) ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ, ԿԻՆՈՅՈՒՄ, ՌԱԴԻՈՅՈՎ ԵՒ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ՏԱԼ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐՎԵՍՏԻ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՎԱԾ ԵՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԱՆՈՏԱՑԻԱՆԵՐԻ, ՌԵՖԵՐԱՏՆԵՐԻ, ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ԱՅԼ

ՓԱՍՏԱԳՐԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՁԵՒԵՐՈՎ.

4) ԿԻՆՈՅՈՒՄ, ՌԱԴԻՈՅՈՎ ԵՒ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՐԵՆ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՃԱՌԵՐԸ, ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐՎԵՍՏԻ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՎԱԾ ԵՐԿԵՐԸ: ՎերԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ՆԱԵՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՐԵՆ ԿԱՏԱՐՎՈՂ ԵՐԿԵՐԻ ՏՐԱՆՍԼՅԱՑԻԱՆ ՌԱԴԻՈՅՈՎ ԵՒ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ՝ ԱՆՄԻՋԱԿԱՆՈՐԵՆ ԴՐԱՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԱՅՐԻՑ.

5) ԹԵՐԹԵՐՈՒՄ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՐԵՆ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՃԱՌԵՐԸ, ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՐՎԵՍՏԻ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՎԱԾ ԵՐԿԵՐԸ՝ ԲՆԱԳՐՈՎ ԵՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՄԲ.

6) ՈՐԵՒԷ ԵՂԱՆԱԿՈՎ ԸՆԴՕՐԻՆԱԿԵԼ, ԲԱՑԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՒՄԻՑ, ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԱՅՆ ԵՐԿԵՐԸ, ՈՐՈՆՔ ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ԱԶԱՏ ԱՅՑԵԼԱՎԱՅՐԵՐՈՒՄ, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ.

7) ԳԻՏԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՏՊԱԳԻՐ ԵՐԿԵՐԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՆՑ ՇԱՀՈՒՅԹ ՍՏԱՆԱԼՈՒ.

8) ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՎԱԾ ԵՐԿԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ ՑՑՈՒՆ-ԿԵՏԱՎՈՐ ՏՊԱՏԱՌԵՐՈՎ՝ ԿՈՒՅՐԵՐԻ ՀԱՄԱՐ:

***(28.08.74., 27.10. 76. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 495. երկԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ

ԱռԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԱՌԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԻ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ՈՒՐԻՇԻ ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՎԱԾ ԵՐԿԸ ՎԵՐԱՐՏԱԴՐԵԼ ԿԱՄ ԱՅԼ ԿԵՐՊ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

### ՀՈԴՎԱԾ 496. Նոր ԵՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՐԻՇԻ ԵՐԿՆ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԱՆՁԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՆոՐ ԵՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՒՐԻՇԻ ԵՐԿՆ ՕԳՏԱԳՈՐԾԱԾ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 494 ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏ) ԱՆՁԻՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԻՐ ՍՏԵՂԾԱԾ ԵՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ:

ԱյՍ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՐԳԵԼՔ ՉԻ ՀԱՐՈՒՑՈՒՄ ՆՈՐ ԵՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆՈՒՅՆ ԵՐԿԸ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒՆ:

### ՀՈԴՎԱԾ 497. երկԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՌԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ՝ ՀԵՂԻՆԱԿԻՆ ՎԱՐՁԱՏՐԵԼՈՎ

ԱռԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ, ԲԱՅՑ ՆՐԱ ԱԶԳԱՆՎԱՆ ՆՇՄԱՄԲ ԵՒ ՀԵՂԻՆԱԿԻՆ ՎԱՐՁԱՏՐԵԼՈՎ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է՝

1) ԼՈՒՅՍ ԸՆԾԱՅՎԱԾ ԵՐԿԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ՍԱԿԱՅՆ ԵԹԵ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՑ ՄՈՒՏՔԻ ՎՃԱՐ ՉԻ ԳԱՆՁՎՈՒՄ, ԱՊԱ ՀԵՂԻՆԱԿԸ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆախԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՄԻԱՅՆ.

2) ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԵՐԿԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԿԱՄ ՏԱՐԱԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ՆՐԱ ԳՐԱՌՈՒՄԸ ԺԱՊԱՎԵՆԻ, ՁԱՅՆԱՊՆԱԿԻ, ՄԱԳՆԻՍԱԺԱՊԱՎԵՆԻ ԿԱՄ ԱՅԼ ՀԱՐՄԱՐԱՆՔԻ ՎՐԱ, ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ ԵՐԿԵՐԸ ԿԻՆՈՅՈՒՄ, ՌԱԴԻՈՅՈՎ ԿԱՄ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼՈՒՑ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 494 ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ԿԵՏ).

3) ՏԵՔՍՏԱՎՈՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԿԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԳՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԻ ԿՈՂՄԻՑ. ԱՅԴՊԻՍԻ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՏԵՔՍՏԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒՄ Է ԱՅԴՊԻՍԻ ԵՐԿՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ.

4) ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԵՐԿԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԵՐԿԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔՆԵՐՈՒՄ. ԱՅԴՊԻՍԻ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԻ ԱԶԳԱՆՎԱՆ ՆՇՈՒՄԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 498. ՀեղիՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

ՀեղիՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՀԵՂԻՆԱԿԻ ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՒ ՆՐԱ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ 25 ՏԱՐԻ, ՀԱՇՎԱԾ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՀՎԱՆԸ ՀԱՋՈՐԴՈՂ ՏԱՐՎԱ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ:
(***28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 499. ՀեղիՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒՄԸ

ՀեղիՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՆՑՆՈՒՄ Է ԺԱՌԱՆԳԱԲԱՐ: ԺառԱՆԳԱԲԱՐ ՉԻ ԱՆՑՆՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՆՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՒ ԵՐԿԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ՀեղիՆԱԿԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ՆՐԱ ԱՆՎԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՒ ԵՐԿԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 482 ԵՒ 483 ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ:
***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 500. ԿոլԵԿՏԻՎ ԵՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՒ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

ԿոլԵկՏԻՎ ԵՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ԱՄԲՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՒ ԱՆՑՆՈՒՄ Է ԺԱՌԱՆԳԱԲԱՐ:
ՅուրԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ ՕԳՏՎՈՒՄ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ 25 ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ՀԱՇՎԱԾ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՀՎԱՆ ՀԱՋՈՐԴ ՏԱՐՎԱ ՀՈՒՆՎԱՐԻ 1-ԻՑ:
***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 501. ԿազմԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

ԿազմակԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՈՐԾՈՒՄ Է ԱՆԺԱՄԿԵՏ:
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆՐԱՆ ՊԱՏԿԱՆԱԾ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՆՑՆՈՒՄ Է ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴԻՆ, ԻՍԿ ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ:

**ՀՈԴՎԱԾ 502. ՀեղԻՆԱԿԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՉ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ԱռԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԻ ԿԱՄ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔՄԱՆ ՈՒՐԻՇԻ ԵՐԿՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 490 ՀՈԴՎԱԾ), ԱՌԱՆՑ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 494 ՈՒ 497 ՀՈԴՎԱԾՆԵՐ) ԴԵՊՔԵՐՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԵՐԿԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 482 ՀՈԴՎԱԾ) ԿԱՄ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՅԼ ԱՆՁՆԱԿԱՆ ՈՉ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԸ, ԻՍԿ ՆՐԱ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ՝ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ ԵՒ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 483 ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԱՅԼ ԱՆՁԻՆՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԽԱԽՏՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԸ (ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ՄՏՑՆԵԼ, ԹՈՒՅԼ ՏՐՎԱԾ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ ՄԱՄՈՒԼՈՒՄ ԿԱՄ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՈՎ) ԿԱՄ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԱՐԳԵԼԵԼ ԵՐԿԻ ԼՈՒՅՍԸՆԾԱՅՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ՆՐԱ ՏԱՐԱԾՈՒՄԸ:
***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 503. ՀեղԻՆԱԿԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

Եթե ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՈՎ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԿԱՄ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՆԵՐԻՆ ՎՆԱՍ Է ՊԱՏՃԱՌՎԵԼ (ՀՈԴՎԱԾ 217 ), ԱՊԱ ԱՆԿԱԽ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 502 ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՑ, ՀԵՂԻՆԱԿԸ ԿԱՄ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴՆԵՐԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ:
***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 504. ՀեղինԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՆՈՒՄԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ**

Երկի ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՒ ԱՅԼ ՁԵՒԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՐԿԱԴՐԱԲԱՐ ԳՆԵԼ ՀԵՂԻՆԱԿԻՑ ԿԱՄ ՆՐԱ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՑ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՌԱՆՁԻՆ ԴԵՊՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՑ ՀԱՏՈՒԿ ՈՐՈՇՄԱՄԲ:
Այն ԵՐԿԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՆՎԵԼ Է, ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆախԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ:

**ՀՈԴՎԱԾ 505. ԵրԿԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ**

Այն ԵՐԿԸ, ՈՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼՐԱՑԵԼ Է ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԺԱՄԿԵՏԸ, ԿԱՐՈՂ Է ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆախԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ: ՊետուբՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԱԾ ԵՐԿԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆախԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ:
***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 506. ՀեղինԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԵՒ ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

Երկի ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԵՂԻՆԱԿԸ ԿԱՄ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿ`

ԵՐԿԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ.

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԼԻՑԵՆԶԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ:

ԵրԿԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՀԵՂԻՆԱԿԸ ԿԱՄ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴԸ ՀԱՆՁՆՈՒՄ Է ԿԱՄ ՀԵՂԻՆԱԿԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՍՏԵՂԾԵԼ ԵՐԿԸ ԵՒ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԱՅՆ ՀԱՆՁՆԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ` ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ԻՍԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԿԱՄ ՍԿՍԵԼ ԱՅԴ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ (ՀՈԴՎԱԾ 513 ), ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՎԱՐՁԱՏՐԵԼ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԿԱՄ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴԻՆ, ԲԱՑԻ ՕՐԵՆՔՈՒՄ ՆՇՎԱԾ ԴԵՊՔԵՐԻՑ:

Հեղինակային ԼԻՑԵՆԶԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՀԵՂԻՆԱԿԸ ԿԱՄ ՆՐԱ ԻՐԱՎԱՀԱՋՈՐԴԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ Է ՎԵՐԱՊԱՀՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԵՐԿԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ԹԱՐԳՄԱՆԵԼՈՒ ԿԱՄ ՎԵՐԱՄՇԱԿԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՈՎ, ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԵՒ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՈՐՈՇՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՎ, ԻՍԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՎՈՒՄ Է ՎԱՐՁԱՏՐԵԼ ԱՅԴ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԵՐԱՊԱՀՄԱՆ ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՁԵՒՈՎ ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԽՍՀՄ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ԿՈՂՄԵՐԸ ԱՅԼ ԲԱՆ ՉԵՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԵԼ:

***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 507. ԵրԿԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ**

ԵրԿԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԹՎԻՆ ԴԱՍՎՈՒՄ ԵՆ`

ԲՆԱԳԻՐ ԵՐԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԿԱՄ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ).

ՁԵՌԱԳՐԻ ԱՎԱՆԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ.

ՉՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԵՐԿԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (ԲԵՄԱԴՐԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ).

ԸՆԴ ՈՐՈՒՄ ՄԻԵՒՆՈՒՅՆ ԵՐԿԻ ՀԱՄԱՐ ՄԻԱՆՎԱԳ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՏԵՍՈՂ ԲԵՄԱԴՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՀԵՂԻՆԱԿԸ ԿՆՔԵԼ ԿԱՐՈՂ Է ՄԻԱՅՆ ՄԵԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ.

ՉՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԵՐԿԸ ԿԻՆՈՆԿԱՐՈՒՄ ԿԱՄ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՆԿԱՐՈՒՄ (ՍՑԵՆԱՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ), ՌԱԴԻՈՅՈՎ ԿԱՄ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ.

ՀՐԱՊԱՐԱԿՈՐԵՆ ՑՈՒՑԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԵՐԿ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ (ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ).

ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՉՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԵՐԿԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ.

ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՐՎԵՍՏԻ ԵՐԿԵՐԸ ՈՐԵՒԷ ԱՅԼ ԵՂԱՆԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄՅՈՒՍ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ:

***(28.08.74.,28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 508. ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՁԵՒԸ**

Հեղինակային ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՊԵՏՔ Է ԿՆՔՎԻ ԳՐԱՎՈՐ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 46 ՀՈԴՎԱԾ):

Գրավոր ՁԵՒԸ ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ ԵՐԿԸ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՐ:

**ՀՈԴՎԱԾ 509. Տիպային ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ**

Տիպային ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԸ, ԲԱՑԻ ԱՅՆ ԴԵՊՔԵՐԻՑ, ԵՐԲ ԽՍՀ Միության ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՅԴ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ ՎԵՐԱՊԱՀՈՒՄ Է ԽՍՀ Միության ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆԸ, ՀԱՍՏԱՏՎՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

Հեղինակային ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿԱՐՈՂ Է ՊԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՅՆՊԻՍԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ՏԻՊԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՉԵՆ: ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՄ ՏԻՊԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ ՎԱՏԹԱՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆՎԱՎԵՐ ԵՆ ԵՒ ՓՈԽԱՐԻՆՎՈՒՄ ԵՆ ՕՐԵՆՔՈՎ ԿԱՄ ՏԻՊԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ:

***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ**

**510. ՀեղԻՆԱԿԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ԸՍՏ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ԸսՏ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎՃԱՐՎՈՂ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ, ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ՝ ԴՐԱՆՑ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 481 ՀՈԴՎԱԾ):

**ՀՈԴՎԱԾ 511. ԵրկԸ ՀԱՆՁՆԵԼԸ ԵՎ ՆՐԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԸ**

ԵրԿԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՀԵՂԻՆԱԿԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԻՐԵՆ ՊԱՏՎԻՐՎԱԾ ԵՐԿԸ ՍՏԵՂԾԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԵՒ ԱՅՆ ՀԱՆՁՆԵԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԵՒ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

ԿազմակԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՏԻՊԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻՑ ՈՉ ՈՒՇ ԳՐԱՎՈՐ ՀԱՂՈՐԴԵԼ ՀԵՂԻՆԱԿԻՆ՝ ԿԱՄ ԸՍՏ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆՎԱԾ ԵՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԿԱՄ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԻՄՔԵՐՈՎ ԱՅՆ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ԿԱՄ ԵՐԿՈՒՄ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ ՄՏՑՆԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ, ՃՇՏՈՐԵՆ ՆՇԵԼՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՒՂՂՈՒՄՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ: Եթե ԳՐԱՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄԸ ՀԵՂԻՆԱԿԻՆ ՉԻ ՈՒՂԱՐԿՎԵԼ ՏԻՊԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ, ԱՊԱ ԵՐԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ:

***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 512. ԵրՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՅՆ ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ Է ԿՆՔՎԵԼ**

ԵրԿԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՀԵՂԻՆԱԿԸ, ԱՌԱՆՑ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻ ԳՐԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՆՇՎԱԾ ԵՐԿԸ ԿԱՄ ՆՐԱ ՄԻ ՄԱՍԸ ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԱՅՆՊԻՍԻ ԵՂԱՆԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ, ՈՐԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ, ԲԱՑԻ ՏԻՊԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՔԵՐԻՑ: ԱյդպիՍԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ՏԻՊԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ, ԲԱՅՑ ՉԻ ԿԱՐՈՂ ԵՐԵՔ ՏԱՐՈՒՑ ԱՎԵԼԻ ԼԻՆԵԼ ՍԿՍԱԾ ԱՅՆ ՕՐՎԱՆԻՑ, ԵՐԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ ԵՐԿԻՆ: Տիպային ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ՆԱԽԱՏԵՍՎԵԼ ԴԵՊՔԵՐ, ԵՐԲ ՀԵՂԻՆԱԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ԵՐԿԸ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԱԵՒԱՅԼ ԵՂԱՆԱԿՆԵՐՈՎ, ՔԱՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ:

***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 513. ԿազմԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԵՐԿԸ**

ԵրկԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ԿԱՄ ՍԿՍԵԼ ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՆՈՒՅՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ, ՈՐԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԵՐԿՈՒ ՏԱՐՈՒՑ ԱՎԵԼԻ ԼԻՆԵԼ ԱՅՆ ՕՐՎԱՆԻՑ, ԵՐԲ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ: Այդ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՏԱՐԱԾՎՈՒՄ ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎՐԱ, ՈՐԸ ԿՆՔԵԼ Է ՍՑԵՆԱՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿԱՄ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ:

ՆկԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ ԵՐԿԵՐԻ ԾԱՎԱԼԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ, ՏԻՊԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿԱՐՈՂ Է ՆԱԽԱՏԵՍԵԼ ՆԱԵՒ ԱՎԵԼԻ ԿՐՃԱՏ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԺԱՄԿԵՏՆԵՐ, ՔԱՆ ՆՇՎԱԾ ԵՆ ԱՅՍ ՀՈԴՎԱԾՈՒՄ:

***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 514. ՀեղիՆԱԿԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

ՀեղինակԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ԵՐԿԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ԵԹԵ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԱՅՆ ԲԱՆԻ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ, ՈՐ ՀԵՂԻՆԱԿԸ ԻՐ ՄԵՂՔՈՎ ԵՐԿԸ ՆՐԱՆ ՉԻ ՀԱՆՁՆԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ. ՊԱՏՎԻՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՈՉ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱՄ ԱՆԲԱՐԵԽԻՂՃ ԿԵՐՊՈՎ. ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՈՒ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԻՐԵՆ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՈՒՂՂՈՒՄՆԵՐԸ ՄՏՑՆԵԼՈՒՑ. ԽԱԽՏԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՆՁԱՄԲ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԽԱԽՏԵԼ Է ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 512 ՀՈԴՎԱԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ:

Եթե ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀԻՄՔԵՐՈՎ ՄԵՐԺԵԼ Է ԵՐԿԸ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 511 ՀՈԴՎԱԾ) ԵՒ ԴԱՏԱՐԱՆՈՎ ՉԻ ԱՊԱՑՈՒՑԵԼ, ՈՐ ՀԵՂԻՆԱԿԸ ԱՆԲԱՐԵԽԻՂՃ Է ԿԱՏԱՐԵԼ ՊԱՏՎԻՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ, ԱՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՑՎԱԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՄՆՈՒՄ Է ՀԵՂԻՆԱԿԻՆ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԿԱՄ ՏԻՊԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՉԱՓՈՎ, ՈՐԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՒՄԱՐԻ ՔՍԱՆՀԻՆԳ ՏՈԿՈՍԻՑ ՊԱԿԱՍ

ԼԻՆԵԼ:
***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 515. ԿազմակԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԽԱԽՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ**

Եթե ԵՐԿԸ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ (ՀՈԴՎԱԾ 513) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՉԻՐԱԿԱՆԱՑՆԻ ԿԱՄ ՉՍԿՍԻ ԻՐ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ՆԱ ՊԱՐՏԱՎՈՐ Է ՀԵՂԻՆԱԿԻ ՊԱՀԱՆՋՈՎ ԼՐԻՎ ՎՃԱՐԵԼ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ: Այս ԴԵՊՔՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԸ ՆԱԵՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ ԵՒ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՀԱՆՁՆՎԱԾ ԵՐԿԻ ՕՐԻՆԱԿՆԵՐԸ: ԿազմակԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱԶԱՏՎՈՒՄ Է ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԱՅՆ ՄԱՍԸ ՀԵՂԻՆԱԿԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ՈՐԸ ՀԵՂԻՆԱԿԸ ՊԵՏՔ Է ՍՏԱՆԱՐ ԵՐԿԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄՆ ՍԿՍԵԼՈՒՑ ՀԵՏՈ, ԵԹԵ ԱՊԱՑՈՒՑԻ, ՈՐ ԵՐԿՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՉԻ ԿԱՐՈՂԱՑԵԼ ՀԵՂԻՆԱԿԻՑ ԿԱԽՎԱԾ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՈՎ:
***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 516. ՊատվԵՐՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԵՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ**

ՊատվԵՐՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԿԵՐՊԱՐՎԵՍՏԻ ԵՐԿԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՄ ԱՆՑՆՈՒՄ Է ՆՐԱ ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ, ԵԹԵ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ: ՀեղինԱԿԸ ԱՅԴ ԵՐԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ:
ԵրԿԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ (ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԿՐՈՂԸ) ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԱՅԴ ԵՐԿԸ ՑՈՒՑԱԴՐԵԼՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐՈՒՄ՝ ԱՌԱՆՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՂԻՆԱԿԻՆ:

**ՀՈԴՎԱԾ 517. ԿերպԱՐՎԵՍՏԻ ԵՐԿՈՒՄ ՊԱՏԿԵՐՎԱԾ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

ԿերպարՎԵՍՏԻ ԱՅՆ ԵՐԿԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ, ԸՆԴՕՐԻՆԱԿՈՒՄՆ ՈՒ ՏԱՐԱԾՈՒՄԸ, ՈՐԻ ՄԵՋ ՊԱՏԿԵՐՎԱԾ Է ԱՅԼ ԱՆՁ, ԹՈՒՅԼ Է ՏՐՎՈՒՄ ՊԱՏԿԵՐՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՅՆ, ԻՍԿ ՆՐԱ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ՝ ՆՐԱ ԶԱՎԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԿԵՆԴԱՆԻ ՄՆԱՑԱԾ ԱՄՈՒՍՆՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ: ԱյդպԻՍԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ, ԵԹԵ ԴԱ ԱՐՎՈՒՄ Է ԵԼՆԵԼՈՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀԵՐԻՑ ԿԱՄ ՊԱՏԿԵՐՎԱԾ ԱՆՁԸ ՎԱՐՁՈՎ Է ԿԵՑՎԱԾՔ ԸՆԴՈՒՆԵԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԱՄԱՐ:

**ՀՈԴՎԱԾ 518. ՊատվԵՐՆԵՐՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ, ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ**

ԿազմակԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՎԵՐՆԵՐՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ, ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ, ԳԾԱԳՐԵՐՆ ՈՒ ՆԿԱՐՆԵՐԸ ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԻՐԵՆՑ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՀԱՆՁՆՎԵԼ ԿԱՄ ՎԵՐԱՐՏԱԴՐՎԵԼ ՄԱՄՈՒԼՈՒՄ՝ ԱՌԱՆՑ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՎՃԱՐԵԼՈՒ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ:

**ՀՈԴՎԱԾ 519. ՀեղինաԿԱՅԻՆ ԼԻՑԵՆԶԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԵՐԿԸ ԹԱՐԳՄԱՆԵԼՈՒ ԿԱՄ ՎԵՐԱՄՇԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ԵրկԸ ԹԱՐԳՄԱՆԵԼՈՒ ԿԱՄ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ԵՐԿԻ (ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ, ՊԱՏՄՈՂԱԿԱՆ ԵՐԿԸ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՐԿԻ ԿԱՄ ՍՑԵՆԱՐԻ ԿԱՄ ՀԱԿԱՌԱԿԸ) ՎԵՐԱՄՇԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԼԻՑԵՆԶԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՆ ԿՈՂՄԵՐԸ ԱՅՆ ԿՆՔԵԼԻՍ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՍՀ ՄիուԹՅԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:
***(28.08.74. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

## ՀԱՏՎԱԾ Y. ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՀՈԴՎԱԾ 520. ՀայՏՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

ՀայտնաԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ, ՈՐՊԵՍԶԻ ՃԱՆԱՉՎԵՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԻՐ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՈՆՔ ՎԱՎԵՐԱՑՎՈՒՄ ԵՆ ԴԻՊԼՈՄՈՎ, ՈՐ ՏՐՎՈՒՄ Է ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՅՈՒՏԵՐԻ ՈՒ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՍՀՄ ՆախԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎՈՂ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՈՒ ԿԱՐԳՈՎ:
ՀայտնաԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՆ ՈՒՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ, ՈՐԸ ՆՐԱՆ ՎՃԱՐՎՈՒՄ Է ԴԻՊԼՈՄՆ ՍՏԱՆԱԼԻՍ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՅՈՒՏԵՐԻ ՈՒ

ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ:

**ՀՈԴՎԱԾ 521. ՀայտՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՄԲ ԱՆՑՆԵԼԸ**

ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՌԱԾ ՀԵՂԻՆԱԿԻ ԴԻՊԼՈՄ ՍՏԱՆԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԱՆՑՆՈՒՄ Է ԺԱՌԱՆԳԱԲԱՐ՝ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

**ՀՈԴՎԱԾ 522. ՀայտՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐԸ**

ՀայտՆԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ (ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐԸ ԼՈՒԾՎՈՒՄ ԵՆ ԴԱՏԱՐԱՆՈՎ:

**ՀԱՏՎԱԾ YI. ԳՅՈՒՏԻ, ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ԻՐԱՎՈՒՆՔ**

**ՀՈԴՎԱԾ 523. ՀեղինԱԿԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ ԵՒ ԳՅՈՒՏԻ ԱՐՏՈՆԱԳԻՐ**

ԳյուՏԻ ՀԵՂԻՆԱԿՆ ԻՐ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՐՈՂ Է ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՄ ԻՐ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՎ ԳՅՈՒՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԿԱՄ ԻՐ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ, ԻՐԵՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՎ ԳՅՈՒՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ԱռաՋԻՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՅՈՒՏԻ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՒՄ Է ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ, ԵՐԿՐՈՐԴ ԴԵՊՔՈՒՄ՝ ԱՐՏՈՆԱԳԻՐ: ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԸ ԵՒ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՅՈՒՏԵՐԻ ԵՒ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՈՒ ԿԱՐԳՈՎ:

ԽՍՀ ՄիուԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԱՐՎԱԾ ԳՅՈՒՏԵՐԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԱՐՎԱԾ ԳՅՈՒՏԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՅՈՒՏԵՐԻ ԱՄԵՆ ՄԻ ՀԱՆՁՆՈՒՄՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ, ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ԵՆ ԽՍՀՄ ՆախաՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԻԱՅՆ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 524. ԱյՆ ԳՅՈՒՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ Է ՏՐՎԵԼ**

ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՅՈՒՏԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ Է ՏՐՎԵԼ, ԱՅԴ ԳՅՈՒՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՍԿՍԱԾ ՏԱՍՆՀԻՆԳ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՊետությՈՒՆՆ ԻՐ ՎՐԱ Է ՎԵՐՑՆՈՒՄ ԳՅՈՒՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՈԳՍԸ, ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ԴՐԱ ՆԵՐԴՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅՈՒՆԸ:

ԿոոպԵՐԱՏԻՎ ԵՒ ՄՅՈՒՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՎԱՍԱՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԿԱՐՈՂ ԵՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԻՐԵՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳՅՈՒՏԵՐԸ: ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՍԿՍԱԾ ՏԱՍՆՀԻՆԳ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄՅՈՒՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԻՇՅԱԼ ԳՅՈՒՏԵՐԸ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ԴՐԱ ՀԱՄԱՐ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՅՆ:

ԳյուտԱՐԱՐԸ, ՈՐԻՆ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ Է ՏՐՎԵԼ, ԻՐ ԳՅՈՒՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՈՒՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ՝ ՆԱՅԱԾ ԳՅՈՒՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՇՆՈՐՀԻՎ ՍՏԱՑՎՈՂ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՅԼ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՈՒՆԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՅՈՒՏԵՐԻ ՈՒ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 525. ԳյուՏԻ ԱՐՏՈՆԱԳՐԱՏԻՐՈՋ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ**

ԱրտոնԱԳԻՐԸ ՏՐՎՈՒՄ Է ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՕՐՎԱՆԻՑ ՀԱՇՎԱԾ ՏԱՍՆՀԻՆԳ ՏԱՐԻ ԺԱՄԱՆԱԿՈՎ: ՆույՆ ՕՐՎԱՆԻՑ ՊԱՇՏՊԱՆՎՈՒՄ ԵՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ: ՈՉ ՈՔ ՉԻ ԿԱՐՈՂ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԳՅՈՒՏԸ ԱՌԱՆՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՏԻՐՈՋ, ԱՅՍԻՆՔՆ՝ ԱՅՆ ԱՆՁԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ, ՈՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՒՄ Է ԱՐՏՈՆԱԳԻՐԸ: ԱրտոՆԱԳՐԱՏԵՐԸ ԿԱՐՈՂ Է ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ԼԻՑԵՆԶԻԱ) ՏԱԼ ԻՐ ԳՅՈՒՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՄ ԼՐՈՎԻՆ ՈՒՐԻՇԻ ԶԻՋԵԼ ԱՐՏՈՆԱԳԻՐԸ: ԱրտոՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԿԱՐՈՂ Է ԴԱԴԱՐԵՑՎԵԼ ԽՍՀՄ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՂ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԵՒ ԿԱՐԳՈՎ:

ԱյՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ՄԻՆՉԵՒ ԳՅՈՒՏԻ ՀԱՄԱՐ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼԸ ԽՍՀՄ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՅՈՒՏԱՐԱՐԻՑ ԱՆԿԱԽ ԿԻՐԱՌԵԼ Է ՏՎՅԱԼ ԳՅՈՒՏԸ ԿԱՄ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼ Է ԴՐԱ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՄԵՆ ԻՆՉ, ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ԱՅԴ ԳՅՈՒՏԻ ՀԵՏԱԳԱ ԱՆՎՃԱՐ

ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ԱՅՍ ՀԱՐՑԻ ԱՌԹԻՎ ՎԵՃԵՐԸ ԼՈՒԾՎՈՒՄ ԵՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ:

ԱյՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԳՅՈՒՏԸ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԲԱՅՑ ԱՐՏՈՆԱԳՐԱՏԻՐՈՋ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿԱՅԱՑՎԵԼ ԱՐՏՈՆԱԳԻՐԸ ԶԻՋԵԼՈՒ ԿԱՄ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ԽՍՀՄ ՆախարարՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ ԱՐՏՈՆԱԳԻՐԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՐԿԱԴՐԱԲԱՐ ԳՆՎԵԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱՄ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԿԱՐՈՂ Է ԹՈՒՅԼԱՏՐՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԳՅՈՒՏԸ, ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՎ ԱՐՏՈՆԱԳՐԱՏԻՐՈՋ ՀԱՄԱՐ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

## ՀՈԴՎԱԾ 526. ՌաՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ԱրմաՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ ՏՐՎՈՒՄ Է ՆՐԱ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՎԿԱՅԱԳԻՐ: ՆԱ ՈՒՆԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ՝ ՆԱՅԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԻՑ ՍՏԱՑՎՈՂ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆԸ ԿԱՄ ԱՅԼ ԴՐԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՈՒՆԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՅՈՒՏԵՐԻ ՈՒ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ:

## ՀՈԴՎԱԾ 526. ԱրդյուՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱրդյուՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՀԵՂԻՆԱԿՆ ԻՐ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՐՈՂ Է ՊԱՀԱՆՋԵԼ ԿԱՄ ԻՐ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՆՁՆԵԼՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԿԱՄ ԻՐ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄ՝ ԻՐԵՆ ԱՄՐԱՑՆԵԼՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔԸ: ԱռաՋԻՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՀԱՄԱՐ ՏՐՎՈՒՄ Է ՎԿԱՅԱԳԻՐ, ԵՐԿՐՈՐԴ ԴԵՊՔՈՒՄ՝ ԱՐՏՈՆԱԳԻՐ:

ՎկաՅԱԳՐԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆԱԳՐԵՐԸ ՏՐՎՈՒՄ ԵՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՍՀՄ ՆախարարՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՍՏԱՏԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՈՒ ԿԱՐԳՈՎ:

ԱյՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՀԱՄԱՐ ՎԿԱՅԱԳԻՐ Է ՏՐՎԵԼ, ԱՅԴ ՆՄՈՒՇԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՈՐԾՈՒՄ Է ՆՄՈՒՇԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՍԿՍԱԾ ՏԱՍԸ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

ԱրդյուՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ԱՐՏՈՆԱԳՐՈՎ ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՈՐԾՈՒՄ Է ԱՅԴ ՆՄՈՒՇԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՍԿՍԱԾ ՀԻՆԳ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ: Նշված ԺԱՄԿԵՏԸ ԱՐՏՈՆԱԳՐԱՏԻՐՈՋ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՄԲ ԿԱՐՈՂ Է ԵՐԿԱՐԱՑՎԵԼ, ԲԱՅՑ ՈՉ ԱՎԵԼԻ, ՔԱՆ ՀԻՆԳ ՏԱՐՈՎ:

ԱրդյուՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ԱՅՆ ՀԵՂԻՆԱԿԸ, ՈՐԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ Է ՏՐՎԵԼ, ԱՅԴ ՆՄՈՒՇՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՈՒՆԻ ՎԱՐՁԱՏՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ՝ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ:

ԽՍՀՄ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ԱՄԵՆ ՄԻ ՀԱՆՁՆՈՒՄՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ Է ՄԻՄԻԱՅՆ ԽՍՀՄ ՆախարարՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

## ՀՈԴՎԱԾ 527. ԳյուՏԻ, ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆԸ

ԳյուտԵՐԻ, ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ՝ ԽՍՀՄ ՆախարարՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՎՈՂ ԿԱՐԳՈՎ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

## ՀՈԴՎԱԾ 528. ԳյուՏԻ, ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՀԵՂԻՆԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ԱՆՑՆԵԼԸ

ԳյուՏԻ ՀԱՄԱՐ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԿԱՅԱԳԻՐ ԿԱՄ ԱՐՏՈՆԱԳԻՐ, ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎԿԱՅԱԿԱՆ, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՀԱՄԱՐ ՎԿԱՅԱԳԻՐ ԿԱՄ ԱՐՏՈՆԱԳԻՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԳՅՈՒՏԻ, ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՏՐՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՅՈՒՏԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ՝ ԱՐՏՈՆԱԳՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔԸ

ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՑՆՈՒՄ Է ԺԱՌԱՆԳԱԲԱՐ:
***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 529. ՀեղԻՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՒ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐԸ**

Գյուտի, ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ (ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿՈՒԹՅԱՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐԸ ԼՈՒԾՎՈՒՄ ԵՆ ԴԱՏԱՐԱՆՈՎ: Դատարանով ԵՆ ԼՈՒԾՎՈՒՄ ՆԱԵՒ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԵՐԸ, ԵԹԵ ԴՐԱՆՔ ՉԵՆ ԼՈՒԾՎԵԼ ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ, ՈՐՏԵՂ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՄԱՏԱՎՈՐՎԵԼ Է:

ԳՅՈՒՏԵՐԻ, ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԻ, ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՈՒ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՀԱՐՑԵՐԻ ԱՌԹԻՎ ԾԱԳՈՂ ՎԵՃԵՐԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԲԱՐ ԼՈՒԾՎՈՒՄ ԵՆ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԳՅՈՒՏԵՐԻ ԵՒ ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՏՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ԵՒ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՐԳՈՎ, ԸՆԴ ՈՐՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ՍԽԱԼ ՀԱՄԱՐՈՂ ՀԵՂԻՆԱԿԸ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ ԴԱՏԱՐԱՆ:
***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

## ՀԱՏՎԱԾ VII. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

## Գ Լ ՈՒ Խ 47.

**ՀՈԴՎԱԾ 530. ԺառԱՆԳՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

ԺառԱՆԳՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ Է ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԵՒ ԸՍՏ ԿՏԱԿԻ:

ԺԱՌԱՆԳՈՒՄՆ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՆՈՒՄ, ԵՐԲ ԵՒ ՈՐՔԱՆՈՎ ԱՅՆ ՉԻ ՓՈՓՈԽՎԵԼ ԿՏԱԿՈՎ:

ԵԹԵ ԺԱՌԱՆԳՆԵՐ ՉԿԱՆ ՈՉ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ, ՈՉ ԸՍՏ ԿՏԱԿԻ, ԿԱՄ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՑ ՈՉ ՄԵԿԸ ՉԻ ԸՆԴՈՒՆԵԼ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՄ ԿՏԱԿԱՐԱՐԸ ԲՈԼՈՐ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ ԶՐԿԵԼ Է ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ, ԱՊԱ ՄԵՌԱԾԻ ԳՈՒՅՔԸ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՑՆՈՒՄ Է ՊԵՏՈՒԹՅԱՆԸ:

**ՀՈԴՎԱԾ 531. ԺառԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ**

ԺառԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ՄԱՀՎԱՆ ՕՐԸ, ԻՍԿ ՆՐԱՆ ՄԵՌԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 21 ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ՕՐԸ:

**ՀՈԴՎԱԾ 532. ԺառԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ**

ԺառանգՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՎԱՅՐ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՎԱՅՐԸ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 17 ՀՈԴՎԱԾ), ԻՍԿ ԵԹԵ ԴԱ ԱՆՀԱՅՏ Է՝ ԳՈՒՅՔԻ ԿԱՄ ՆՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ:

**ՀՈԴՎԱԾ 533. ԱյՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԺԱՌԱՆԳՆԵՐ ԼԻՆԵԼ**

ԺԱՌԱՆԳՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ԼԻՆԵԼ՝

ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ԱՅՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ, ՈՎՔԵՐ ԿԵՆԴԱՆԻ ԵՆ ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ՄԱՀՎԱՆ ՊԱՀԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ԱՅՆ ԵՐԵԽԱՆԵՐԸ, ՈՎՔԵՐ ՍԱՂՄՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ ՆՐԱ ԿԵՆԴԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԾՆՎԵԼ ԵՆ ՆՐԱ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ.

Ըստ ԿՏԱԿԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ՝ ԱՅՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ, ՈՎՔԵՐ ԿԵՆԴԱՆԻ ԵՆ ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ՄԱՀՎԱՆ ՊԱՀԻՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ՍԱՂՄՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ ՆՐԱ ԿԵՆԴԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԵՒ ԾՆՎԵԼ ԵՆ ՆՐԱ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ:

**ՀՈԴՎԱԾ 534. ԺառԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ**

ՈՉ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ, ՈՉ ԷԼ ԸՍՏ ԿՏԱԿԻ ԺԱՌԱՆԳԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՆ ԱՅՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ, ՆՐԱ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՑ ՈՐԵՒԷ ՄԵԿԻ ԴԵՄ ԿԱՄ ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ՝ ԿՏԱԿՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՎԱԾ ՎԵՐՋԻՆ ԿԱՄՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԵՆՑ ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՆՊԱՍՏԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ՈՐՊԵՍ ԺԱՌԱՆԳՆԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒՆ, ԵԹԵ ԱՅՍ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐՆ ԱՊԱՑՈՒՑՎԱԾ ԵՆ ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ:

ԾՆՈՂՆԵՐԸ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳԵԼ ԱՅՆ ԶԱՎԱԿՆԵՐԻՑ ՀԵՏՈ, ՈՐՈՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՐԱՆՔ ԶՐԿՎԱԾ ԵՆ ԵՂԵԼ ԾՆՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ ՈՒ ՆՐԱՆՑ ԱՅԴ

իրավունքները չեն վերականգնվել ժառանգությունը բացվելու պահին, ինչպես նաև այն ծնողներն ու չափահաս զավակները, որոնք չարամտորեն խուսափել են ժառանգատուին պահելու՝ օրենքով իրենց վրա դրված պարտականությունների կատարումից, եթե այդ հանգամանքներն ապացուցված են դատական կարգով:
Այս հոդվածի կանոնները կիրառվում են նաև հրիտակի իրավունքի նկատմամբ (սույն օրենսգրքի 541 հոդված):

**Հոդված 535. Ժառանգներն ըստ օրենքի**

Ըստ օրենքի ժառանգման դեպքում հավասար բաժնով ժառանգներ են հանդիսանում՝
առաջին հերթին՝ մահացածի զավակները (այդ թվում որդեգրվածները), ամուսինն ու ծնողները (որդեգրողները), ինչպես նաև մեռածի այն երեխան, որը նրա մահից հետո է ծնվել.
երկրորդ հերթին՝ մեռածի եղբայրներն ու քույրերը, նրա պապն ու տատը ինչպես հոր, այնպես էլ մոր կողմից:
Երկրորդ հերթի ժառանգները ըստ օրենքի ժառանգման են հրավիրվում առաջին հերթի ժառանգների բացակայության կամ նրանց կողմից ժառանգությունը չընդունվելու դեպքում միայն, ինչպես նաև այն դեպքում, երբ առաջին հերթի բոլոր ժառանգները զրկված են ժառանգման իրավունքից (սույն օրենսգրքի 534 և 537 հոդվածներ):
Ըստ օրենքի ժառանգների թվին են պատկանում այն անաշխատունակ անձինք, ովքեր մինչև ժառանգատուի մահը առնվազն մեկ տարի գտնվել են նրա խնամքի տակ: Ուրիշ ժառանգների առկայության դեպքում նրանք ժառանգում են այն հերթի ժառանգներին հավասար, որը ժառանգման է հրավիրվում:
Ժառանգատուի թոռները և ծոռները ըստ օրենքի ժառանգներ են հանդիսանում, եթե ժառանգության բացման պահին կենդանի չէ նրանց ծնողներից նա, ով ժառանգ կլիներ. նրանք հավասարապես ժառանգում են այն բաժինը, որն ըստ օրենքի ժառանգման դեպքում կհասներ նրանց մեռած ծնողին:
Որդեգրվածներն ու նրանց սերունդները չեն ժառանգում որդեգրվածի ծնողների, վերընթաց գծով նրա մյուս արյունակից ազգականների, ինչպես նաև նրա հարազատ եղբայրների ու քույրերի մահից հետո:
Որդեգրվածի և նրա սերունդների մահից հետո չեն ժառանգում որդեգրվածի ծնողները և վերընթաց գծով նրա մյուս արյունակից ազգականները, ինչպես նաև նրա հարազատ եղբայրներն ու քույրերը:

**Հոդված 536. Տնային կահավորանքի և գործածության առարկաների ժառանգումը**

Սովորական տնային կահավորանքի ու գործածության առարկաները անցնում են ըստ օրենքի այն ժառանգներին, ովքեր մինչև ժառանգատուի մահը առնվազն մեկ տարի ապրել են նրա հետ համատեղ, անկախ նրանց հերթից ու ժառանգության բաժնից:

**Հոդված 537. Քաղաքացու՝ իր գույքն ըստ հայեցողության կտակելու իրավունքը**

Յուրաքանչյուր քաղաքացի իր ամբողջ գույքը կամ նրա մի մասը (չբացառելով սովորական տնային կահավորանքի ու գործածության առարկաները) կարող է կտակով թողնել ինչպես ըստ օրենքի ժառանգների թվի մեջ մտնող, այնպես էլ դրանց թվի մեջ չմտնող մեկ կամ մի քանի անձանց, ինչպես նաև պետությանը կամ պետական, կոոպերատիվ և մյուս հասարակական առանձին կազմակերպություններին:
Կտակարարը կտակով կարող է ժառանգման իրավունքից զրկել ըստ օրենքի մեկ, մի քանի կամ բոլոր ժառանգներին:
***(28.07.82. խմբագրությամբ)***

**Հոդված 538. Ժառանգության պարտադիր բաժնի իրավունքը**

Ժառանգատուի անչափահաս կամ անաշխատունակ զավակները (այդ թվում որդեգրվածները), ինչպես նաև մեռածի անաշխատունակ ամուսինը, ծնողները (որդեգրողները) և խնամքի տակ գտնվողները, անկախ կտակի բովանդակությունից, ժառանգում են ժառանգության այն բաժնի առնվազն երկու երրորդը, որը նրանցից յուրաքանչյուրին կհասներ ըստ օրենքի ժառանգման դեպքում (պարտադիր բաժին): Պարտադիր բաժնի չափը որոշելիս հաշվի է առնվում նաև սովորական տնային կահավորանքի ու գործածության առարկաներից բաղկացած ժառանգական գույքի արժեքը:

**Հոդված**

## 539. Ժառանգի ենթանշանակումը

Կտակարարն իրավունք ունի կտակում մատնանշելու մեկ կամ մի քանի ժառանգներ այն դեպքերի համար, երբ նրա նշանակած ժառանգը մահանա մինչեւ ժառանգության բացումը կամ չընդունի ժառանգությունը:

## Հոդված 540. Գույքի չկտակված մասի ժառանգումը

Գույքի չկտակված մասը բաժանվում է ըստ օրենքի ժառանգների միջեւ, որոնք ժառանգման են հրավիրվում սույն օրենսգրքի 535 եւ 536 հոդվածների կարգով: Այդ ժառանգների թվին են պատկանում նաեւ ըստ օրենքի այն ժառանգները, որոնց կտակով թողնված է եղել գույքի մի մասը, եթե կտակում այլ բան չի նախատեսված:

## Հոդված 541. Հրիտակ

Կտակարարը իրավունք ունի ըստ կտակի ժառանգին հանձնարարելու որեւէ պարտավորության կատարում (հրիտակ) մեկ կամ մի քանի անձանց (հրիտակառուների) օգտին, որոնք իրավունք են ձեռք բերում պահանջելու այդ պարտավորության կատարումը: Հրիտակառուներ կարող են լինել ինչպես ըստ օրենքի ժառանգների թվին պատկանող, այնպես էլ նրանց թվին չպատկանող անձինք:

Այն ժառանգորդի վրա, որին անցնում է բնակելի տունը, կտակարարն իրավունք ունի պարտավորություն դնելու, որպեսզի նա մի այլ անձի ցմահ օգտագործմանը հանձնի այդ տունը կամ նրա որոշ մասը: Հետագայում տան կամ նրա մի մասի սեփականությունն ուրիշի անցնելու դեպքում ցմահ օգտագործման իրավունքը պահպանվում է:

Ժառանգը, որին կտակարարը հանձնարարել է հրիտակի կատարումը, այն պետք է կատարի իրեն անցած ժառանգական գույքի իսկական արժեքի սահմաններում միայն, դուրս եկած ժառանգատուի պարտքերի՝ իրեն հասնող բաժինը:

Եթե հրիտակի կատարումը հանձնարարվել է պարտադիր բաժնի իրավունք ունեցող ժառանգի (սույն օրենսգրքի 538 հոդված), ապա նա պարտավոր է հրիտակը կատարել միայն իրեն անցած այն ժառանգական գույքի մասում, որը գերազանցում է նրա պարտադիր բաժինը:

Եթե մինչեւ ժառանգության բացումը մահանա այն անձը, որին հանձնարարված է եղել հրիտակի կատարումը, կամ եթե նա չընդունի ժառանգությունը, ապա հրիտակի կատարման պարտավորությունն անցնում է նրա բաժինն ստացած մյուս ժառանգներին:

## Հոդված 542. Ժառանգին հանրօգուտ նպատակով գործողությունների կատարում հանձնարարելը

Կտակարարը կարող է ժառանգին հանձնարարել այնպիսի գործողության կատարում, որն ուղղված է որեւէ հանրօգուտ նպատակի իրականացմանը:

## Հոդված 543. Կտակի ձեւը

Կտակը պետք է կազմվի գրավոր, կազմելու վայրի ու պահի նշմամբ, ստորագրվի կտակարարի ձեռքով եւ վավերացվի նոտարական կարգով:

Այն բնակավայրում, որտեղ նոտարական գրասենյակ չկա, կտակը կարող է վավերացվել կտակարարի մշտական բնակավայրի պատգամավորների համապատասխան տեղական խորհրդի գործադիր կոմիտեն:

## Հոդված 544. Նոտարական կարգով հաստատված կտակներին հավասարեցվող կտակներ

Նոտարական կարգով հաստատված կտակներին հավասարեցվում են՝

1) հիվանդանոցներում, մյուս ստացիոնար բուժպրոֆիլակտիկ հիմնարկներում, առողջարաններում բուժման մեջ գտնվող կամ զառամյալների եւ հաշմանդամների տներում ապրող քաղաքացիների կտակները՝ հաստատված այդ հիվանդանոցների, բուժհիմնարկների, առողջարանների գլխավոր բժիշկների, բուժական մասի գծով նրանց տեղակալների կամ հերթապահ բժիշկների կողմից, ինչպես նաեւ զառամյալների եւ հաշմանդամների հիշյալ տների դիրեկտորների եւ գլխավոր բժիշկների կողմից.

2) նավարկման ժամանակ ԽՍՀՄ դրոշակով լողացող ծովային նավերում կամ ներքին նավարկման նավերում գտնվող քաղաքացիների կտակները՝ հաստատված այդ նավերի նավապետների կողմից.

3) հետախուզական, արկտիկական եւ նման այլ արշավախմբերում գտնվող քաղաքացիների կտակները՝ հաստատված այդ արշավախմբերի պետերի կողմից.

4) հոսպիտալներում, առողջարաններում եւ այլ զինվորական բուժհիմնարկներում

ԲՈՒԺՄԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՒ ՄՅՈՒՍ ԱՆՁԱՆՑ ԿՏԱԿՆԵՐԸ՝ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՅԴ ՀՈՍՊԻՏԱԼՆԵՐԻ, ԱՌՈՂՋԱՐԱՆՆԵՐԻ ԵՒ ԱՅԼ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՊԵՏԵՐԻ, ԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՍԻ ԳԾՈՎ ՆՐԱՆՑ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ, ԱՎԱԳ ԵՒ ՀԵՐԹԱՊԱՀ ԲԺԻՇԿՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ.

5) ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՏԱԿՆԵՐԸ, ԻՍԿ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ, ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՒ ՌԱԶՄԱՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՅՆ ԿԵՏԵՐՈՒՄ, ՈՐՏԵՂ ՉԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՆԵՐ ԵՒ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐ, ՆԱԵՒ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԵՒ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԵՒ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԿՏԱԿՆԵՐԸ՝ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՅԴ ԶՈՐԱՄԱՍԵՐԻ, ԶՈՐԱՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՆԵՐԻ (ՊԵՏԵՐԻ) ԿՈՂՄԻՑ.

6) ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՏԱԿՆԵՐԸ՝ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՊԵՏԵՐԻ ԿՈՂՄԻՑ:

***(26.11.75. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 545. ԿտաԿՆ ԱՅԼ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՍՏՈՐԱԳՐԵԼԸ

ԵթԵ ԿՏԱԿԱՐԱՐԸ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՐԱՏԻ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԱՅԼ ՊԱՏՃԱՌՈՎ Ի ՎԻՃԱԿԻ ՉԷ ԻՐ ՁԵՌՔՈՎ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԿՏԱԿԸ, ԱՊԱ ՆՐԱ ԽՆԴՐԱՆՔՈՎ ՆՈՏԱՐԻ ԿԱՄ ԱՅԼ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՄԲ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 544 ՀՈԴՎԱԾ) ԿՏԱԿԸ ԿԱՐՈՂ Է ՍՏՈՐԱԳՐԵԼ ՄԻ ԱՅԼ ՔԱՂԱՔԱՑԻ, ԸՆԴՍՄԻՆ ՊԵՏՔ Է ՆՇՎԵՆ ԱՅՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ԿՏԱԿԱՐԱՐՆ Ի ՎԻՃԱԿԻ ՉԻ ԵՂԵԼ ԻՐ ՁԵՌՔՈՎ ՍՏՈՐԱԳՐԵԼ ԿՏԱԿԸ:

### ՀՈԴՎԱԾ 546. ԿտԱԿԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԵՒ ՓՈՓՈԽՈՒՄԸ

ԿտաԿԱՐԱՐԸ ՈՒԶԱԾ ԺԱՄԱՆԱԿ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԻՐ ԿԱԶՄԱԾ ԿՏԱԿԸ, ԿԱԶՄԵԼՈՎ ՆՈՐ ԿՏԱԿ:

ԱՎԵԼԻ ՈՒՇ ԿԱԶՄԱԾ ԿՏԱԿԸ ՎԵՐԱՑՆՈՒՄ Է ՆԱԽՈՐԴ ԿՏԱԿԸ ԼՐԻՎ ԿԱՄ ՆՐԱ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԸ ՀԱԿԱՍՈՒՄ Է ՎԵՐՋԻՆ ԿՏԱԿԻՆ:

ԿտակԱՐԱՐԸ ԿԱՐՈՂ Է ԿՏԱԿԸ ՎԵՐԱՑՆԵԼ ՆԱԵՒ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ, ԻՍԿ ԱՅՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ, ՈՐՏԵՂ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՉԿԱ՝ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻՆ ԴԻՄՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ:

***(26.11.75. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 547. ԿտաԿԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ԿտԱԿԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՆՁՆԱՐԱՐՎՈՒՄ Է ԿՏԱԿՈՎ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ:

ԿտակԱՐԱՐԸ ԿԱՐՈՂ Է ԿՏԱԿԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼ ԺԱՌԱՆԳ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՁԻ, ՈՐԸ ՆՇՎԱԾ Է ԿՏԱԿՈՒՄ (ԿՏԱԿԱԿԱՏԱՐԻՆ): ԱՅԴ ԴԵՊՔՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ԿՏԱԿԱԿԱՏԱՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԸ ՆԱ ՀԱՅՏՆՈՒՄ Է ՀԵՆՑ ԿՏԱԿԻ ՎՐԱ ԱՐՎԱԾ ՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԿՏԱԿԻՆ ԿՑՎԱԾ ԴԻՄՈՒՄԻ ՄԵՋ:

### ՀՈԴՎԱԾ 548. ԿտակԱԿԱՏԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿտակԱԿԱՏԱՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՅՆ ԲՈԼՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՐՈՆՔ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԵՆ ԿՏԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ:

ԿտակակԱՏԱՐԸ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՍՏԱՆՈՒՄ ԿՏԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԻՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ԲԱՅՑ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԻՆ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՅՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՄԱՑ, ՈՐ ՆԱ ԿՐԵԼ Է ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԵՒ ԱՅԴ ԳՈՒՅՔԸ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

Կտակի ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԿՏԱԿԱԿԱՏԱՐԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՈՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՆՐԱՆՑ:

### ՀՈԴՎԱԾ 549. ԺառԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

ԺառանգուԹՅՈՒՆԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԺԱՌԱՆԳԸ ՊԵՏՔ Է ԸՆԴՈՒՆԻ ԱՅՆ: Չի ԹՈՒՅԼԱՏՐՎՈՒՄ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ՊԱՅՄԱՆՈՎ ԿԱՄ ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐՈՎ:

ԺառանգՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՌԱՆԳԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ, ԵՐԲ ՆԱ ՓԱՍՏՈՐԵՆ ՍԿՍՈՒՄ Է ՏԻՐԱՊԵՏԵԼ ԿԱՄ ԿԱՌԱՎԱՐԵԼ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ, ԿԱՄ ԵՐԲ ՆԱ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԱյՍ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՆՇՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐՎԵՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՎԵՑ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

ԱՅՆ ԱՆՁԻՆՔ, ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԾԱԳՈՒՄ Է ՄԻԱՅՆ ՈՒՐԻՇ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՉԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ, ԿԱՐՈՂ ԵՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԻՐԵՆՑ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԻ ՄՆԱՑԱԾ ՄԱՍԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ, ԻՍԿ ԵԹԵ ԱՅԴ ՄԱՍԸ ՊԱԿԱՍ Է ԵՐԵՔ ԱՄՍԻՑ, ԱՊԱ ԱՅՆ ԵՐԿԱՐԱՑՎՈՒՄ Է ՄԻՆՉԵՒ ԵՐԵՔ ԱՄԻՍ:

Ընդունված ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՌԱՆԳԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՊԱՀԻՑ:

### ՀՈԴՎԱԾ 550. ԺառանԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՑՈՒՄԸ

ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 549 ՀՈԴՎԱԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԿԱՐՈՂ Է ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԵՐԿԱՐԱՑՎԵԼ, ԵԹԵ ԴԱՏԱՐԱՆԸ ԳՏՆԻ, ՈՐ ԺԱՄԿԵՏԸ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀԱՐԳԵԼԻ ԵՆ: ԺառանԳՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԸՆԴՈՒՆՎԵԼ ՆՇՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԱՆՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՆԱԵՒ ԱՌԱՆՑ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄԵԼՈՒ, ԵԹԵ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԱԾ ՄՅՈՒՍ ԲՈԼՈՐ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՆ ԴՐԱՆ: ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵԹԵ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ Է ԵՂԵԼ ՄՅՈՒՍ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՄ ԱՆՑԵԼ Է ՊԵՏՈՒԹՅԱՆԸ, ՀԻՇՅԱԼ ԺԱՄԿԵՏԸ ԲԱՑ ԹՈՂԱԾ ԺԱՌԱՆԳԻՆ ՀԱՆՁՆՎՈՒՄ Է ՆՐԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՅՆ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐ ՊԱՀՊԱՆՎԵԼ Է ՆԱՏՈՒՐԱՅՈՎ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՆՐԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԳՈՒՅՔԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ:

***(26.11.75. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 551. ԺառանԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

ԵԹԵ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԿԱՄ ԸՍՏ ԿՏԱԿԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԺԱՌԱՆԳԸ, ՉՀԱՍՑՆԵԼՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՈՒՄ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 549 ՀՈԴՎԱԾ), ՄԱՀԱՑԵԼ Է ՆՐԱ ԲԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ, ԱՊԱ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՐԱ ԲԱԺՆԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՆՑՆՈՒՄ Է ՆՐԱ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ:

ՄԵՌԱԾ ԺԱՌԱՆԳԻ ԱՅԴ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՆՐԱ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՆԱՑԱԾ ԺԱՄԿԵՏԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ: Եթե ԺԱՄԿԵՏԻ ՄՆԱՑԱԾ ՄԱՍԸ ԵՐԵՔ ԱՄՍԻՑ ՊԱԿԱՍ Է, ԱՊԱ ԱՅՆ ԵՐԿԱՐԱՑՎՈՒՄ ԵՒ ՀԱՍՑՎՈՒՄ Է ԵՐԵՔ ԱՄՍԻ:

### ՀՈԴՎԱԾ 552. Այն ԺԱՌԱՆԳԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՈՐԸ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՏԻՐԱՊԵՏՈՒՄԸ ԿԱՄ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՍԿՍԵԼ Է ՄԻՆՉԵՒ ՄՅՈՒՍ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՏՆՎԵԼԸ

ԱՅՆ ԺԱՌԱՆԳԸ, ՈՐԸ, ՉՍՊԱՍԵԼՈՎ ՄՅՈՒՍ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՀԱՅՏՆՎԵԼՈՒՆ, ՍԿՍԵԼ Է ՏԻՐԱՊԵՏԵԼ ԿԱՄ ԿԱՌԱՎԱՐԵԼ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ, ՄԻՆՉԵՒ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՎԵՑ ԱՄԻՍ ԱՆՑՆԵԼԸ ԿԱՄ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐ ՍՏԱՆԱԼԸ, ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԱՅԴ ԳՈՒՅՔԸ (ՎԱՃԱՌԵԼՈՒ, ԳՐԱՎ ԴՆԵԼՈՒ ԵՒ ԱՅԼՆ):

Մինչև ՀԻՇՅԱԼ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼԸ ԿԱՄ ՄԻՆՉԵՒ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐ ՍՏԱՆԱԼԸ ԺԱՌԱՆԳՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԻՆ ԾԱԽՍԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԻԱՅՆ`

1) ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆՐԱ ԽՆԱՄՔԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ՆՐԱ ԹԱՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ԾԱԾԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

2) ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ԽՆԱՄՔԻ ՏԱԿ ԳՏՆՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

3) ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

4) ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ԵՒ ԿԱՌԱՎԱՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

***(26.11.75. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 553. ԺառանԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼԸ

ԸսՏ ՕՐԵՆՔԻ ԿԱՄ ԸՍՏ ԿՏԱԿԻ ԺԱՌԱՆԳԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՎԵՑ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ: ԸՆԴ ՈՐՈՒՄ ՆԱ ԿԱՐՈՂ Է ՆՇԵԼ, ՈՐ ԻՆՔԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ԸՍՏ ՕՐԵՆՔԻ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 535 ՀՈԴՎԱԾ) ԿԱՄ ԸՍՏ ԿՏԱԿԻ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 537 ՀՈԴՎԱԾ) ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ԹՎԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՅԼ ԱՆՁԱՆՑ ՕԳՏԻՆ, ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՊԵՏԱԿԱՆ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՌԱՆՁԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՕԳՏԻՆ:

Չի թույլատրվում ՀՐԱԺԱՐՎԵԼ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ, ԵԹԵ ԺԱՌԱՆԳԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԵԼ Է ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՄ ԴԻՄԵԼ Է ԻՐԵՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

ԺԱՌԱՆԳԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎՈՒՄ Է ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ԴԻՄՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ:

## ՀՈԴՎԱԾ 554. ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐՆ ԱՎԵԼԱՆԱԼԸ

Եթե ըստ օրենքի կամ ըստ կտակի ժառանգը չի ընդունել ժառանգությունը կամ երբ ժառանգը զրկվել է ժառանգման իրավունքից (սույն օրենսգրքի 534 և 537 հոդվածներ), ժառանգության նրա բաժինը անցնում է ըստ օրենքի ժառանգներին և հավասար բաժիններով բաշխվում է նրանց միջև:

ԵթԵ ԺԱՌԱՆԳԱՏՈՒՆ ԻՐ ԱՄԲՈՂՋ ԳՈՒՅՔԸ ԿՏԱԿԵԼ Է ԻՐ ՆՇԱՆԱԿԱԾ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ, ԱՊԱ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԺԱՌԱՆԳԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԸ ԱՆՑՆՈՒՄ Է ԸՍՏ ԿՏԱԿԻ ՄՅՈՒՍ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ ԵՒ ՀԱՎԱՍԱՐ ԲԱՇԽՎՈՒՄ Է ՆՐԱՆՑ ՄԻՋԵՒ:

ԱՅՍ ՀՈԴՎԱԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՉԵՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԱՅՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ԵՐԲ ԺԱՌԱՆԳԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՀՕԳՈՒՏ ՄԻ ԱՅԼ ԺԱՌԱՆԳԻ, ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՊԵՏԱԿԱՆ, ԿՈՈՊԵՐԱՏԻՎ ԿԱՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 553 ՀՈԴՎԱԾ), ԿԱՄ ԵՐԲ ԴՈՒՐՍ ԵԿԱԾ ԺԱՌԱՆԳԻ ՓՈԽԱՐԵՆ ԵՆԹԱՆՇԱՆԱԿՎԱԾ Է ԵՂԵԼ ԺԱՌԱՆԳ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 539 ՀՈԴՎԱԾ):

## ՀՈԴՎԱԾ 555. ԺառԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԱՆՑՆԵԼԸ

ԺառԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԵՏՈՒԹՅԱՆՆ Է ԱՆՑՆՈՒՄ՝

1) ԵԹԵ ԳՈՒՅՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆՆ Է ԿՏԱԿՎԵԼ.

2) ԵԹԵ ԺԱՌԱՆԳԱՏՈՒՆ ՉՈՒՆԻ ԺԱՌԱՆԳՆԵՐ ՈՉ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ, ՈՉ ԸՍՏ ԿՏԱԿԻ.

3) ԵԹԵ ԲՈԼՈՐ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ ՀՐԱԺԱՐՎԵԼ ԵՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ.

4) ԵԹԵ ԲՈԼՈՐ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ ԶՐԿՎԵԼ ԵՆ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 534 ԵՒ537 ՀՈԴՎԱԾՆԵՐ).

5) ԵԹԵ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՑ ՈՉ ՄԵԿԸ ՉԻ ԸՆԴՈՒՆԵԼ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ:

ԵԹԵ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՑ ՈՐԵՒԷ ՄԵԿԸ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՀՕԳՈՒՏ ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԱՊԱ ՊԵՏՈՒԹՅԱՆՆ Է ԱՆՑՆՈՒՄ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՅԴ ԺԱՌԱՆԳԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԲԱԺԻՆԸ:

ԵթԵ ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԿՏԱԿՎԵԼ Է ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ԳՈՒՅՔԻ ՄԻԱՅՆ ՄԻ ՄԱՍԸ, ԱՊԱ ՄՆԱՑԱԾ ՄԱՍՆ ԱՆՑՆՈՒՄ Է ՊԵՏՈՒԹՅԱՆԸ:

ԱՅՍ ՀՈԴՎԱԾՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԴԱԴԱՐՈՒՄ Է ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ, ԿԱՄ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ՝ ՀՐԱԺԱՐՎՈՂ ԺԱՌԱՆԳԻՆ ՊԱՏԿԱՆԱԾ ԲԱԺՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ:

## ՀՈԴՎԱԾ 556. ԺԱՌԱՆԳԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ՊԱՐՏՔԵՐԻ ՀԱՄԱՐ

ԺառԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԱԾ ԺԱՌԱՆԳԸ ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ՊԱՐՏՔԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ԻՐԵՆ ԱՆՑԱԾ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ: ՆուՅՆ ՀԻՄՔԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Է ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐԻՆ ԱՆՑԵԼ Է ԳՈՒՅՔԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 555 ՀՈԴՎԱԾԻ ԿԱՐԳՈՎ:

## ՀՈԴՎԱԾ 557. ՊարտԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԺառԱՆԳԱՏՈՒԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՎԵՑ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԵՆՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԱԾ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ ԿԱՄ ԿՏԱԿԱԿԱՏԱՐԻՆ ԿԱՄ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ, ԿԱՄ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ:

ՊահԱՆՋՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ ԵՆ ԱՆԿԱԽ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒՑ:

ԱՅՍ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՉՊԱՀՊԱՆԵԼԸ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻՆ ԶՐԿՈՒՄ Է ՆՐԱՆՑ ՊԱՏԿԱՆՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ:

## ՀՈԴՎԱԾ 558. ԺառԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԺառԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ, ԻՍԿ ԱՅՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ, ՈՒՐ ՉԿԱ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ՝ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆ, ՄԻՋՈՑՆԵՐ Է ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ, ԵՐԲ ՆԱ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՊԵՏՈՒԹՅԱՆ, ԺԱՌԱՆԳՆԵՐԻ, ՀՐԻՏԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԿԱՄ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՀԱՄԱՐ:

ԺառԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ՄԻՆՉԵՒ ԲՈԼՈՐ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ, ԻՍԿ ԵԹԵ ԱՅՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՎԵԼ՝ ՄԻՆՉԵՒ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼԸ:

**ՀՈԴՎԱԾ 559.** **ԺառԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՊԱՀԱՊԱՆ ԿԱՄ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼԸ**

ԺառԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ԳՈՒՅՔԻ (ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ԵՒ ԱՅԼՆ) ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՄԻՆՉԵՒ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ՊԱՐՏԱՏԵՐԵՐԸ ՀԱՅՑ ԵՆ ՀԱՐՈՒՑԵԼ, ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԳՈՒՅՔԻ ՊԱՀԱՊԱՆ, ԻՍԿ ԱՅՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ, ՈՒՐ ՉԿԱ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ՝ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՆ ԽՆԱՄԱԿԱԼ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՀԻՇՅԱԼ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ:

**ՀՈԴՎԱԾ 560.** **ԺառԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐ ՏԱԼԸ**

ԺառԱՆԳՄԱՆ ՀՐԱՎԻՐՎԱԾ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՎԱՅՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ ԽՆԴՐԵԼ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԻՐԵՆՑ:

Նույն ԿԱՐԳՈՎ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐ Է ՏՐՎՈՒՄ ՆԱԵՒ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ԱՆՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ (ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 555 ՀՈԴՎԱԾ):

**ՀՈԴՎԱԾ 561.** **ԺառԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ**

ԺառԱՆԳՆԵՐԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐ ՏՐՎՈՒՄ Է ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՎԵՑ ԱՄԻՍ ՀԵՏՈ:

Ինչպես ԸՍՏ ՕՐԵՆՔԻ, ԱՅՆՊԵՍ ԷԼ ԸՍՏ ԿՏԱԿԻ ԺԱՌԱՆԳՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՎԿԱՅԱԳԻՐ ԿԱՐՈՂ Է ՏՐՎԵԼ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՎԵՑ ԱՄԻՍ ԱՆՑՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ, ԵԹԵ ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿՈՒՄ ՏՎՅԱԼՆԵՐ ԿԱՆ, ՈՐ ԲԱՑԻ ՎԿԱՅԱԳԻՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՂ ԱՆՁԵՐԻՑ ՈՒՐԻՇ ԺԱՌԱՆԳՆԵՐ ՉԿԱՆ:

ԺառանԳՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳԻՐԸ ԲՈԼՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՏՐՎՈՒՄ Է ՈՉ ՇՈՒՏ, ՔԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ՕՐՎԱՆԻՑ ՎԵՑ ԱՄԻՍ ՀԵՏՈ:

**ՀՈԴՎԱԾ 562.** **ԺառանԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ**

ԺառանԳՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆԱԾ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ՆՐԱՆՑ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ: ՀամաՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՉԿԱՅԱՑՎԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԿԱՏԱՐՎՈՒՄ Է ԴԱՏԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ:

ՍաղՄՆԱՎՈՐՎԱԾ, ԲԱՅՑ ԴԵՌ ՉԾՆԱԾ ԺԱՌԱՆԳԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԺԱՌԱՆԳՆԵՐԸ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ԲԱԺԱՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՐԱ ՀԱՍԱՆԵԼԻՔ ՄԱՍԸ ՆՐԱՆ ԲԱԺԻՆ ՀԱՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՈՎ ՄԻԱՅՆ: Չծնված ԺԱՌԱՆԳԻ ՇԱՀԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ԲԱԺԱՆՄԱՆԸ ՄԱՍՆԱԿԻՑ ԴԱՐՁՎԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ:

**ՀՈԴՎԱԾ 563.** **ԺառանԳՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԾԽՈՒՄ**

ԿոլտնՏԵՍԱՅԻՆ (ՄԵՆԱՏՆՏԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ) ԾԽԻ ԱՆԴԱՄԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԾԽԻ ԳՈՒՅՔԻ ՄԵՋ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԲԱՑՎՈՒՄ:

Եթե ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ (ՄԵՆԱՏՆՏԵՍ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ) ԾԽԻ ԱՆԴԱՄԻ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ ԾԽԻ ՈՒՐԻՇ ԱՆԴԱՄՆԵՐ ՉՄՆԱՆ, ԾԽԻ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՍՈՒՅՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ:

**ՀՈԴՎԱԾ 564.** **ԱվանդԱՏՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ԱՎԱՆԴԻ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ ԻՐ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ**

ՊետակԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԵՐՈՒՄ ԿԱՄ ԽՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ԱՎԱՆԴՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ ԿԱՄ ԲԱՆԿԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՆԵԼՈՒ ԻՐԵՆՑ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՎԱՆԴԸ ԻՐԵՆՑ ՈՒԶԱԾ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿԱՄ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

Այդ ԴԵՊՔՈՒՄ ԱՎԱՆԴԸ ՉԻ ՄՏՆՈՒՄ ԺԱՌԱՆԳԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱԶՄԻ ՄԵՋ ԵՒ ՆՐԱ ՎՐԱ ՉԵՆ ՏԱՐԱԾՎՈՒՄ ՍՈՒՅՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ:

ՊետակԱՆ ԱՇԽԱՏԱՎՈՐԱԿԱՆ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԵՐՈՒՄ ԵՒ ԽՍՀՄ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԿՈՒՄ ԵՂԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԸ ԱՎԱՆԴԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՏՈՒԿ ՑՈՒՑՈՒՄՆԵՐՈՎ ՏՆՕՐԻՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ՝ ՆՐԱՆՑ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ, ՈՐՈՇՎՈՒՄ Է ՀԻՇՅԱԼ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԵՒ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԿԱՆՈՆՆԵՐՈՎ:

Եթե ԱՎԱՆԴԱՏՈՒՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԱՐԵԼ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿՂԻՆ ԿԱՄ ԲԱՆԿԻՆ, ԱՊԱ ԱՎԱՆԴԱՏՈՒԻ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔՈՒՄ ՆՐԱ ԱՎԱՆԴԸ ԺԱՌԱՆԳՆԵՐԻՆ Է ԱՆՑՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՔԵՐՈՎ՝ ԸՍՏ ՍՈՒՅՆ ՀԱՏՎԱԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ:

## ՀԱՏՎԱԾ YIII. ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

### ՀՈԴՎԱԾ 565. ՕտԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՕտԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՎԱՅԵԼՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐ: ԱռաՆՁԻՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՍԱՀՄԱՆՎԵԼ ԽՍՀ ՄիՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ:

ԽՍՀ ՄիՈՒԹՅԱՆ ԵՒ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ 122 ՀՈԴՎԱԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԽՍՀ ՄիուԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՐՈՂ ԵՆ ՍԱՀՄԱՆՎԵԼ ՊԱՏԱՍԽԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ԱՅՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ, ՈՐՏԵՂ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ:

### ՀՈԴՎԱԾ 566. ՔաղԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՔաղԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ Հայաստանի Հանրապետությունում ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՕԳՏՎՈՒՄ ԵՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՀԱՎԱՍԱՐ: ԱռանձԻՆ ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՍԱՀՄԱՆՎԵԼ ԽՍՀ ՄիՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՎ:

***(23.08.77. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 566.1 ՕտարԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՔԸ

Օտարերկրյա ՔԱՂԱՔԱՑՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԱՅՆ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔՈՎ, ՈՐԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ Է ՆԱ:

ՔաղԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԱՅՆ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔՈՎ, ՈՐՏԵՂ ՆԱ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ ՈՒՆԻ:

ՀայաՍՏԱՆԻ ՀանՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԵՒ Հայաստանի Հանրապետությունում ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՕՐԵՆՔՈՎ:

Հայաստանի ՀանրաՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄՇՏԱՊԵՍ ԲՆԱԿՎՈՂ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԵՒ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ԿԱՄ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԳՈՐԾՈՒՆԱԿ ՃԱՆԱՉՎԵԼ ԽՍՀ ՄիՈՒԹՅԱՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ:

***(23.08.77. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 567. ՕտարԵՐԿՐՅԱ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՕտարԵՐԿՐՅԱ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՑ ՀԱՏՈՒԿ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ Հայաստանի ՀանրաՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՒՏՐԻ ՈՒ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄՅՈՒՍ ԱՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ, ՈՐՈՆՑ ԱՅԴՊԻՍԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ Է ՎԵՐԱՊԱՀՎԱԾ:

ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՒՏՐԻ ՈՒ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ ԿՆՔԵԼԻՍ ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԱՅՆ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔՈՎ, ՈՐՏԵՂ ՀԻՄՆԱԴՐՎԵԼ Է ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ:

***(23.08.77. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

### ՀՈԴՎԱԾ 568. ԳործԱՐՔԻ ՁԵՒԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՔԸ

ԱրտԱՍԱՀՄԱՆՈՒՄ ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔԻ ՁԵՒԸ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ Է ՆՐԱ ԿՆՔՄԱՆ ՎԱՅՐԻ ՕՐԵՆՔԻՆ: ՍակԱՅՆ ԳՈՐԾԱՐՔԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉՎԵԼ ՁԵՒԸ ՉՊԱՀՊԱՆՎԵԼՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ, ԵԹԵ ՊԱՀՊԱՆՎԵԼ ԵՆ ԽՍՀ ՄիՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՒ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ:

ԽորՀՐԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎՈՂ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՁԵՒԸ ԵՒ ՆՐԱՆՑ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ, ԱՆԿԱԽ ԱՅԴ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՎԱՅՐԻՑ, ՈՐՈՇՎՈՒՄ ԵՆ ԽՍՀ ՄիՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:

Հայաստանի Հանրապետությունում ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԿՆՔՎՈՂ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՁԵՎԸ ԵՆԹԱՐԿՎՈՒՄ Է ԽՍՀ Միության ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ:

**ՀՈԴՎԱԾ 569. ԱրտԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐՈՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՔԸ**

ԱրՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ԳՈՐԾԱՐՔՈՎ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՈՇՎՈՒՄ ԵՆ ՆՐԱ ԿՆՔՄԱՆ ՎԱՅՐԻ ՕՐԵՆՔՆԵՐՈՎ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԵԼ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ:

ԱրտԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՈՎ ԻՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ՈՐՈՇՎՈՒՄ ԵՆ ԱՅՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՕՐԵՆՔՈՎ, ԵԹԵ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԵԼ:

ԱրտաՔԻՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԳՏՆՎՈՂ ԻՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԱՅՆ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔՈՎ, ՈՐՏԵՂԻՑ ԱՅԴ ԻՐՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է, ԵԹԵ ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՍԱՀՄԱՆՎԵԼ:

Գործարքի ԿՆՔՄԱՆ ՎԱՅՐԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՕՐԵՆՔՈՎ:

***(23.08.77. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 569.1 ԼիաԶՈՐԱԳՐԻ ՁԵՎԻ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՔԸ**

ԼիաԶՈՐԱԳՐԻ ՁԵՎՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ՈՐՈՇՎՈՒՄ ԵՆ ԱՅՆ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔՈՎ, ՈՐՏԵՂ ՏՐՎԵԼ Է ԼԻԱԶՈՐԱԳԻՐԸ: ՍԱԿԱՅՆ ԼԻԱԶՈՐԱԳԻՐԸ ՉԻ ԿԱՐՈՂ ԱՆՎԱՎԵՐ ՀԱՄԱՐՎԵԼ ՁԵՎԸ ՉՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ, ԵԹԵ ՎԵՐՋԻՆՍ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ Է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ:

***(23.08.77. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 569.2 ՀայցԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՔԸ**

ՀայցԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԱՅՆ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔՈՎ, ՈՐԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱՌՎՈՒՄ Է ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԱՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ՀԱՅՑԱՅԻՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՏԱՐԱԾՎՈՒՄ, ՈՐՈՇՎՈՒՄ ԵՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:

***(23.08.77. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 569.3 ՍեփաԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՔԸ**

ԻՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԱՅՆ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔՈՎ, ՈՐՏԵՂ ԳՏՆՎՈՒՄ Է ԱՅԴ ԻՐԸ:

ԻՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ՈՐՈՇՎՈՒՄ ԵՆ ԱՅՆ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔՈՎ, ՈՐՏԵՂ ԱՅԴ ԻՐԸ ԳՏՆՎԵԼ Է ԱՅՆ ՊԱՀԻՆ, ԵՐԲ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՄԱՆ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ԾԱՌԱՅՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ, ԵԹԵ ԱՅԼ ԲԱՆ ՉԻ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԽՍՀ Միության ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ:

***(23.08.77. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 569.4 ՎնաՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՔԸ**

ԿողՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՅՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ, ՈՐՈՆՔ ԱՌԱՋԱՑԵԼ ԵՆ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ, ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ԱՅՆ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔՈՎ, ՈՐՏԵՂ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ԾԱՌԱՅՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ:

ԱրտաՍԱՀՄԱՆՈՒՄ ՎՆԱՍ ՊԱՏՃԱՌԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԵԹԵ ԿՈՂՄԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԵՆ ԿԱՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍԱՀՄԱՆՎՈՒՄ ԵՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՕՐԵՆՔՈՎ:

ՕտաՐԵՐԿՐՅԱ ՕՐԵՆՔԸ ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ, ԵԹԵ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ԾԱՌԱՅՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՀԱԿԱԻՐԱՎԱԿԱՆ ՉԷ:

***(23.08.77. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***

**ՀՈԴՎԱԾ 570. ԺառաՆԳՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՕՐԵՆՔԸ**

ԺառաՆԳՄԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՈՇՎՈՒՄ ԵՆ ԱՅՆ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔՈՎ, ՈՐՏԵՂ ԺԱՌԱՆԳԱՏՈՒԻ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԵՐՋԻՆ ՎԱՅՐՆ Է ԵՂԵԼ:

ԱՆձԻ՝ ԿՏԱԿ ԿԱԶՄԵԼՈՒ ԵՒ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԿՏԱԿԻ ՈՒ ՆՐԱ ՎԵՐԱՑՄԱՆ ԱԿՏԻ ՁԵՒԸ ՈՐՈՇՎՈՒՄ ԵՆ ԱՅՆ ԵՐԿՐԻ ՕՐԵՆՔՈՎ, ՈՐՏԵՂ ԱԿՏԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՊԱՀԻՆ ԵՂԵԼ Է ԿՏԱԿԱՐԱՐԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՎԱՅՐԸ: ՍակաՅՆ ԿՏԱԿԸ ԿԱՄ ՆՐԱ ՎԵՐԱՑՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՉԵՆ ԿԱՐՈՂ ՃԱՆԱՉՎԵԼ ՁԵՒԸ ՉՊԱՀՊԱՆՎԵԼՈՒ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ, ԵԹԵ ՎԵՐՋԻՆՍ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ Է ԱԿՏԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԿԱՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ:

ԽՍՀ ՄիուԹՅՈՒՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՌԱՆԳՈՒՄԸ ԲՈԼՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՈՐՈՇՎՈՒՄ Է ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՕՐԵՆՔՈՎ: ՆուՅՆ ՕՐԵՆՔՈՎ ԵՆ ՈՐՈՇՎՈՒՄ ՆԱԵՒ ԱՆՁԻ՝ ԿՏԱԿ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՄ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՒ ԿՏԱԿԻ ՁԵՒԸ, ԵԹԵ ԿՏԱԿՎՈՒՄ Է ԽՍՀ ՄիուԹՅՈՒՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ:

**ՀՈԴՎԱԾ 571.** **ՕտարԵՐԿՐՅԱ ՕՐԵՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ**

ՕտԱՐԵՐԿՐՅԱ ՕՐԵՆՔԸ ՉԻ ԿԻՐԱՌՎՈՒՄ, ԵԹԵ ՆՐԱ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿՀԱԿԱՍԵՐ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐԻ ՀԻՄՔԵՐԻՆ:

**ՀՈԴՎԱԾ 572.** **ՄիջաԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ**

ԵթԵ ԽՍՀՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՆ ԱՅԼ ԿԱՆՈՆՆԵՐ, ՔԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱԾ ԿԱՆՈՆՆԵՐԸ, ԱՊԱ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ:

ՆույնՊԻՍԻ ԿԱՐԳ Է ԿԻՐԱՌՎՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ, ԵԹԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՆ ԱՅԼ ԿԱՆՈՆՆԵՐ, ՔԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԿԱՆՈՆՆԵՐԸ:

***(28.07.82. ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)***